



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



ԵՊԷ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
YSU PRESS

UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN  
INSTITUT DES ÉTUDES ARMÉNOLOGIQUES

**MARIE-ANNA CHEVALIER**

**SUR L'HISTOIRE DES RELATIONS  
DE L'ARMÉNIE CILICIENNE AVEC  
LES ORDRES RELIGIEUX-MILITAIRES**

**Deuxième édition**

*Sous la direction des professeurs  
Gérard Dédéyan et  
Babken Haroutiounyan*

*Traduit du français par  
Varoujean Poghosyan*

EREVAN  
ÉDITIONS DE L'UNIVERSITÉ D'ÉTAT D'EREVAN  
2013

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻ-ԱՆՆԱ ՇԵՎԱԼԻԵ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ  
ՀՈԳԵՎՈՐԱՍՊԵՏԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Երկրորդ հրատարակություն

*Պրոֆեսորներ Ժիրայր Դեդեյանի և  
Բաբկեն Հարությունյանի խմբագրությամբ*

*Ֆրանսերենից թարգմանեց  
Վարուժան Պողոսյանը*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)  
Շ 500

### **Շեալիե Մարի-Աննա**

Շ 500 Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից / Մարի-Աննա Շեալիե; Թարգմ. Ֆրանս.՝ Վարուժան Պողոսյանի: Առաջաբանը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Բաբկեն Հարությունյանի.- 2-րդ հրատ., Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 116 էջ + 12 էջ ներդիր:

Ժողովածուն ընդգրկում է ֆրանսիացի պատմաբան, Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարանի դասախոս, Մերձավոր Արևելքի երկրների միջնադարյան պատմության մասնագետ Մարի-Աննա Շեալիեի չորս հոդված, որոնցից երեքը նվիրված են Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությանը, իսկ մեկը՝ դրանց ընկալմանն Արևելքի քրիստոնյաների (հայերի և ասորիների) կողմից: Հեղինակի որոշ դրույթներ, անտարակույս, առարկելի են: Այդուհանդերձ, հաշվի առնելով հոդվածներում պարունակված փաստագրական հարուստ նյութի կարևորությունը՝ նպատակահարմար ենք գտնում դրանք ներկայացնել հայրենական պատմաբաններին:

*Կազմի առաջին երեսին՝ Սելևկիա բերդամրոցի նկարն է, երկրորդ երեսին՝ Պաղրաս բերդամրոցի:*

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1736-6

© ԵՊՀ Հրատարակչություն, 2013  
© Մ.-Ա. Շեալիե, 2013

## ԱՌԱՋԱԲԱՆ

Արևմտյան Եվրոպայում Ֆրանսիան, ինչպես նաև Գերմանիան, եղել են հայագիտության առավել կարևոր օջախները: Սակայն, եթե Գերմանիայում, մասնավորապես երկրորդ աշխարհամարտից հետո հայագիտությունը խոր անկում ապրեց, որը, ցավոք, շարունակվում է մինչ օրս, ապա Ֆրանսիայում հայագիտության լավագույն ավանդույթները շարունակում են հարատևել: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ շնորհիվ մեր հայրենակից՝ Սոնպելիեի Պոլ Վալերի համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Ժիրայր (Ժերար) Դեդեյանի ջանքերի՝ Սոնպելիեում ծնունդ է առել հայագիտական նոր օջախ, որի կրողները հիմնականում ազգությամբ ֆրանսիացիներ են և ներկայացնում են հայագետների նոր սերունդը:

Հաճելի է, որ այսօր Ժ. Դեդեյանի սան, ներկայումս Սոնպելիեի Պոլ Վալերիի համալսարանի դասախոս, Սարի-Աննա Շևալիեն հայ ընթերցողի դատին է ներկայացնում չորս հոդված ընդգրկող իր ժողովածուն՝ նվիրված Կիլիկիայի հայկական թագավորության և խաչակիր հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմության քննությանը: Առաջին՝ «Կիլիկիայում տաճարականների ներկայության որոշ հարցերի շուրջ» հոդվածում, Մ.-Ա. Շևալիեն կանգ է առնում առավելապես Կիլիկիայի հայկական թագավորությունում տաճարականների միաբանության գործունեության և հայոց արքունիքի հետ դրա փոխհարաբերությունների պատմության վրա: Հայագիտության համար իր փաստական հարուստ նյութով, որը նշանակալից չափով գիտական շրջանառության մեջ դրվում է առաջին անգամ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի երկրորդ՝ «Լևոն Մեծագործի գերմանական ռազմավարությունը. տևողականների Կիլիկիայում հաստատվելու պարագան» հոդվածը: Հարկ է դրվատանքի խոսքեր ուղղել նաև Մ.-Ա. Շևալիեի «Հոգևորասպետական միաբանությունների ընկալումն Արևելքի քրիստոնյաների (հայերի և ասորիների) կողմից (XII դարի սկզբից մինչև XIV դարի սկիզբը)» հոդվածին, որի խորագրից արդեն պարզվում

է, որ քննությունն առնչվում է Արևելք եկած հոգևորասպետական միաբանությունների և, ընդհանրապես, խաչակիրների նկատմամբ հայերի և ասորիների վերաբերմունքին: Ժողովածուն ավարտվում է «Ասպետական միաբանությունները և միջերկրածովյան Կիլիկիան (XII դարի կեսից մինչև XIV դարի վերջը)» հոդվածով, որը որոշակիորեն հավաստում է հեղինակի գիտական աճի մասին:

Ինչ կարելի է ասել երիտասարդ ուսումնասիրողի և նրա նշված աշխատությունների մասին: Մ.-Ա. Շևալիեն իր որակավորումը մի քանի անգամ բարձրացրել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնում՝ կատարելագործելով իր գիտելիքները հայոց լեզվի, գրաբարի և հայոց պատմության ասպարեզներում: Նախ և առաջ շնորհիվ հայերենի իր քաջ իմացության՝ Մ.-Ա. Շևալիեն խորապես տիրապետում է հայկական սկզբնաղբյուրներին՝ հայ պատմիչների երկերին, հիշատակարանային նյութին: Մեզ համար հատկապես կարևոր է այն իրողությունը, որ ֆրանսիացի հայագետը լայնորեն օգտագործում է արևմտաեվրոպական հեղինակների աշխատությունները, բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներ, որոնք նշանակալից չափով նորություն են հայաստանյան գիտական շրջանների համար:

Հարկ է խոստովանել, որ հեղինակը հանդես է բերել գիտական հարցերը բարձրացնելու և հավուր պատշաճի քննելու մեծ հմտություն, նոր խոսք ասելու անվիճարկելի կարողություն, ինչպես նաև արդեն բազմիցս ծեծկրտված հարցերի նկատմամբ ցուցաբերել է նորովի մոտեցումներ:

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե նշված ժողովածուն զերծ է ամեն տեսակի թերություններից և սխալ մեկնաբանություններից, որոնցից մի քանիսի վրա կամենում ենք հրավիրել թե՛ ընթերցողի և թե՛ հեղինակի ուշադրությունը: Անտարակույս, խաչակրաց արշավանքները մեծապես նպաստել են Կիլիկիայի Ռուբինյան իշխանության պետության կայացմանն ու հզորացմանը, սակայն, հայկական սկզբնաղբյուրներում խաչակիրների գործունեության մասին տեղ գտած բացասական գնահատականները բոլորովին անհիմն չեն: Մի կողմից՝ կարծես թե խաչակիրները եկել են Մերձավոր Արևելք՝ ազատագրելու համար Տիրոջ գերեզմանը, մյուս կողմից՝ խաչակիր տարբեր իշխանները ոչ միայն պատրաստ են պայքարելու միմյանց դեմ, այլև ոչնչացնելու իրենց, ըստ ամենայնի, օգնած հայկական իշխանությունները: Հետևաբար, միշտ չէ, որ խաչակիրների գործունեությունը Կիլիկյան Հայաստանում նպատակ է հետապնդել օգնելու հայոց գահակալներին:

Հեղինակն իրավացի է, որ հայոց Լևոն Ա Մեծագործ թագավորն

առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել գերմանական տևտոնական միաբանության նկատմամբ: Սակայն, այն բնավ էլ սուբյեկտիվ մոտեցման արդյունք չի եղել: Լինելով հոգևորասպետական միաբանությունների մեջ առավել թույլը և ինչ-որ տեղ նեղվելով մյուս միաբանություններից՝ տևտոնականները կարիք են զգացել հայոց գահակալների օժանդակությանը և ստանալով հայոց թագավորներից բազմաթիվ տիրույթներ, նրանք հանուն իրենց իսկ շահերի, հավատարմորեն ծառայել են հայոց թագավորությանը:

Ինչ վերաբերում է հայոց երկու գահակալի և, մասնավորապես Լևոն Ա Մեծագործի տևտոնական միաբանության անդամ դառնալուն, ապա դա բնավ էլ երախտագիտության արտահայտություն չէ, որքան քաղաքական լուրջ հաշվարկ՝ առավել մերձեցնելու Կիլիկիայի հայոց թագավորության և Գերմանական ազգի Զոռնեական սրբազան կայսրության միջև կապերը:

Չկամենալով այլևս մտնել գիտական մանրամասների մեջ, անդրադառնանք ևս մեկ խնդրի՝ XII-XIV դդ. խաչակիրների և խաչակիր միաբանությունների նկատմամբ հայերի և ասորիների վերաբերմունքին, որը բավական մանրակրկիտ ուսումնասիրել է հեղինակը: Կարելի է ասել, որ ինչ-որ տեղ Մ.-Ա. Շևալիեին զարմացնում է այն իրողությունը, որ ասորական հեղինակներն, ընդհանուր առմամբ, դրական վերաբերմունք ունեն խաչակիրների նկատմամբ, ինչը չի կարելի ասել հայկական սկզբնաղբյուրների մասին, որտեղ դրական մոտեցումներին ուղեկցում են բավական խիստ արտահայտված քննադատական նոտաները: Իրականությունն այն է, որ քաղաքական իշխանությունից գործնականում զուրկ ասորիները, որ ժամանակի ընթացքում վեր էին ածվել հոգևոր ընդհանրության և քաղաքական առումով ոչինչ չունեին կորցնելու՝ դրական էին վերաբերվում Լևանտի երկրներ եկած խաչակիրներին: Սակայն, վիճակը բոլորովին այլ է հայերի առնչությամբ: Հայկական սկզբնաղբյուրները ողջունել են խաչակիրների Արևելք գալը և Տիրոջ գերեզմանն ազատելու համար անհավատների դեմ պայքար մղելը, սակայն, չէին կարող քննադատության բուռն խոսքեր չուղղել խաչակիրներին, որոնք ոչնչացրեցին Ուռհայի (Եդեսիայի) Գող Վասիլի հաջորդներին և մի քանի այլ իշխանություններ:

Վերջապես, չպետք է մոռանալ, որ հայ-խաչակրաց ռազմաքաղաքական համագործակցությունը եղել է երկկողմանի շահավետ: Պատահական չէ, որ երբ մահմեդականների հարվածների ներքո ընկան ոչ միայն Երուսաղեմի թագավորությունը, այլև մյուս խաչակրաց իշխանությունները՝ խաչակիր փախստականների համար ապաստան



դարձավ Կիլիկիայի հայոց թագավորությունը: Ավելին՝ Յոննի պապը և արևմտաեվրոպական պետությունները Կիլիկիան համարում էին նոր խաչակրության ամենահիմնական մասնակիցներից մեկը:

Մ.-Ա. Շևալիեի հողվածների հայերեն թարգմանությունը հայ ընթերցողին ներկայացնելը կարևոր և շնորհակալ գործ է, որը բարձր մակարդակով և գիտական մեծ պատասխանատվությամբ իրականացրել է պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանը:

Շնորհակալական խոսք ենք ցանկանում ուղղել Երևանի պետական համալսարանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության աշխատանոցի քարտեզագիր Վարդան Մխիթարյանին՝ առաջին հողվածին հավելված՝ «Ասպետական միաբանությունների բերդամրոցները Կիլիկիայում» քարտեզը պատրաստելու համար, ինչպես նաև Կլոդ Կոլենին՝ կիլիկյան բերդամրոցների որոշ լուսանկարներ մեզ տրամադրելու համար:

Իհարկե, ամենախորին շնորհակալությունն ենք հայտնում հայագիտության անդաստան մտած երիտասարդ պատմաբան Սարի-Աննա Շևալիեին, որն իրեն նվիրել է Ֆրանսիայում հայագիտության զարգացմանը և, մասնավորապես Կիլիկիայում՝ Հայաստան-Արևմտյան Եվրոպա փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությանը:

*Բ. Հարությունյան*  
*ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ*

## ԳԼՈՒԽ I

### ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՏԱՃԱՐԱՎԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Անտիոքի իշխանության հարևանությամբ գտնվող Կիլիկիայի հայկական պետությունը, Արևելքի լատինական պետությունների հետ մեկտեղ, հետամուտ էր, ի դեպ, «Սրբազան պատերազմի» գաղափարին<sup>1</sup>: Այս և անվտանգության ու ներքին քաղաքականության շարժառիթների հիման վրա են ասպետական միաբանությունները հաստատվել Կիլիկիայում: Գլխավորապես երկրի հարավ-արևելքում գտնվող տաճարականների բերդամրոցներն Ամանոսում ձևավորում էին սահմանամերձ մարզ: Լեռնային այս զանգվածը սահմանազատում էր Փոքր Ասիան և Ասորիքը, ինչպես նաև Կիլիկիան ու Անտիոքի իշխանությունը:

Ռ. Ու. Էդուարդսի աշխատություններն անհրաժեշտ են այս բերդամրոցների ճարտարապետությանն ու տեղադրությանն իրազեկ լինելու համար<sup>2</sup>: Ըստ տաճարականների ներքին կարգավորության՝ միաբանության՝ Կիլիկիայում գտնվող ասպետները կախման մեջ էին Անտիոքի կոմանդորից և միայն 1268 թ., այս քաղաքի անկումից հետո է Լա Ռոշ Գիյոն բերդամրոցը վերածվել կիլիկյան կոմանդորի նստավայրի<sup>3</sup>: Տաճարականներին, ինչպես նաև հիվանդախնամներին ըստ արժանվույն զնահատել են, մասնավորապես ասորի և հայ հեղինակները: Հակոբիկյան նշանավոր պատրիարք Միխայել Ասորին իր աշխատության մեջ ասպետական այս միաբանություններին է ձոնել մի հիասքանչ ներբող<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **G. Dédéyan**, *Idéologie de croisade et idéologie chevaleresque chez les Arméniens de Cilicie.– Les Armes et la Toge. Mélanges offerts à André Martel. Sous la direction de J.-Ch. Jauffret*, Montpellier, 1997, p. 55, 59-60:

<sup>2</sup> **R. W. Edwards**, *The Fortifications of Armenian Cilicia*, Washington, 1987, p. 31-32, 65-72, 99-103, 142-148, 215-229, 252-253.

<sup>3</sup> **T. S. R. Boase**, *The Cilician Kingdom of Armenia*, Edimbourg & London, 1978, p. 92-117; **L. Dailliez**, *Règle et statuts de l'Ordre du Temple*, Paris, 2<sup>ème</sup> édition, 1996, p. 70 (տե՛ս նաև 126-րդ հոդվածը՝ էջ 139).

<sup>4</sup> *Chronique de Michel le Syrien, patriarche des jacobites.– Recueil des historiens des croisades. Documents arméniens*, t. I, Paris, 1859, p. 331-333 (այսուհետև՝ *RHC, DA*); *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199)*, éd. et trad. *J.-B. Chabot*, t. III, Bruxelles, 1963, p. 201-203.

Տաճարականների ներկայությունը Կիլիկիայում առնչվում է բազմապիսի բնագավառների, հանգամանք, ինչը հնարավորություն չի ընձեռում այն այստեղ ուսումնասիրել իր ամբողջության մեջ: Ահա թե ինչու՝ քննության ենք առնում դրա որոշ հատկանշական կողմեր:

Մենք կջանանք համառոտակի ներկայացնել Կիլիկիայում տաճարականների ներկայության ընդհանուր պատկերը, այնուհետև կքննարկենք մի քանի խնդիրներ, ինչպիսիք են նրանց հաստատումը Պաղրաս բերդամրոցում, հայոց գահակալների՝ ասպետական միաբանություններին շնորհած նվիրատվությունները և խաչակրաց արշավանքի՝ Կիլիկիայով անցում նախատեսող նախագծի մերժումը տաճարականների մագիստրոս ժակ դը Մուլե կողմից:

#### *Ա – Չակասական ներկայություն*

Կիլիկիայի հայկական պետությունն իր ամբողջ պատմության ընթացքում տաճարական միաբանության հետ պահպանել է փոփոխական փոխհարաբերություններ: XII դարի երկրորդ կեսին Կիլիկիայի իշխանությունը պատրաստ չէր ընթանել իր երկրի հարևանությամբ տաճարականների հաստատած սահմանամերձ մարզի օգտակարությունը:

Եթե մարդկանց սակավությունը Երուսաղեմի թագավորին դրդել էր իր գրեթե բոլոր բերդամրոցները համալրել տաճարականների կամ հիվանդախնամների կայազորներով, ապա հայոց իշխանը դեռևս չէր զգում նման հովանավորության անհրաժեշտությունը<sup>5</sup>:

Տաճարականները զինված միջամտությամբ սատարել են կառավարող իշխան Թորոս II-ի (1145-1169) եղբայր Ստեփանեին<sup>6</sup>, ինչը թույլատրել է նահնդականների աներկբա նվաճումից փրկել կիլիկյան բազմաթիվ բերդամրոցներ, սակայն, տաճարական ասպետներն, այդուհանդերձ, վտարվել են հայկական հասարակությունից: Սանձագերծելով ռազմական գործողություններ՝ Մլեհը (1170-1175) Կիլիկիայից արտաք-

---

<sup>5</sup> Երուսաղեմի թագավորությունում ասպետական միաբանություններին պատկանող դոյակների քանակի առիթով Թորոսը հայտնել է իր զարմանքը (*Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier*, M. L. de Mas Latrie, éd. *Jules Renouard*, Paris, 1871, p. 28-29): Այս հարցի մասին տե՛ս **G. Dédéyan**, *Un projet de colonisation arménienne dans le royaume latin de Jérusalem sous Amaury I<sup>er</sup> (1162-1174). – Le partage du monde, échanges et colonisation dans la Méditerranée médiévale*. Sous la direction de *M. Balard et A. Ducellier*, Paris, 1998, p. 115-122:

<sup>6</sup> Տե՛ս *Chronique de Matthieu d'Edesse (962-1136) avec la Continuation de Grégoire le Prêtre jusqu'en 1162*, trad., annotée et éd. par *Edouard Dulaurier*, Paris, 1858, p. 337-338 (այսուհետև՝ **Matthieu d'Edesse**):

սել է տաճարականների<sup>7</sup>, որոնց միաբանությանը նախկինում անդամակցել էր<sup>8</sup>: Այս վտարման հետևանքով դաշինքը հայկական իշխանության և տաճարականների միջև երբևէ իրապես չի վերահաստատվել: Յիրավի, Մլեհի «հնազանդեցումը» դարձել է այն պատրվակը, որը Լևոն I թագավորը (1187-1219) վկայակոչում էր՝ Պաղրաս բերդամրոցն իր տիրապետության ներքո պահելու համար<sup>9</sup>: Նա կարծում էր, որ կարող է, այսպիսով, Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճերի ընթացքում վերահսկել ասպետական միաբանության գործողությունները: Այս սխալ եզրահանգման պատճառով նա զրկվել է տաճարականների աջակցությունից բավական երկար ժամանակ: Իրոք, վրիժառու ասպետներն, ըստ էության, երբևէ չեն ներել հայերին՝ իրենց բերդամրոցը գրավելու համար:

Կիլիկիայի հայկական պետության պատմությունը նշանավորվել է տաճարականների հետ ճգնաժամների և հաշտեցումների բեկումնային ժամանակաշրջաններով:

Կիլիկիայում ասպետական միաբանությունն ուներ առանձնահատուկ կացություն: Ինչպես հիվանդախնամներն ու տևտոնականները, նրանք ևս տիրում էին հայոց թագավորի՝ իրենց շնորհած բերդամրոցներին և դրա համար պետք է նրա առջև խոնարհ լինեին: Նրանք ունեին միևնույն կարգավիճակը, ինչ թագավորության մյուս ավատատերերը և ինչպես նրանցից ամենանշանավորները՝ օգտվում էին դատական և սեփական դիվանն ունենալու իրավունքից<sup>10</sup>:

Այդուհանդերձ, հայկական իշխանությունը տաճարականներից, ի տարբերություն այլ միաբանությունների, *manu militari*\* ետ է վերցրել նրանց բերդամրոցների մեծ մասը:

Տաճարական միաբանությունն առաջինն էր, որը Կիլիկիայում ձևավորել է սահմանամերձ մարզ: Այս ասպարեզում դրան հաջորդել են հիվանդախնամները, որոնց տարածքային ծավալմանը նպաստել են Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճերը, և տևտոնականները<sup>11</sup>: Աս-

---

<sup>7</sup> **Guillaume de Tyr**, *Historia rerum in partibus transmarinis gestarum.*– Recueil des Historiens des croisades. Historiens occidentaux, Paris, 1844, t. I, 2<sup>ème</sup> partie, p. 990-991.

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> **Cl. Cahen**, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Paris, 1940, p. 600.

<sup>10</sup> **V. Langlois**, *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dynastie roupénienne*, Saint-Petersbourg, 1860, p. 11.

\* Լատ.– Ձենքի ուժով: – Ծ. ք.:

<sup>11</sup> «Մանր ժամանակագրություններում» Յեթում պատմիչը հիշատակում է 1190 թ. Սուրբ Երկրում նրանց հաստատման մասին: Տե՛ս Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.)– Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Յակոբյանը, Երևան, 1956, էջ 60:

պետական այլ միաբանությունների համեմատությամբ՝ տաճարականների սահմանամերձ մարզի ավելի վաղ հաստատումը Կիլիկիայում և այդ հաստատման հանգամանքները (մարզը հաստատել էին Անտիոքի իշխանն ու Երուսաղեմի թագավորը), պետք է որ ազդեին հայ ղեկավարների կողմից ասպետական այս միաբանությունն արժևորելու հանգամանքի վրա, քանզի սկզբնական շրջանում նրանց ներկայությունը վերջիններս ընկալում էին ոչ այնքան իբրև իրենց երկրի համար փրկարար օգնություն, որքան պարտադրանք<sup>12</sup>:

Այդուհանդերձ, նրանց միջև ծագած բոլոր անհամաձայնությունների պատճառն այս դժվարին սկիզբը չէր, քանզի նրանց վիճաբանությունների մեծ մասը պայմանավորված էր թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից հրահրվող աղետաբեր արարքներով: Սակայն, դա չի խանգարել հայերին և տաճարականներին բազում անգամներ դաշնակցել ընդդեմ ընդհանուր թշնամու:

Հետաքրքրական է նշել, որ զանազան կողմերից Պապին հղված գանգատալից նամակների և վերջինիս պատասխանների նեղ շրջանակից դուրս, իրադարձությունների ժամանակակից հայ պատմիչները (ինչպես Կեղծ Սմբատը)<sup>13</sup> չեն հիշատակում տաճարականների ներկայության մասին Տրիպոլիի կոմսի (Բոհեմունդ IV-ի) կողքին՝ իրենց գահակալ Լևոն I-ի դեմ պայքարում, պահպանելով, այսպիսով, ասպետական միաբանության անբասիր դիմագիծը: Մենք փաստել ենք, որ Կիլիկիայում տաճարականների դիրքորոշումը երբեմն զանազանվում էր Լատինական Արևելքի այլ վայրերում, մասնավորապես Երուսաղեմի թագավորությունում գտնվող նրանց միաբանների դիրքորոշումից: Խոսքը վերաբերում է այն պարագային, երբ մամլուքների հարձակումներից Կիլիկիան պաշտպանելու համար նրանք գերադասել են մարտնչել հայերի և մոնղոլների կողքին<sup>14</sup>, այնժամ, երբ Սուրբ երկրի հարավում գտնվող տաճարականները, ինչպես ասպետական այլ միաբանությունները, մոլեգնորեն դիմադրում էին թաթար ասպատակիչներին<sup>15</sup>: Կիլիկիայի տաճարականները, նույնիսկ իրենց վերջին բերդամրոցն այս երկրում կորցնելուց հետո (մահմեդականները Լա Ռոշ Գիյոնը գրավել են 1299 թ.), շարունակել են պայքարել հայերի կողքին և նրանց հետ

<sup>12</sup> Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, p. 28-29.

<sup>13</sup> La Chronique attribuée au Connétable Smbat, introduction, trad. et notes de G. Dédéyan, Paris, 1980.

<sup>14</sup> J. Delaville-le-Roulx, Cartulaire général de l'Ordre des Hospitaliers de Saint-Jean de Jérusalem (1100-1310), t. III, Paris, 1894-1906, p. 29.

<sup>15</sup> Cl. Cahen, նշվ. աշխ., էջ 708:

միասին ջանքեր գործադրել կիպրական գահն Ամորի Լուսինյանին<sup>16</sup> հանձնելու ուղղությամբ<sup>17</sup>:

Կիլիկիայի տաճարականների՝ հայոց թագավորներին ցուցաբերած աջակցությանն առնչվող այս բոլոր ակնհայտ ապացույցները մեզ դրդել են խորհել, թե արդյո՞ք նրանց հաշտությունն իրոք անկեղծ չէր, և թե արդյո՞ք տաճարականների և ժակ դը Մոլեի<sup>18</sup> միջև տարածայնություններ չկային (որը, հավանաբար, ավելի սերտ առնչություններ ուներ Երուսաղեմի նախկին թագավորության տաճարականների հետ), երբ նա խորհուրդ է տվել կազմակերպել խաչակրաց նոր արշավանք՝ շրջանցելով Կիլիկիան: Նա, այսպիսով, ի չիք է դարձրել Կիլիկյան Հայաստանում գտնվող իր ասպետների բոլոր ջանքերը, որոնք, չնայած այս երկրի գահակալների հետ իրենց նախկին թշնամանքներին, արել էին ամեն ինչ՝ ապահովելու համար քրիստոնեական վերջին պատվարի գոյության հարատևությունն ասիական մայրցամաքում:

Մյուս կողմից, Չեթունը, որին Կղենես Ե պապը լիազորել էր Կիպրոսի տաճարականների դատավարությանն առնչվող տեղեկություններ իրեն ուղարկելու համար՝ շնորհագրկվել էր հայոց թագավոր Լևոն III-ի մոտ և, այսպիսով, ինքնին հասկանալի է, որ չէր արտահայտում տաճարականների հանդեպ հայոց գահակալի տրամադրվածությունն ու ստադրությունները:

---

<sup>16</sup> Կիպրոսի թագավոր Չեթունի II-ի եղբայր և Տյուրոսի սենյոր Ամորի Լուսինյանն ամուսնացել էր Կիլիկիայի գահակալ Չեթուն {II}-ի (այստեղ և այսուհետև՝ համանման փակագծերում թարգմանչի միջամտություններն են – ծ. թ.) քրոջ՝ Չապելի հետ: Իր եղբոր՝ Չեթունի II-ի դեմ ուղղված՝ իշխանությունը Կիպրոսում բռնազավթելու փորձի ժամանակ Ամորիին սատարել են հայերը և տաճարականները: Ինչ վերաբերում է Կիպրոսի թագավորին, ապա նա օգտվել է հիվանդախնամների աջակցությունից (T. S. R. Boase, նշվ. աշխ., էջ 118-121):

<sup>17</sup> Նիկողայոս Դ պապը տաճարականներին հիմնավորապես ներգրավել է կիլիկյան թագավորության պաշտպանության մեջ, քանզի 1292 թ. հունվարին տաճարականների մագիստրոս Տիբո Գոդենից պահանջում էր նվիրաբերվել այդ գործին: Տե՛ս E. Langlois, *Les registres de Nicolas IV*, t. II, Paris, 1886, N 6854, p. 913: 1294 թ. տաճարականներն ու հիվանդախնամները ներկա էին Չեթուն {II} թագավորի թագադրությանը: Տե՛ս T. S. R. Boase, նշվ. աշխ., էջ 118-121: Կարող է թվալ, թե տաճարականներն ու հիվանդախնամները զուցեն օժանդակել են Չեթունին՝ 1299 թ. տապալելով նրա եղբայրներ Սմբատին և Կոստանդին {II}-ին: Տե՛ս Giacomo Bosio, *Dell'istoria della Sacra Religione et illustrissima militia di San Giovanni gierrosolimitano*, t. II, 1<sup>ère</sup> éd., Roma, 1594, p. 4-6, 11-12:

<sup>18</sup> Ժակ դը Մոլեն եղել է տաճարականների միաբանության վերջին մեծ մագիստրոսը: Նա այդ պաշտոնը վարել է 1294 թ. մինչև 1314 թ. մարտի 18-ը՝ այն տարեթիվը, երբ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ {IV} Գեղեցիկի և Կղենես Ե պապի հարուցած կեղծ դատական գործից հետո կենդանի այրվել է:

Տաճարականների Կիլիկիա ժամանելու, իսկ ավելի մասնավորապես՝ Պաղրաս բերդամրոցում նրանց հաստատվելու տարեթիվը վիճահարույց է: Հիմնվելով ժամանակի զանազան սկզբնաղբյուրների և նորագույն մատչելի ուսումնասիրությունների վրա՝ մենք փորձել ենք առավելագույն չափով նվազագույնի հասցնել այդ իրադարձության շուրջ առկա ժամանակագրական անհամապատասխանությունը:

Տարբեր առիթներով Պ. Դեշանը<sup>19</sup> մեզ տեղեկացնում է, որ տաճարականները Պաղրասում հաստատվել են մինչև 1154 թ., որն, ի դեպ, հավաստում է նաև Գրիգոր Երեցը<sup>20</sup>: Ըստ նրա՝ ասպետներն այդ տարեթվին բերդամրոցից ոչ հեռու մարտնչում էին Թորոսի եղբոր՝ Ստեփանեի կողքին<sup>21</sup>: Թ. Ս. Ռ. Բոասի և Ա. Ու. Լոուրենսի ուսումնասիրությունները<sup>22</sup> մեզ հնարավորություն են ընձեռում այս հարցի շուրջ ավելի հստակ պատկերացում կազմել: Նրանց ժամանումը բերդամրոց և նույնիսկ Կիլիկիայում նրանց սահմանամերձ մարզի հաստատումը Բոասը սահմանում է 1131 և 1137 թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Նա այդ հիմնավորում է Բեթգիբելինում հիվանդախնամներին պատկանող առաջին բերդամրոցը նրանց հանձնած Երուսաղեմի թագավոր Ֆուլքի՝ 1131 թ. Անտիոքի հյուսիսային շրջան գնալու փաստով, որը ցանկանում էր իր խնամակալությունն այնտեղ կայունացնելու նպատակով ասպետական միաբանություն հիմնադրել, քանի որ հարկ ուներ դիմակայելու Ալիս իշխանուհու<sup>23</sup> և Տրիպոլիի կոմսի<sup>24</sup> ընդդիմությունը: 1133 թ. և 1135 թ. նա վերադարձել է Անտիոք՝ իշխանության ժա-

<sup>19</sup> P. Deschamps, Les châteaux croisés en Terre sainte, t. III. La défense du comté de Tripoli et de la principauté d'Antioche. Etude historique, géographique, toponymique et monumentale, Paris, 1973, p. 359-361.

<sup>20</sup> Գրիգոր Երեցը եղել է Սատթեսու Ուռհայեցու գործի շարունակողը և, հավանաբար, աշակերտը: Նրա ժամանակագրությունը սկսվում է 1137 թ. և ավարտին հասնում 1163 թ.:

<sup>21</sup> Matthieu d'Edesse, p. 337-338.

<sup>22</sup> Lawrence. – T. S. R. Boase, նշվ. աշխ., գլ. IV, էջ 92-117; գլ. II, էջ 42-43:

<sup>23</sup> Ալիսը Երուսաղեմի Բողոկին II թագավորի դուստրն էր: 1126 թ. նա ամուսնացել էր Անտիոքի իշխան Բոհեմունդ II-ի հետ: Երբ 1130 թ. վերջինս սպանվել է, նա պատրաստվում էր իր դուստր Կոստանսի անունից իրականացնել խնամակալությունը: Սակայն, Բողոկին II-ը, մինչև այն ժամանակ, երբ Կոստանսը կարող էր ամուսնանալ, Անտիոք քաղաքը վստահել է Եղեսիայի կոմս Ժոսսելեն I-ին: Բողոկինը մահացել է 1131 թ., իսկ մի քանի ամիս անց՝ դրան հաջորդել է Ժոսսելենի վախճանը: Ալիսը փորձել է կրկին տիրանալ իշխանությանն Անտիոքում՝ Երուսաղեմի նոր թագավոր Ֆուլք դ'Անժուի կամքին հակառակ (տե՛ս Cl. Cahen, նշվ. աշխ., էջ 350-357): Բոհեմունդ II-ի ժառանգության մասին տե՛ս նաև M. Amouroux-Mourad, Le Comté d'Edesse, 1098-1150, Paris, 1988, p. 78-80:

<sup>24</sup> Պոն դը Տրիպոլի:

ռանգության խնդիրները կարգավորելու համար: Արևմուտքից նա կան-  
չել է Ռայմոնդ դը Պուատիեին, որպեսզի նրան ամուսնացնի իշխանու-  
թյան երիտասարդ ժառանգորդուհու՝ Կոստանսի հետ: Ժամանման պա-  
հից՝ 1136 թ. ապրիլից ի վեր, Ռայմոնդը պատերազմել է Կիլիկիայի հա-  
յերի դեմ, որը հարատևել է մինչև 1137 թ.: Ըստ Թ. Ս. Ռ. Բոասի՝ հենց  
այս պահին է, որ տաճարականները ստացել են իրենց հենակետերը,  
քանզի 1140 թ. ստորագրել են Ռայմոնդի երկու հրովարտակի ներքո<sup>25</sup>:  
Վերջինս, բացի դրանից հիվանդախնամներին Արևմուտքում արել է զի-  
ջումներ՝ ազատելով նրանց մաքսատուրքից և վավերացնելով նրանց  
այլ իրավունքները:

Այսպիսով, Երուսաղեմի թագավորն ու Անտիոքի նոր իշխանը, թե՛  
մեկը և թե՛ մյուսը, բարյացակամորեն տրամադրված լինելով ասպետա-  
կան միաբանությունների նկատմամբ և արդեն նրանց շնորհած լինելով  
բազում նվիրատվություններ, կարող էին տաճարականներին հաստա-  
տել Ամանոսում՝ ընդդեմ Կիլիկիայի հայերի: Բացի դրանից, այս ձևով,  
նրանք իրենց համար ապահովում էին միաժամանակ թե՛ իշխանության  
հավակնորդների (նոր պատրիարք Ռաֆ դը Դոմֆրոնի դաշնակից՝ Ալիս  
իշխանուհու և Տրիպոլիի կոմսի) և թե՛ մահմեդականների դեմ ուղղված  
ռազմական աջակցություն<sup>26</sup>:

Ա. Ու. Լոուրենսը մեզ օգնում է ավելի կրճատելու քննարկվող խնդրի  
ժամանակագրական շրջանակները և հակադրվում է Թ. Ս. Ռ. Բոասին:  
Ըստ նրա՝ Յովիաննես {II} Կոմենենոսն Անտիոք գնալու և այն հպատակեց-  
նելու նպատակով 1131 թ. հուլիսին և 1132 թ. սեպտեմբերին կանգ է առել  
Պաղրասում ու վերադարձի ճանապարհին կրկին անցել բերդամրոցով:  
Մենք գիտենք, որ կայսրն այստեղ կրկին կանգ է առել 1142 թ., շարունա-  
կելով հույս տածել պաշարելու Անտիոքը: Այս տեղեկությունները մեզ  
թույլատրում են առաջադրել այն ենթադրությունը, ըստ որի՝ տաճարա-  
կաններն Ամանոսի բերդամրոցները ռազմակալել են երեք հնարավոր  
տարեթվերի. կամ 1133 թ., կամ 1135 թ., Երուսաղեմի թագավորի՝ դեպի  
Անտիոք կատարած անցումների ընթացքում (այս պարագայում կիլիկյան  
սահմանամերձ մարզը նրանց կարող էր վստահել ֆրանկների թագավո-  
րը) և կամ 1136-1137 թթ., Անտիոքի գահին Ռայմոնդի տիրանալու ժամա-  
նակ, որը հետամուտ է եղել Կիլիկիայի հետ իր սահմանի ամրապնդմա-  
նը, որպեսզի ապահովի իր թիկունքը հայերի դիմահարության դեպքում,

---

<sup>25</sup> T. S. R. Boase, նշվ. աշխ., էջ 92-117:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 92-95:



որոնց դեմ սանձագերծել էր պատերազմ<sup>27</sup>: Այդուհանդերձ, կարող է թվալ, թե տաճարականներն ի վիճակի չեն եղել հաստատուն կերպով պահպանել իրենց նոր ձեռքբերումները: Չնայած Յովհաննես {II} Կոմնենոսի վախճանին<sup>28</sup>՝ 1142 թ. բյուզանդացիների հարձակումը հանգեցրել է ֆրանկներին պատկանող՝ Անտիոքի սահմաններում գտնվող մեծ թվով բերդամրոցների կորստին, որոնց թվում, անտարակույս, պետք է լիներ նաև Պաղրասը: Նրանց մեկնումից հետո, վերանվաճման ընթացքում, Թորոսն այդժամ տիրել է այդ բերդամրոցներին: Տաճարականները, հավանաբար, դրանցից պետք է շատ հեռացած չլինեին, քանզի մենք նրանց կրկին հանդիպում ենք Ստեփանեի կողքին 1155 թ. շրջանում (հայերն այդ ժամանակ առաջ էին ընթացել Ամանոսի ուղղությամբ):

#### *Գ – Ասպետական միաբանություններին առանձնապես բարեհաճ նվիրատվություններ*

Կիլիկյան Հայաստանում տաճարականների, ինչպես նաև ասպետական այլ միաբանությունների ներկայության կարևորության իրազեկ լինելու հիմնական միջոցներից մեկն այն փաստաթղթերի, իսկ ավելի ստույգ, այս երկրում նրանց շնորհված նվիրատվությունների ուսումնասիրությունն է, որոնցից նրանք օգտվել են:

Լևոն Մեծագործից (1198 թ.) մինչև Լևոն V-ը (նրա կտակը թվագրվում է 1393 թ.) Կիլիկյան Հայաստանի թագավորական դիվանի հրապարակած հարյուր իննսուներկու հրովարտակից քսանչորսն ուղղակիորեն վերաբերում են ասպետական միաբանություններին, իսկ բազմաթիվ այլ հրովարտակներում հիշատակումներ կան դրանց մասին: Սա բավական նշանակալից թիվ է և վկայում է դրանց քաղաքական ազդեցության մասին: Այս հրովարտակները մեզ նմանապես տեղեկացնում են դրանց պարտականությունների, նվիրատվությունների հաճախակա-

---

<sup>27</sup> Կիլիկիայում Ռայմոնդի առաջին ռազմարշավը հայերի դեմ տեղի է ունեցել 1136 թ.: Դա մի անկանոն պատերազմ էր, որը հարատևել է մինչև 1137 թ. (տե՛ս **T. S. R. Boase**, նշվ. աշխ., էջ 93-95): Եդեսիայի կոմսությունում հիվանդախնամների միաբանությանն առաջին նվիրատվությունը շնորհվել է 1131 թ. (տե՛ս **M. Amouroux-Mourad**, նշվ. աշխ., էջ 141-142), մի տարեթվի, որն անհամեմատ մոտ է Կիլիկիայում ասպետական միաբանությունների հաստատմանն առնչվող՝ վերը նշված տարեթվերին:

<sup>28</sup> Յովհաննես {II} Կոմնենոսի արշավանքների և վախճանի մասին տե՛ս Anonymi auctoris chronicon ad A. C. 1234 pertinens II, trad. de *A. Aboua*, introduction, notes et index de *J. M. Fiey*, *Corpus Scriptorum Christianorum Orientalum*, SS, 154, Louvain, 1974, p. 81-83, 86 (այսուհետև՝ **Anonyme syriaque**):

նության և շնորհման շարժառիթների, ինչպես նաև դրանցով խիստ մտահոգված անձանց մասին:

Քսանչորս հրովարտակից տասնինը, այն է՝ գերակշռող մասը, վերաբերում է հայոց գահակալների արտոնյալ գործընկերներին՝ հիվանդախնամներին:

Նրանց բաժին էր հասել նվիրատվությունների ամենամեծ մասը: Հիրավի, հրովարտակներից տասներկուսը նվիրատվություններ են, յոթը՝ կոչեր են Պապին, հանուն այն բանի, որ հիվանդախնամները հայոց թագավորին օգնություն ցուցաբերեն, իսկ մեկը վերաբերում է Կիլիկիայի և Կիպրոսի միջև հաշտությունը վերահաստատելուն առնչվող՝ հիվանդախնամներին տրվող հանձնարարականի: Դրանցից մի քանիսը միակցում էին բազմաթիվ հարցեր, քանզի նվիրատվության դիմաց հայոց գահակալը հայցում էր օգնություն: Տևտոնականները հիշատակվում են սոսկ երկու անգամ, ընդ որում մեկ անգամ հիվանդախնամների հետ մեկտեղ՝ Կիլիկյան Հայաստանի թագավորին աջակցելու և նվիրատվություններ ստանալու առիթով: Իբրև գլխավոր դերակատարներ՝ տաճարականները հանդես են գալիս միայն չորս հրովարտակում. երեք անգամ՝ Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճերի առիթով (որոնք փոխանակումներ են Իննոկենտիոս Գ պապի և Լևոն I թագավորի միջև) և մեկ անգամ՝ տաճարականների մեծ մագիստրոսի՝ Կիլիկիա կատարած ճանապարհորդությանն առնչվող զեկուցագրի կապակցությամբ<sup>29</sup>:

Ասպետական միաբանություններին առնչվող հրովարտակների բնույթը փոփոխություններ է կրում հայկական թագավորության քաղաքական իրավիճակին համապատասխան: Լևոն I-ի (1187-1219, թագավորել է 1198 թվականից) օրոք պետությունը վերածվում է թագավորության և հաստատվում է ամուր իշխանություն: Դա կարելի է հավաստել ասպետական միաբանություններին հղված հրովարտակների միջոցով: Հիրավի, դրանք բացառապես նվիրատվություններ շնորհող հրովարտակներ են (ընդամենը չորս)՝ տրված հիվանդախնամներին (որոնք հավանության են արժանացնում նրանց պարկեշտ վարքագիծը) և տևտոնականներին:

Ռայմոնդ-Ռուբենի օրոք, որը Լևոնի եղբոր թոռն էր և 1216-1219 թթ. Անտիոքի իշխանը, իրավիճակը համանման էր, քանզի հիվանդախնամներն օգտվում են չորս նվիրատվությունից: Դա բացատրվում է այն փաստով, որ Երիտասարդ իշխանը դեռևս գտնվում է Լևոնի հովանու ներքո, ունենալով, այսպիսով, ամառարկելի իշխանություն, որին, բա-

---

<sup>29</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 21-37:

ցառությամբ Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճերի, բնորոշ է դեռևս քաղաքական համենատաքար կայուն իրավիճակը: Այդուհանդերձ, քաղաքական հուզումներն իրենց արտացոլումն են գտել տաճարականներին առնչվող երեք հրովարտակում, որոնք վերաբերում են Պաղրասը վերադարձնելուն և Անտիոքի իշխանին ու հայոց թագավորին հակադրած բանավեճի ընթացքում՝ վերջինիս օգնություն ցուցաբերելու հարցում միաբանության գրաված բացասական դիրքորոշմանը: Այդ ժամանակաշրջանում հիվանդախնամներին շնորհված Լևոնի նվիրատվություններում ակնկալվում է Անտիոքի իշխանին և տաճարականներին դիմակայող նրանց զինված աջակցությունը: Հիվանդախնամների նկատմամբ այդ առատաձեռնությունը հետապնդում էր, հավանաբար, տաճարականների համակրանքը շահելու երկրորդական նպատակ, վերջիններիս հնարավորություն ընձեռելով հույս տածել ունենալու համանման արտոնություններ: Լևոնի գահակալությունից հետո նվիրատվությունները դարձել են շատ ավելի հազվադեպ: Հայոց արքունիքն այլևս չէր զգում ասպետական միաբանություններից մեկին՝ ի հակակշիռ մյուսի զորավիզ լինելու կարիքը: Այդուհանդերձ, ըստ ռազմական պահանջների անհրաժեշտության՝ այդ նվիրատվությունները շնորհվելու են: Հեթուն I-ի (1226-1269) և Ջապելի օրոք միակ նվիրատվությունը շնորհվել է հիվանդախնամներին: Դրանով իսկ նրանք հետևել են, ակնհայտորեն շատ ավելի ցածր մակարդակով, իրենց նախորդների՝ նախապատվություն տալու քաղաքականությանը: Նրանց թագավորության օրոք է ի հայտ գալիս նաև Պապի առաջին միջամտությունը<sup>30</sup>, որը հայոց թագավորին սատարելու համար համառորեն ձգտում էր ձեռք բերել հիվանդախնամների և տևտոնականների օգնությունը<sup>31</sup>: Դա վկայում է հայկական իշխանության անկումային վիճակի մասին: Այնուամենայնիվ, Կիլիկյան Հայաստանի թագավորին՝ բազմաթիվ հիվանդախնամների մահվան համար վրեժխնդիր լինելու նպատակ հետապնդող Պապի միջնորդությունից հետո, հաստատվում են փոխադարձ համակրանք և փոխօգնության կապեր:

Համընդհանուր անկումն ակներև է նվիրատվությունների քանակի նվազման և օգնության կոչի ետնախորքի վրա: Այդուհանդերձ, ի հայտ եկած փոխադարձ համակրանքը դրան հաղորդում է որոշ նրբերանգներ: Իրավիճակն ավելի է բարդանում Լևոն III-ի (1301-1307) օրոք:

<sup>30</sup> Կղենես Դ-ի՝ 1267 թ. մայիսի 16-ին: Տե՛ս նույն տեղում, էջ 28:

<sup>31</sup> Հեթուն I-ը՝ Կոստանդին խնամակալի որդին, 1226 թ. ամուսնանալով Լևոն I-ի դուստր Ջապելի հետ դարձել է թագավոր: Նա, այսպիսով, հիմնադրել է Հեթունյանների հարստությունը:

Չիրավի, նրա թագավորության օրոք ոչ մի նվիրատվություն չի շնորհվում, իսկ Կղենես Ե պապը նրան աջակցելու համար երկու կոչով դիմում է հիվանդախնամներին: Օշինի (1308-1320) օրոք պարզվում է, որ իրավիճակը փոփոխություններ չի կրում, սակայն, թվում է, թե այն փոքր-ինչ ավելի է երանգավորվում. հիվանդախնամներին շնորհվում է մեկ նվիրատվություն, սակայն, այն պարտադիր պայմանով, որ նրանք ջանքեր գործադրեն պահպանելու գոյություն ունեցող իրավիճակը: Պապը հայցում է հիվանդախնամների հովանավորությունը հայկական առաքելություններից մեկի համար: Իրավիճակն, այսպիսով, բարելավվում է: Թվում է, թե Լևոն IV-ի (1320-1342) օրոք այն ավելի է բարելավվում, քանզի օգնության որևէ խնդրանք չի ներկայացվում: Բացի դրանից, հիվանդախնամներին շնորհվում է երկու նվիրատվություն: Այդուհանդերձ, շատ հավանական է, որ այս բերդամրոցները կարող էին միաբանությանը տրվել այն բանից խուսափելու համար, որ դրանք մահմեդականների տիրապետության տակ չանցնեին: Չրովարտակներից մեկը հիվանդախնամներից պահանջում է միջնորդի դեր ստանձնել Կիլիկյան Չայաստանի և Կիպրոսի թագավորների միջև: Լևոն V Լուսինյանի (1374-1375) օրոք, թագավորության անկումից առաջ, 1375 թ. արվում է վերջին կոչը: Սմբատի (1296-1298) և Կոստանդին {II}-ի (1299)<sup>32</sup> օրոք է, որ տաճարականների մագիստրոսը<sup>33</sup> Կիլիկիա կատարած իր ճանապարհորդության մասին ներկայացնում է զեկուցագիր:

Ասպետական միաբանություններին առնչվող հրովարտակների տրամադրած տեղեկությունների միջոցով մենք բացահայտեցինք հայկական քաղաքականությանն առնչվող որոշ հարցեր, սակայն շատ ավելի տեղեկություններ քաղեցինք, մասնավորապես հայոց գահակալների՝ ասպետական միաբանություններին շնորհած նվիրատվությունների, ինչպես նաև այն աննշան դերի մասին, որն այդ նվիրատվական փաստաթղթերում հատկացվում էր տաճարականներին:

---

<sup>32</sup> Սմբատին և Կոստանդին {II}-ին 1299 թ. զահրնկեց է արել իրենց եղբայր Չեթուն II-ը: Չիրավի, վերջինս, որը հիվանդախնամների և տաճարականների ներկայությամբ թագադրվել էր 1294 թ., լքել է իր պարտականությունները բազում անգամներ, միանալու համար ֆրանցիսկյան վանքերին՝ թողնելով, այսպիսով, հայկական թագավորությունն իր եղբայրների և զարմիկների քմահաճույքին (T. S. R. Boase, նշվ. աշխ., էջ 118-143):

<sup>33</sup> Ժակ դը Մոլեն:

Դ – Խաչակրաց արշավանքի՝ Կիլիկիայով  
անցում նախատեսող նախագծի մերժումը

Կիլիկիայում տաճարականների ներկայության ավարտը նշանավորվել է մեծ նագիստրոս ժակ դը Մոլեի՝ Խաչակրաց արշավանքի նախագիծը մերժող միջամտությամբ<sup>34</sup>, նախագիծ, որը կիլիկյան պետությունը նախատեսում էր կամ իբրև գլխավոր նպատակ, կամ իբրև անցումային վայր<sup>35</sup>: Այդ մասին, իրոք, հարց է ծագել, երբ Կղեմես Ե պապը հանձնարարել է Լևոն III թագավորի եղբոր որդուն՝ Կոռիկոսի սենյոր Յեթունին, Խաչակրաց արշավանքի մասին մի տրակտատ գրել իր «Ծաղիկք պատմութեանց Արևելիցուն»<sup>36</sup>: Այս գիրքը բաղկացած է չորս մասից<sup>37</sup>: Վերջինը, որը գրվել է լատիներեն, զանազանվում է մյուս երեքից, որոնց բնագրային տարբերակները ֆրանսերեն են<sup>38</sup>: Այս բաժինը Խաչակրաց արշավանքին վերաբերող տրակտատ է, որն այս խնդրի շուրջ Պապի հարցերի պատասխանն է<sup>39</sup>: Յեթունը հանդես է գալիս դեպի Սուրբ երկիր Խաչակրաց արշավանքների անցման վայրի ընտրությանը վերաբերող երեք առաջարկով. եթե դրանց թվում նա հիշատակում է Կոստանդնուպոլսով անցնող ցամաքային ճանապարհի մասին, որն ավարտին էր հասնում Կիլիկյան Յայաստանում<sup>40</sup>, ապա շատ ավելի է համառուն իրեն քաջածանոթ ծովային ուղու վրա՝ առաջարկելով, այդժամ, ավի դուրս գալ Կիպրոսում կամ Կիլիկիայում: 1305 թ. օգոստոսի 7-ին Յեթունն իր գիրքը Պուատիեում հանձնել է Կղեմես Ե-ին<sup>41</sup>: Խաչակրաց արշավանքի նրա նախագիծը, որը վերաբերում էր երթուղիներին, թշնա-

<sup>34</sup> Խաչակրաց արշավանքի նախագծերի շուրջ տե՛ս **Ch. Samaran**, *Projet français de croisades de Philippe le Bel à Philippe de Valois.*– Histoire littéraire de France, t. XLI, Paris, 1881, p. 33-74:

<sup>35</sup> Ասպետական միաբանությունների ծավալման և բարեշրջության գործում Խաչակրաց արշավանքների դերի մասին տե՛ս **A. Demurger**, *La Croisade au Moyen Age*, Paris, 1998, p. 43-48, 98, 102-110:

<sup>36</sup> **Haython de Korykos**, *La flor des estoires des parties d’Orient.*– *RHC, DA*, t. II, Paris, 1906, p. XXIII-CXLII, p. 113-253, 255-363 (այսուհետև՝ **Haython**). Տե՛ս նաև **Cl. Mutafian**, *Héthoum de Korykos, historien arménien. Un prince cosmopolite à l’aube du XIV<sup>e</sup> siècle.*– « Cahiers de recherches médiévales », 1996, 1, p. 173:

<sup>37</sup> Առաջինը նկարագրում է Ասիայի տասնչորս թագավորությունը, երկրորդն ուրվագծում է արաբական և թուրքական հարստությունների պատմությունը, իսկ երրորդը՝ մոնղոլների պատմությունը: **Haython**, *Արշ.*, էջ 113-253, 255-363: Տե՛ս նաև «Յեթուն» հոդվածը հետևյալ հրատարակության մեջ. *Dictionnaire des Lettres françaises, Le Moyen Age*, sous la dir. du *Cardinal G. Grente*, Paris, 2<sup>ème</sup> éd., 1992, p. 662-663:

<sup>38</sup> Գրել է Նիկոլա Ֆակոնը՝ պատմիչի պատմածի հիման վրա:

<sup>39</sup> **Haython**, *Արշ.*, էջ 220-253, 340-363:

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> **Cl. Mutafian**, *Արշ.*, էջ 174:

մու ուժերին, ֆրանկներին անհրաժեշտ դաշինքներին ու զինված ուժերին, վերանվաճման շարժառիթներին, նպատակահարմար ժամանակաշրջաններին և բազում այլ մանրամասների՝ մեծապես հետաքրքրել է Պապին: Իբրև դրա հետևանք՝ Կիլիկիայում խաչակիրների ափհանման գաղափարի նկատմամբ դյուրագգաց դարձած Կղեմես Ե-ն համառորեն հասնում է այն բանին, որ ասպետական միաբանությունների մեծ մագիստրոսները վերոնշյալ հարցի շուրջ հայտնեն իրենց կարծիքները:

Տաճարականների և հիվանդախնամների մագիստրոսների պատասխանները տրվել են զեկուցագրերի ձևով<sup>42</sup>: «Հիվանդախնամները Սուրբ երկրում և Կիպրոսում» գրքում Դելավիլ-Լո-Ռուն այդ զեկուցագրերը թվագրում է 1305 թվականով<sup>43</sup>, իսկ «Ֆրանսիան Արևելքում XIV դարում» գրքում՝ 1307 թվականով<sup>44</sup>: Այսպիսով, մենք հստակ չգիտենք թե արդյո՞ք դրանք նախորդում են, թե հաջորդում Յեթումի տրակտատին:

Ժակ դը Մուլեն հանդես էր գալիս, ընդհանուր առմամբ, Արևելքում անցում կազմակերպելու օգտին, սակայն վճռականորեն հակադրվում էր Կիլիկյան Հայաստանում բազայի հիմնադրմանը կամ նույնիսկ այնտեղ ափհանման հնարավորությանը<sup>45</sup>: Իր մտադրությունը նա հիմնավորում էր բազմաթիվ փաստարկներով: Առաջին հերթին՝ ռազմավարական տեսանկյունից Կիլիկիայի տեղադրությունը նպաստավոր չէր զինված ուժերի՝ այնտեղից Ասորիք մուտք գործելու համար: Բացի դրանից, Եգիպտոսի մամլուք սուլթանի հետ ուժերը չափելու համար, հարկ կլիներ ունենալ ոչ պակաս քան տասնհինգ հազար հեծյալ և հիսուն հազար հետևակային (նետաձիգ): Նյութատեխնիկական տեսանկյունից՝ նախապատրաստությունը պետք է ընդգրկեր լայն ոլորտներ՝ նախատեսելով իտալական նավատորմիղների աջակցությունը, իսկ ընդհանուր անցումից առաջ՝ տասը թիանավ Արևելք ուղարկելու անհրաժեշտությունը: Ոչ այնքան նպաստավոր աշխարհագրական դիրքից զատ՝ Կիլիկիան արժանացել է տաճարականների մագիստրոսի նվազ հավանությանն առողջության համար վնասակար կլիմայի պատճառով: Ժակ դը Մուլեն հավաստիացնում էր, որ մեկ տարի Կիլիկիայում անցկացնելուց հետո չորս հազար հեծյալից կենդանի կմնան միայն հիսունը:

---

<sup>42</sup> J. Delaville-le-Roulx, *Les Hospitaliers en Terre sainte et à Chypre (1100-1310)*, Paris, 1904, p. 265.

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> J. Delaville-le-Roulx, *La France en Orient au XIV<sup>e</sup> siècle*, t. I, Paris, 1866, p. 55.

<sup>45</sup> *Lettres de Jacques de Molay à Clément V.* – Baluze, *Vitae Papatum Avenionensium, hoc est historia Pontificum Romanorum qui in Gallia sederunt ab anno Chisti MCCCIV usque ad annum MCCCXCIV*, nouvelle éd. revue et complétée par G. Mollat, t. III, Paris, 1921, p. 145-149.

Հավաստի է, որ հովիտների կլիման խոնավ էր և կնպաստեր մանրէների տարածմանը, ինչը կարող էր, այսպիսով, հող նախապատրաստել տենդի համաճարակի համար: Սակայն, Անդրտավրոսի գագաթներում օդը չոր էր և սառը: Այն կարող էր, այսպիսով, այնտեղ գտնվող մարդկանց առողջության համար վտանգավոր չլինել: Այդուհանդերձ՝ ըստ ժակ դը Մուլեի, հավանական խաչակիրների առաջավոր դիրքերի համար այս տեղանքը ոչ այլ ինչ էր, եթե ոչ խոչընդոտ: Բայց վատթարագույնն այն էր, որ դեպի Ասորիք ելք ունեցող կիլիկյան բոլոր անցուղիները գտնվում էին մահմեդականների տիրապետության ներքո: Կիլիկյան Հայաստանում ավարտին հասնող խաչակրաց արշավանքի նախագծին դիմակայող վերջին փաստարկով տաճարականների մագիստրոսը պատասխանատվությունը բարդում էր մարդկանց վրա: Նա նշում էր, որ հայերը վստահություն են ցուցնում մարդիկ չեն, որ նրանց չի կարելի ապավինել մարտի դաշտում, որ նրանք ֆրանկներին կասկածում են իրենց թագավորությունը գրավելու ցանկություն ունենալու մեջ, և որ նրանց կխոչընդոտեն մուտք գործել իրենց դոյակները կամ բերդամրոցները\*։ Եզրափակելուց առաջ, նա հիշատակում էր Ամանոսում տաճարականների սահմանամերձ մարզի առիթով՝ նրանց և հայերին հակադրած երկար ու ձիգ վեճի մասին, որը երկուստեք հանգեցրել էր ուժերի անիմաստ վատնումի և քրիստոնյաների ուժերի ցրմանը<sup>46</sup>։

Կիլիկիայով անցում նախատեսող խաչակրաց այս արշավանքը տեղի չի ունեցել: Այդ որոշման կայացման հարցում ժակ դը Մուլեի զեկուցագրի դերն անհայտ է: Այդուհանդերձ, հավաստի է, որ այն պետք է իր ազդեցությունը թողած լինի Կղենես Ե-ի վճռի վրա, որը վստահություն էր տածում տաճարականների մեծ մագիստրոսի նկատմամբ, անկախ այն հանգամանքից, որ արդեն սկսում էր միաբանության դատավարությանն առնչվող փաստաթղթեր ժողովել, ինչի շուրջ ժակ դը Մուլեն հեռու էր կասկածներ տածելուց:

Մի կողմից Հեթումին, իսկ մյուս կողմից տաճարականներին ներկայացվող՝ համապատասխանաբար տաճարականների<sup>47</sup> և Կիլիկյան Հա-

---

\* Հարկ է նշել, որ տաճարականների մեծ մագիստրոսն այնքան էլ հեռու չէ ճշմարտությունից, քանի որ հայերը մշտապես կասկածում էին խաչակիրներին իրենց երկրամասին տիրանալու ձգտման մեջ: – Խմբ.:

<sup>46</sup> Տե՛ս ժակ դը Մուլեի նամակը Կղենես Ե-ին՝ նույն տեղում; **J. Delaville-le-Roulx**, *Նշվ. աշխ.*, էջ 265-269; **M. Barber**, *The New Knighthood. A History of the Order of the Temple*, Cambridge, 1994, p. 286-287; **T. S. R. Boase**, *Նշվ. աշխ.*, էջ 95-100:

<sup>47</sup> 1308 թ. Կղենես Ե պապը Հեթումին է վստահել Ամորիին նամակներ տանելու առաքելությունը՝ Կիպրոսի տաճարականների մասին տեղեկություններ ստանալու նպատակով: Եղբայրների դատավարությունը նախապատրաստելու նպատակ հետապնդող՝

յաստանի վերաբերյալ տեղեկատվական բնույթի պահանջների խառնիխուռն այս հոսքը երկու կողմի համար եղել է վնասակար և հանգեցրել է, այսպիսով, Կիլիկիայի համար խաչակրաց արշավանքի վերջին հույսերի չքացմանն ու կարճ ժամանակով այն ասպետական միաբանության վերացմանը, որի անդամներն իրենց կյանքը նվիրաբերել էին Սուրբ երկրի պաշտպանությանը: Այսպիսով, տաճարականներն ու հայերն առանց հաշվի առնելու թե՛ ոչ հեռավոր անցյալում իրենց համատեղ զինված միջամտությունները և թե՛ ուշացումով կայացված իրենց հաշտությունը, նետվել են վաղեմի քինախնդրությունների գիրկը և հանուն զազրելի բանավեճերի բախտի քմահաճույքին մատնել Լատինական Արևելքի ճակատագիրը:

Կիլիկիայում տաճարականների ներկայությունը, որն այստեղ ուրվագծեցինք մի քանի հատկանշական կողմերով, հայկական՝ միմյանց հաջորդած իշխանությունների համար, և այս կամ այն ժամանակաշրջանում, վերածվել է մերթ ցրանց նախագծերի իրականացման խոչընդոտի, մերթ արժեքավոր և անհրաժեշտ օգնության: Տաճարականների միաբանությունը Կիլիկիայում հաստատված ասպետական առաջին միաբանությունն է, ինչը սակայն հայերի նախաձեռնությամբ չի տեղի ունեցել: Ասպետական այլ միաբանությունների համեմատությամբ՝ այն օգտվել է սակավաթիվ նվիրատվություններից, քանի որ հայկական իշխանության նկատմամբ առաջիններն ավելի հաշտվողական դիրքորոշում ունեին և պապական քմահաճույքներին ավելի հնազանդ էին, մասնավորապես Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճերի ընթացքում: Այդուհանդերձ, տաճարական ասպետները բազում անգամներ զորավիզ են եղել Կիլիկիայի հայոց թագավորներին, հատկապես XIII դարի վերջին և XIV դարի սկզբին: Հաշվի չառնելով իրավիճակի այս շրջադարձը, ժակ դը Մոլեն հակադրվել է Կիլիկիայի ուղղությամբ խաչակրաց արշավանքի նախագծին: Եթե դրանից հետո տաճարականներն իրենց դեմ թխված շինծու դատավարության պատճառով անհետացել են, հիվանդախնամներն ու տևտոնականները Կիպրոսի և Կիլիկյան Հայաստանի թագավորների հետ կողք-կողքի շարունակել են պայքարը հանուն Սուրբ երկրի պաշտպանության:

---

նրանց առնչվող այդ տեղեկությունները Պապին են ուղարկել միաժամանակ Ամորին և Հեթուն Կոռիկոսցին: 1308 թ. օգոստոսի 20-ի բուլլայով Պապը դրանք փոխանցել է Ֆիլիպ {IV} Գեղեցիկին: Տե՛ս **Ch. Deluz**, Introduction.– **D. Regnier-Bohler** (dir.), *Croisades et pèlerinages, récits, chroniques et voyages en Terre sainte, XII<sup>e</sup>-XVI<sup>e</sup> siècles*, Paris, 1997, p. 803; **Cl. Mutafian**, նշվ. աշխ., էջ 170:



ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.  
ՏԵՎՏՈՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՅԱՍՏԱՏՎԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆ

Գերմանացիների՝ Սեն-ժան դ'Ակրայի հիվանդանոցի<sup>48</sup> վերածունն ասպետական միաբանության տեղի է ունեցել Կիլիկիայում հայկական իշխանության՝ թագավորության վերածվելուն<sup>49</sup> զուգընթաց<sup>50</sup>: Ասպետական նոր միաբանությունը, ինչպես նաև նոր թագավորությունը իրենց հիմնադրմամբ պարտական էին թե՛ Պապին և թե՛ միաժամանակ գերմանացիների կայսրին: Հիրավի, Հայնրիխ VI կայսրը Հարավային Իտալիայում և Սիցիլիայում բազում նվիրատվություններ է արել միաբանությանը և դրանով իսկ նպաստել դրա բուռն վերելքին<sup>51</sup>: Ինչ վերաբերում է Իննոկենտիոս Գ պապին, ապա նա այն վավերացրել է 1199 թ. փետրվարի 19-ին<sup>52</sup>: Հայ հոգևորականության կողմից՝ հռոմեական եկեղեցու հետ մերձեցմանը նպաստող որոշ զիջումներ ստանալուց հետո, Կելեստինոս Գ պապն իր համաձայնությունն է տվել, որ իշխան Լևոն II-ն արքայական թագ ստանա: Ռուբինյան տիրակալը նույն խնդրանքով դիմել է Հայնրիխ VI կայսրին, այնուհետև, նրա անժամանակ վախճանից հետո, նրա վարչապետին՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադին: Վերջինս, 1197 թ. սեպտեմբերին Կիպրոսում Ամորի Լուսինյանին թագադրելուց հետո՝ զնացել է Կիլիկիա և 1198 թ. հունվարին կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը թագադրել է Լևոնին, որը Մայնցի

<sup>48</sup> Այս հիվանդանոցը հիմնադրվել է ավելի ուշ, քան գերմանացիների հիվանդանոցը Երուսաղեմում՝ XII դարի առաջին տասնամյակներին, որը 1140-ական թվականներին դրվել է հիվանդախնամների միաբանության հովանու ներքո: Ըստ Մ.-Լ. Ֆավրոյի՝ Սեն-ժան դ'Ակրայի հիվանդանոցը հիմնադրվել է Սալահ էդ-Դինի կողմից Երուսաղեմի գրավմանը հաջորդած՝ ֆրանկների հակահարձակման ժամանակ: Տե՛ս **M.-L. Favreau**, *Studien zur Frühgeschichte des Deutschen Ordens*, Stuttgart, 1975:

<sup>49</sup> Այն իրողությունների մասին, որոնք 1198 թ. հունվարին պայմանավորել են այդ թագադրությունը տե՛ս **Cl. Cahen**, *նշվ. աշխ.*, էջ 589; **G. Dédéyan**, *Idéologie de croisade et idéologie chevaleresque chez les Arméniens de Cilicie*, p. 57:

<sup>50</sup> Գերմանացիների հիվանդանոցն ասպետական միաբանության է վերածվել 1197 թ. սեպտեմբերից 1198 թ. ընկած ժամանակաշրջանում: Հմմտ. **K. Toomaspoeg**, *Histoire des Chevaliers teutoniques*, Paris, 2001, p. 18:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 17-18:

<sup>52</sup> **E. Strehlke**, *Tabulae Ordinis Theutonici ex tabulari regii berlinensis codice potissimum*, 1<sup>ère</sup> éd., Berlin, Weidmannos, 1869; 2<sup>ème</sup> éd., préface et ajouts de *H. E. Mayer*, Jérusalem, 1975, p. 266, N 297.

արքեպիսկոպոսից ստացել է թագավորական այլ տարբերանշաններ<sup>53</sup>: Հայոց պետության և տևտոնական հիվանդանոցի արմատական առաջընթացները տեղի են ունեցել զուգահեռաբար, նույն տարում, և կրել XII-XIII դդ. քրիստոնեական աշխարհում երկու ամենահզոր անձանց դրոշմը: Այդուհանդերձ, երկու հաստատությանը, յուրաքանչյուրի համար ամենամեծ շահավետությամբ, քիչ անց, առնչակցվելու հնարավորություն էր ընձեռվելու գերմանացիների կայսրի հետ հաստատված փոխհարաբերությունների շնորհիվ:

Ինչպիսի՞ առանձնահատկություն է ունեցել տևտոնական միաբանությունը Կիլիկյան Հայաստանում:

Մենք կջանանք պատասխանել այս հարցին՝ Կիլիկիայում գերմանացիների Սուրբ Մարիի միաբանության հաստատման հանգամանքների ուսումնասիրության հենքի վրա և հաշվի կառնենք դրան շնորհված նվիրատվական հրովարտակները: Եզրափակելուց առաջ կուսումնասիրենք տևտոնականների արտոնյալ փոխհարաբերությունները Կիլիկիայի առաջին հայոց թագավորների հետ:

#### *Ա – Հաստատում աշխարհաքաղաքականության բարենպաստ հենքի վրա*

Խաչակրաց երրորդ արշավանքն առաջ է բերել Սեն-ժան դ'Ակրայի գերմանացիների հիվանդանոցը հիմնադրելու բումն ցանկություն:

Հայ պատմիչները, մասնավորապես Հեթում Կոռիկոսցին իր «Ժամանակագրության» մեջ, որն ընդգրկված է «Մանր ժամանակագրություններում», 1190 թվի տակ նշում է. «Եւ յայսմ ամի եղև սկիզբն կարգաւորութեան Ալաման ֆրէրացն»<sup>54</sup>, դրանով իսկ վկայելով այն հետաքրքրության մասին, որը հայոց իշխաններն ի սկզբանե դրսևորում էին տևտոնականների նկատմամբ:

Լևոն II իշխանը և նրա նախորդները Կիլիկիայում հիմնադրել էին մի մեծ իշխանություն, որը նրանց՝ միմյանց հաջորդող նվաճումների շնորհիվ ընդարձակվել էր և խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակա-

---

<sup>53</sup> Cl. Cahen, նշվ. աշխ., էջ 589; Cl. Mutafian, Le royaume arménien de Cilicie. XII<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles, Paris, 1993, 2001, p. 41. Լևոնը թագ էր ստացել նաև Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս {III} Անգելոսից:

<sup>54</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60:

շրջանում կարող էր թերևս վերածվել թագավորության: Երբ 1190 թ. Ֆրիդրիխ {I} Շիկամորուսն անցնում էր Կիլիկիայով, Լևոնի արքայական հավակնությունները, չնայած այն բանին, որ կայսրը՝ ըստ Ներսես Լամբրոնացու, թագ էր խոստացել<sup>55</sup>, չեն իրականացել, քանի որ մինչ հայոց թագավորը ժամանակ կգտներ նրան միանալու, Ֆրիդրիխ I-ը Սելևկիա գետում կնքել էր մահկանացուն<sup>56</sup>: Կայսրի հաջորդը՝ Յայնրիխ VI-ը, քիչ անց վախճանվել է: Այդուհանդերձ, վերջինիս և Կելեստինոս Գ-ի մոտ Լևոնի ուղարկած դեսպանությունները հասել են ակնկալված արդյունքների և 1198 թ. հունվարի 6-ին հայոց իշխանը թագադրվել է Տարսուսում՝ Մայնցի արքեպիսկոպոս ու Պապի նվիրակ Կոնրադի ներկայությամբ<sup>57</sup>:

Հայոց թագավորը պարտավորվել է ճանաչել գերմանացիների կայսրի ավագությունը<sup>58</sup>, հանգամանք, որը թվում է, թե մեծ չափով չի կաշկանդել հայոց պետության գործունեությունը, այլ իր արտացոլումն է գտել գլխավորապես Լևոն I-ի պաշտոնական փաստաթղթերի վերնագրերում<sup>59</sup>: Այդուհանդերձ, այն իր դրոշմն է թողել Կիլիկիայի հայոց գահակալների վարած դիվանագիտության վրա, որոնք գերմանացիների կայսրերին զորավիզ էին բռնոր հանգամանքներում և տևողական ասպետներին հնարավորություն է ընձեռել հաստատվել Կիլիկիայում:

1211 թ. Օտտոն {IV} կայսրն իր պատվիրակին՝ Հիլդեսհայնի կանոնիկոս Վիլբրանդ Օլդենբուրգցուն ուղարկել է Կիլիկիա՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն I-ի գահաժառանգի՝ նրա եղբոր թոռան համար նախատեսված արքայական թագով<sup>60</sup>: Այս դեսպանությունը թույ-

<sup>55</sup> S. Der Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, chap. XVIII, p. 645.– K. M. Setton, *A History of the Crusades*, vol. II. *The Later Crusades, 1189-1311*, University of Pennsylvania, 1962.

<sup>56</sup> *Imâd ad-Dîn al-Isfahânî (519-597/1125-1201). Conquête de la Syrie et de la Palestine par Saladin*. Trad. française par H. Masse. Documents relatifs à l'Histoire des Croisades, Paris, 1972, p. 226-228; *Les Gestes des Chiprois*.– RHC, DA, t. II, p. 660; *Anonyme syriaque*, p. 151.

<sup>57</sup> *Les Gestes des Chiprois*, p. 662; Cl. Mutafian, նշվ. աշխ., էջ 41: Լևոնի թագադրության և այդ արարողությանը ներկա իշխանների ցուցակի մասին տե՛ս Սմբատայ սպարապետի տարեգիրք, Վենետիկ – Ս. Ղազար, 1956, էջ 208-210:

<sup>58</sup> S. Der Nersessian, նշվ. աշխ., էջ 647:

<sup>59</sup> Օրինակ Լևոնի կողմից Ամուդայի նվիրատվությանը վերաբերող փաստաթղթում՝ 1212 թ. ապրիլին. « Ego Leo, Dei et romani imperii gracia rex Armenie ».– E. Strehlike, նշվ. աշխ., էջ 37, թիվ 46:

<sup>60</sup> Մահմեդականների ռազմակալման ժամանակաշրջանում Վիլբրանդ Օլդենբուրգցին նախ զնացել է Երուսաղեմ, այնուհետև պետք է հանդիպեր Կիլիկյան Հայաստանի և Կիպրոսի թագավորներին: Գերմանացի կանոնիկոսի ճանապարհորդության մասին տե՛ս Պ. Հալֆթերի շատ հանգամանակից հողվածները. P. Halfter, *Die Beschreibung des Ar-*

լատրել է ամրապնդել հայոց թագավորի և նրա գերիշխանի միջև գոյություն ունեցող կապերը, հավասարակշռելով, այսպիսով, վերոնշյալ ժամանակաշրջանում Անտիոքի ժառանգության շուրջ Լևոնի և պապականության միջև ծագած անհաճո փոխհարաբերությունները: Կայսրի պատվիրակն իր «ճանապարհորդության» նախաբանում հաղորդում է, որ այդ ճանապարհորդության ընթացքում իրեն ուղեկցում էր տևտոնական միաբանության ղեկավար Յերման դը Սալզան<sup>61</sup>: Նա հաղորդում է Ռայմոնդ-Ռուբենի թագադրությանը վերջինիս, ինչպես նաև հիվանդախնամներին պատկանող Սելեուս անառիկ ամրոցի տիրակալի ներկայության մասին<sup>62</sup>, մի արարողություն, որը տեղի է ունեցել 1212 թ., Աստվածահայտնության օրը: Վիլբրանդն իր պատմության մեջ նկարագրում է Կիլիկիայում ասպետական միաբանություններին պատկանող բազմաթիվ դղյակների և տիրույթների, իսկ ավելի մասնավորապես՝ տևտոնականների սեփականությունը հանդիսացող Գունբեթֆորթի և Անուդայի վայրերը<sup>63</sup>: Քիչ անց, 1212 թ. ապրիլին, Լևոնն այս տիրույթները, ինչպես նաև այլ գյուղեր, մի հրովարտակով<sup>64</sup> նվիրաբերել է գերմանացիների Սուրբ Մարիի միաբանությանը, որը ոչ պաշտոնական ձևով դրանց մի մասի վրա արդեն հաստատել էր իր տիրապետությունը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես Անուդա ամրոցի պարագային, քանզի 1209 թ. հունիսի 27-ին Իննոկենտիոս Գ պապը վավերացրել էր Գունբեթֆորթ և Այուն գյուղերի՝ նախօրոք արված նվիրատվությունը<sup>65</sup>: Այսպիսով, կարելի է դրանից հետևության հանգել այն խիստ դրական ազդեցության մասին, որը գերմանացիների կայսրի դեսպանություն-

---

menischen Königreiches Kilikien durch den Hidesheimer Domherren Wilbrand von Oldenburg.– Չայաստանը և քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 402-421; *Առյճի* Eine Beschreibung Kilikiens aus westlicher Sicht. Das Itinerarium des Wilbrand von Oldenburg.– Oriens Christianus, Hefte für die Kunde des christlichen Orients, Bd. 85, 2001, S. 176-203:

<sup>61</sup> **Willbrandi de Oldenburg**, “Peregrinatio, iterum edita”.– Peregrinatores medii aevi quatuor, Buchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii et Wilbrandus de Oldenburg. Ed. par *J. C. M. Laurent*, Lipsiae, 1864, p. 162.

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 176, 179: Ի շարս ասպետական միաբանություններին պատկանող այլ ամրոցների, նա նկարագրում է Պաղրասը (բնագրում՝ «Գաստինը»), որի պատճառով Լևոնը և տաճարականներն առճակատման մեջ էին (էջ 174):

<sup>64</sup> **V. Langlois**, *Le Trésor des Chartres d’Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, Venise, 1863, p. 117-120; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; **K. Forstreuter**, *Der Deutsche Orden am Mittelmeer* (Quellen und Studien zur Geschichte des Deutschen Ordens, Bd. 2), Bonn, 1967, S. 234. 8-րդ գլուխը վերաբերում է Կիլիկյան Չայաստանին (էջ 59-67), իսկ հավելվածում (էջ 234-237) կարելի է գտնել հրովարտակների մասնակի հրատարակությունը, որը սրբագրում է Շտրելկեի հրատարակությունը:

<sup>65</sup> **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 266-269, թիվ 298:

ներն ունեին Կիլիկիայում տևտոնական ասպետների տիրույթների ընդարձակման և օրինականացման խնդրում:

Լևոն I-ի փեսայի ու հաջորդի՝ Յեթում I-ի օրոք շարունակվում է կայսերամետ քաղաքականությունը<sup>66</sup>, և տևտոնական միաբանությունը, ըստ այդմ, շարունակում է օգտվել դրա բարերար հետևանքներից: Հիրավի, խաչակրաց վեցերորդ արշավանքի ժամանակ, 1212 թ., հայոց թագավորը սատարում էր Ֆրիդրիխ III Յոհենշտաուֆենին<sup>67</sup>, չնայած Պապի բանադրանքին, և հետևաբար, տաճարականների<sup>68</sup> ու հիվանդախնամների՝ իր դեմ ուղղված բողոքին և անգամ ընդդիմությանը, մի դիրքորոշում, որը բնորոշ էր տևտոնականներին, որոնց ներկայությունը կայսրի շրջապատում խիստ զգալի էր: Փոխարենը, հայոց թագավորներն օգտվում էին կայսրի և նրա կողմնակիցների աջակցությունից, որոնց առաջին շարքերում էին տևտոնական ասպետները: Վերջիններս բազում անգամներ աչքի են ընկել ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական ասպարեզներում: Հավանաբար, 1212 թ., իբրև Լևոնի դեսպանի՝ Գարնիե անունով նրանցից մեկին<sup>69</sup> ուղարկել են Պապի մոտ՝ Անտիոքի շուրջ ծագած խնդրի հարցում հայոց թագավորին և նրա եղբոր թոռանը սատարելու համար: Միևնույն առճակատման առիթով, Իննոկենտիոս Գ-ն 1209 թ. հունիսին Լևոն թագավորին հղած մի նամակում<sup>70</sup>, հաղորդում էր Տարսուհի արքեպիսկոպոսից և տևտոնական հիվանդանոցի եղբայրներից ստացված նամակների մասին, որոնցում ընդգծվում էր հայոց գահակալի իրական դիրքորոշումը: Չապել թագուհու ամուսնու՝ Անտիոքի իշխան Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի բանտարկության ընթացքում, որին կալանավորել էր թագավորության ժամանակավոր կառավարիչ Կոստանդին ղը Պապեռոնը, տևտոնական միաբանությունը վերջինիս թույլատրել է ավելի քան երկու տարի Սուլեմ կալանավորված բանտարկյալին տե-

<sup>66</sup> Գերմանացիների կայսրերի և հայոց գահակալների փոխհարաբերությունների մասին տե՛ս Պ. Հալֆթերի հոդվածը՝ **P. Halfter**, Die Staufer und Armenien.– Von Schwaben nach Jerusalem. Facetten staufischer Geschichte, Sigmaringen, 1995 (Veröffentlichungen des Alemannischen Instituts N 61), S. 187-208:

<sup>67</sup> **J. S. C. Riley-Smith**, The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia.– **T. S. R. Boase**, նշվ. աշխ., էջ 92-117:

<sup>68</sup> Les Gestes des Chiprois, p. 683.

<sup>69</sup> Տարեթիվն առաջադրել է Վ. Լանգլուան. տե՛ս **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 51: Ղ. Ալիշանը նշում է, որ Գարնիեն գնացել է ոչ միայն Պապի, այլև Ֆրանսիայի թագավորի մոտ: Այդուհանդերձ, այդ դեսպանության հետ կապված նրա հիշատակած տարեթիվը (1201 թ.) զանազանվում է Լանգլուայի առաջադրած տարեթիվից: Տե՛ս **L. Alishan**, Léon le Magnifique, premier roi de Sissouan ou de l'Arménocilicie. Trad. par le *P. Georges Dayan*, Venise–St. Lazare, 1888, p. 138, n. 1 et p. 228:

<sup>70</sup> **Innocent III.**– *PL*. XLV, cols. 54-56.

ղափոխել Ամուդա, այն ամրոցը, որտեղ, ըստ հակոբիկյան ժամանակագիր Բար Յեբրեոսի՝ հայերը նրան թունավորել են<sup>71</sup>:

Այս բազմաթիվ օրինակները վկայում են, որ տևտոնական միաբանությունը ներգրավվել է Կիլիկիայի հայկական տարբեր կառավարությունների վարած քաղաքականության պաշտպանության գործում, ինչը երբեմն հակասել է ասպետական այլ միաբանությունների դիրքորոշմանը և Պապի կամքին: Լևոն I-ի, ժամանակավոր կառավարիչ Կոստանդինի և Յեթում I-ի նկատմամբ տևտոնական ասպետների գրաված դիրքորոշումը փոխհատուցվել է Կիլիկիայում նրանց միաբանությանն արված նշանակալից տիրույթների նվիրատվությամբ:

#### *Բ – Յողային տիրույթների զիջումը*

Գերմանացիների Սուրբ Սարիի հիվանդանոցի հաստատումը Կիլիկյան Յայաստանում պետք է, որ շատ արագ տեղի ունեցած լիներ, դրա՝ ասպետական միաբանության վերածվելուց հետո, քանզի 1209 թ. ի վեր, Իննոկենտիոս Գ-ի կոնդակը վավերացրել է այն երկու տիրույթ՝ Գունբեթֆորթը և Այունը<sup>72</sup>, որոնք Կիլիկյան Յայաստանում տևտոնականներին էին պատկանում հայտնի չէ, թե որքան ժամանակից ի վեր:

Տևտոնական ասպետներին նվիրաբերված տիրույթները սահմանագծված են մեծ ճշգրտությամբ, ինչը դրանց բնորոշ առանձնահատկությունն է: Յիրավի, բոլոր սահմանները, որոնք նշված են զանազան տարբերանշաններով, ինչպիսիք են ժայռերը, խաչերը, քարանձավները, ծառերը և, բացի դրանից, ջրի բարձրության մակարդակը, սահմանված են ճշգրտորեն<sup>73</sup>, ինչը Վիկտոր Լանգլուային դրդել է նշել, որ Լևոն I-ի օրոք Կիլիկիայում արդեն իրականացվում էին կադաստրային աշխատանքներ<sup>74</sup>:

Ինչ վերաբերում է անշարժ ունեցվածքին, ապա այս տիրույթները բաղկացած էին դոյակներից, ինչպիսին էր Ամուդայի դոյակը (վերջինս գտնվում էր Ջեյհան գետի մոտակայքում, Յարունիեից հարավ-արևելք և Ամանոսյան դռներից արևմուտք. դրա գտնվելու վայրը թույլատրում

---

<sup>71</sup> The Chronography of Gregory Abū'l Faradj, the son of Aaron, the Hebrew physician commonly known as Bar Hebraeus being the first part of his political history of the world, trad. ang. du syriaque par E.-A. Wallis Brudge, 2 vol., London, 1932, p. 381 (այսուհետև՝ **Bar Hebraeus**); **J. Riley-Smith**, նշվ. աշխ., էջ 113:

<sup>72</sup> **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 266-269, թիվ 298:

<sup>73</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 117-120; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46:

<sup>74</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 82:

եր մաքսատուրքեր գանձել Սսի և Ամանոսի լեռնանցքների միջև տեղաշարժվող ճանապարհորդներից)<sup>75</sup>, որի՝ միաբանությանը նվիրաբերելուն վերաբերող հրովարտակը ստորագրվել էր 1212 թ. ապրիլին<sup>76</sup>, բայց որի՝ տևողական կազմակերպությանն արդեն պատկանելու հանգամանքը Կիլբրանդ Օլդենբուրգին հիշատակում է Կիլիկիա կատարած իր այցելության ժամանակ (1210-1211 թթ.)<sup>77</sup>, քաղաքներից, խոսքը վերաբերում է, մասնավորապես Յարունիե քաղաքին (VII դ. վերջերին Յարուն ալ-Ռաշիդի կառուցած Յարունիե բերդամրոցը գտնվում էր Մարաշի և Կիլիկյան դաշտավայրերի միջև կապ հաստատող ճանապարհի վրա. Ամանոսյան դռների հյուսիս-արևմուտքում գտնվող այս ամրոցը չէր վերահսկում մոտակա մատույցները)<sup>78</sup>, որը Յեթում I-ն ու Ջապելը զիջել էին 1236 թ. հունվարի 22-ին<sup>79</sup>, արքայություններից (Նախորդ փաստաթղթով միաբանությանն էին նվիրաբերվում երեք արքայություն՝ Յովտի, Սուրբ Մամասի և Սոգրի)<sup>80</sup>, բազմաթիվ գյուղերից<sup>81</sup> ու ջրաղացներից<sup>82</sup>: Ինչ վերաբերում է հողային տարածքներին, ապա դրանք բաղկացած էին մշակելի հողերից, ճահճոտ անմշակ հողերից, մարգագետիններից, լեռներից, բլուրներից, հարթավայրերից, պտղաբեր այգիներից և այլն<sup>83</sup>: Այս տիրույթները գտնվում են Կիլիկիայի

<sup>75</sup> Հմմտ. **K. Molin**, *Unknown Crusader Castles*, Haambledon & London, London & New-York, 2001, p. 161:

<sup>76</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 117-120; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 234:

<sup>77</sup> **Willbrandi de Oldenborg**, նշվ. աշխ., էջ 179:

<sup>78</sup> Հմմտ. **R. W. Edwards**, նշվ. աշխ., էջ 43; **H. Hellenkemper**, *Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien*, Bonn, 1976, S. 119:

<sup>79</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>80</sup> Նույն տեղում:

<sup>81</sup> Ըստ 1212 թ. ապրիլի նվիրատվության՝ Սեսփին (ըստ՝ Վ. Լանգլուայի և Ե. Շտրեյկեի) կամ Սելփին (ըստ՝ Կ. Ֆորշթրյոյթերի. տե՛ս **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 234), Բուքուեքիա (Բուչեքուիա), Գունբեթֆորթ և Այուն գյուղերը, իսկ ըստ 1236 թ. հունվարի նվիրատվության՝ Լայան (Լուլիամ), Կոստիոնս (Գուստեգենաշ), Գոսբուին (Կոսբուին), Չերրարեն, Չաչորին (Չաչորին), Կենչեքիս (Կամթեքիս), Աղեշենոն, Պաղրաս (Գաստիմ), Սուրբ Դանիել, Դավենին (Դաբենին), Սաարգագու, Սուրբ Թորոս, Սև Ավերակ (Սիեոերագ), Բերդ, Քուխանգ (Քուխոգ), Տելագր (Տելագու), Մոտրիգու (Մուտրիգու), Դրանք, Գյունենշ (Գյունենոշ), Յաշուդագր (Յաշուդագ) գյուղերը: Հմմտ. **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 117-120, 141-143; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46, էջ 65-66, թիվ 83: Հմմտ. Կ. Ֆորշթրյոյթերի սրբագրած տարբերակը՝ **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 234-236:

<sup>82</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>83</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 117-120, 141-143; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46, էջ 65-66, թիվ 83; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 235-236:

հյուսիս-արևմտյան սահմանագծի վրա և վերջին՝ Չարունիեի նվիրատվությունը շատ ավելի պաշտպանողական բնույթ ունի, քանզի այն գտնվում է Ամանոսյան դռների և Սարվանդիքար ամրոցի մոտակայքում: Սարվանդիքարի իշխանական տարածքում տևողականներն ունեին մաքսային կետ:

Նվիրատվությունները հաճախ ուղեկցվում էին հարկերից ազատված լինելուն առնչվող առանձնաշնորհումներով: Հիրավի, Լևոն I-ի հրովարտակը գերմանացիների Սուրբ Մարիի միաբանության եղբայրների համար՝ թագավորին և նրա հպատակներին պատկանող բոլոր տարածքներում նախատեսում էր առանց հարկեր վճարելու այն ամենը գնելու և վաճառելու ազատություն, ինչն անհրաժեշտ էր իրենց կազմակերպության համար, անկախ այն բանից, թե խոսքն ինչին էր վերաբերում՝ մթերքների, հեծնելու անասունների, թե հեծելասարքերի<sup>84</sup>: Ինչ վերաբերում է Լևոնի եղբոր թոռանը՝ Ռայմոնդ-Ռուբենին, ապա 1219 թ. մարտին նա միաբանության անդամներին թույլատրում է իրենց ունեցվածքով ծովով ու ցամաքով անկաշկանդ տեղաշարժվել Անտիոքի իշխանությունում և իր տարածքում նրանց հատկացնում նաև զնուններ և վաճառքներ կատարելու հարցում հարկերից ազատված լինելու իրավունք<sup>85</sup>:

Ծառանում է մի խնդիր. հարկ է իմանալ, թե արդյո՞ք ասպետական միաբանության եղբայրները Կիլիկիայում ծավալել էին հիվանդանոցային գործունեություն և ունեին հիվանդանոցային շինություններ: Իրոք որ, ինչպես հիվանդախնամները՝ տևողականները ևս ի սկզբանե ստանձնել էին միմիայն հիվանդանոցային պարտականություն և ինչպես նախորդների գործունեության պարագայում, սկզբնական շրջանում հիվանդանոցային հաստատությունը բարեշրջվել է և ռազմականացվել, ամբողջությամբ պահպանելով իր գործունեության հիվանդանոցային բնույթը<sup>86</sup>: Այդուհանդերձ, Կիլիկյան Չայաստանում նրանց զիջված ավատներն ունեին նախ և առաջ հստակորեն նախանշված ռազմական նշանակություն, որն առավել ևս ակնհայտ էր, քանզի դրանք գտնվում էին Կիլիկիայի սահմանագծերից մեկի վրա: Լևոն I թագավորը նույնիսկ հղում էր Հին կտակարանը՝ տևողական հիվանդանոցն Իսրայելի տունը պաշտպանող մակաբայեցիների հետ համեմա-

<sup>84</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>85</sup> E. Strehlke, նշվ. աշխ., էջ 41-42, թիվ 51:

<sup>86</sup> Հմնտ. K. Militzer, The Role of Hospitals in the Teutonic Order, p. 51-59.– H. Nicholson (ed.), The Military Orders, vol. 2. Welfare and Warfare, Ashgate, Aldershot, 1998 (այսուհետև՝ H. Nicholson, Military Orders); B. Demel, Welfare and Warfare in the Teutonic Order: a Survey.– H. Nicholson, նշվ. աշխ., էջ 61-73:



տելու համար: Ասպետական միաբանությունների զուգորդումը մակաբայեցիների հետ կրկնվում էր խաչակիրների դարաշրջանի ժամանակագրություններում՝ Աստծո անունից հրահրելով մի պայքար, որի ընթացքում իրեն զգալ էր տալիս աստվածային հզորությունը: Բոլոր ասպետական միաբանությունների ասպետներն ամբողջությամբ նույնանուն էին Հին կտակարանի այդ ռազմատենչ ընտանիքի՝ հայր Մատաթիայի, նրա որդիների, որոնց թվում՝ Յուդա Մակաբայեցու՝ Անտիոքոս IV Եպիփանեսի դեմ ուղղված հրեաների ապստամբության զինվորական առաջնորդի հետ: Նրա զոհաբերությունը նմանեցվում է քրիստոնեական առաջին նահատակների զոհաբերությանը: Մակաբայեցիների թեման ամփոփում է սերտորեն առնչվող երկու հանգամանք. հանուն Աստծո գործի նահատակվելու պատրաստ զինվորի, ինչպես նաև այն գաղափարի՝ ըստ որի, հաղթանակի հասնելու համար հարկ է անմնացորդ նվիրաբերվել Աստծոն և չապավինել միայն սեփական ուժերին: Աստծո հանդեպ հավատ տածելու դեպքում՝ սակավաթիվ անձինք կարող են հաղթել մեծ բանակների: Այսպիսով, Յուդա Մակաբայեցին դարձել է խաչակրի և ասպետական միաբանությունների նոր ասպետության մոդել<sup>87</sup>, որոնց առիթով Հեթում I-ն ասել է. «Նրանք հայտարարել են, որ ինչպես իսկական եղբայրներ ու անբաժանելի բարեկամներ պաշտպանելու են մեզ և նեցուկ են լինելու մեր թագավորությանը՝ դրան պատկանող բոլոր տարածաշրջաններում»<sup>88</sup>:

Կիլիկիայում միաբանության տիրույթները միշտ չէ, որ արժանանում էին տեղական բոլոր իշխանների հավանությանը: Հիրավի, 1271 թ. Սարվանդիքար ամրոցի տիրակալ Կոստանդինի և տևտոնականների միջև կնքվում է մի համաձայնություն՝ ճանապարհներից գանձվող մաքսային կեսի վերաբերյալ<sup>89</sup>, որը եղբայրները հաստատել էին Հարունիեի և Սարվանդիքարի սահմանագծի վրա<sup>90</sup>՝ առանց խորհրդակցելու վերջին ամրոցի տիրակալի հետ: Փոխզիջումը գտնվել է բազում տարիներ տևած անհամաձայնությունից հետո միայն՝ շնորհիվ 1256-1273 թթ.

---

<sup>87</sup> V. Langlois, *ԳՂՎ. աշխ.*, էջ 117-120; E. Strehlke, *ԳՂՎ. աշխ.*, էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, *ԳՂՎ. աշխ.*, էջ 234: Հմմտ. A. Demurger, *Chevaliers du Christ. Les ordres religieux-militaires au Moyen Age, XI<sup>e</sup>-XVI<sup>e</sup> siècles*, Paris, 2002, p. 188-189:

<sup>88</sup> V. Langlois, *ԳՂՎ. աշխ.*, էջ 141-143; E. Strehlke, *ԳՂՎ. աշխ.*, էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, *ԳՂՎ. աշխ.*, էջ 235:

<sup>89</sup> Փաստաթուղթը հրատարակել է Ղ. Ալիշանը. տե՛ս Սիսուան համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի հ. *Ղեւոնդեայ Վ. Ս. Ալիշան*, Վենետիկ – Ս. Ղազար, 1885, էջ 210; *RHC, DA*, t. II, p. 840, note d. Տե՛ս նաև K. Forstreuter, *ԳՂՎ. աշխ.*, էջ 236-237:

<sup>90</sup> J. Riley-Smith, *ԳՂՎ. աշխ.*, էջ 114:

տևտոնականների առաջնորդ Աննո դը Սանգերհաուզենի միջամտության, երբ մաքսային կետը տեղափոխվել է Սև Աշտարակ կոչվող վայրը՝ և եղբայրները շարունակել են օգտվել ճանապարհներից մաքս գանձելու իրավունքից:

*Գ – Հայոց թագավորների և տևտոնականների Սուրբ Սարիի միաբանության միջև հաստատված անձնական կապերը*

Միջնադարում ասպետական միաբանությունների, այն է՝ տաճարականների, հիվանդախնամների և տևտոնականների ներկայությունը Կիլիկիայում բարյացակամ ընդունելության է արժանացել բարձրաստիճան հայ ազնվականության շրջանում և, մասնավորապես թագավորի շրջապատում: Այդ կապերի հաստատումը, որը զուգակցվում էր արքունիքի և թագավորության հաստատությունների հարաճուն լատինացման հետ, որոշ խոշոր իշխանների, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի երկու ամենահզոր թագավորներին, դրդել է ընդգրկվել ասպետական միաբանությունների համաեղբայրության մեջ:

1170-1175 թթ. Կիլիկիայում բռնակալական մեթոդներով իշխող հայոց իշխան Մլեհը, սկսած 1160-ական թվականներից, անդամակցել է տաճարականների միաբանությանը<sup>91</sup>, որը լքել է մեզ անհայտ պատճառներով և իշխանության հասնելուց հետո նրանց վտարել Կիլիկիայից:

Ինչ վերաբերում է նշանավոր ամրոց Լամբրոնի երկու իշխանին՝ Հեթուն III-ին (1151-1218), որը դարձել է վանական և նրա որդի Կոստանդին I-ին (1180-1250), ապա նրանք Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդախնամների միաբանության «միաբաններն» էին<sup>92</sup>:

1201 թ. Պաղրաս բերդամրոցին տիրանալու առիթով տաճարա-

---

<sup>91</sup> Willelmi Tyrensis chronicon. Ed. R. B. C. Huygens, 2 vol., CCCM, 63-63a; Turnhout, 1986, livre XX, p. 948-950; **Giacomo Bosio**, Dell'istoria della Sacra Religione et illustrissima militia di San Giovanni gierrosolimitano, 3 tomes en 2 volumes, Roma, 1594-1604; trad. Histoire des chevaliers de Saint-Jean, 2 vol., Paris, 1629, p. 11-12; **L. Alishan**, նշվ. աշխ., էջ 52-53:

<sup>92</sup> **J. Delaville Le Roulx**, Inventaire des pièces de Terre sainte de l'ordre de Saint-Jean de Jérusalem.– § Revue de l'Orient latin I, 3, 1895, p. 67, N 281; p. 69, N 284; **C. Toumanoff**, Les dynasties de la Caucasic chrétienne, de l'Antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle. Table généalogiques et chronologiques, Rome, 1990, tableau 56, p. 280.

կաննների հետ արդեն առճակատման մեջ գտնվող Լևոնն<sup>93</sup> առաջարկել է նրանց միաբանությանը Պաղրաս բերդամրոցը զիջելու դիմաց ստանձնել իր եղբոր թոռան՝ Ռայմոնդ-Ռուբենի կրթության գործը, որին համարում էր իր ժառանգորդը: Բացի դրանից, հաշտության շուրջ համաձայնության կայացման այդ նույն առաջարկության ժամանակ, իր և իր եղբոր թոռան անունից՝ թագավորը դիմել է տաճարականների միաբանությանը՝ համաեղբայրության մեջ ընդգրկվելուն առնչվող խնդրանքով, որը դրա անդամները մերժել են, որպեսզի իրենց պահանջների օրինականությունը բացասման վտանգի չենթարկվի, ինչին դա կարող էր հանգեցնել<sup>94</sup>:

Սակայն այն միաբանությունը, որի հետ հայոց թագավորներն առանձնահատուկ փոխհարաբերություններ էին պահպանում՝ տևտոնականների Սուրբ Սարիի միաբանությունն էր: Իրոք որ, Լևոն I-ը՝ Կիլիկյան Հայաստանի առաջին թագավորը, տևտոնականների միաբանության «միաբանն» էր, ինչպես ինքն է այդ առիթով նշել 1212 թ. ապրիլին՝ միաբանությանը հղած նվիրատվական հրովարտակում. «omnium venerabilibus et religiosis fratribus sancte domus hospitalis teutonicorum [...] de quorum sum confraternitate»<sup>95</sup>: Հավանաբար, նույնը վերաբերում է նաև Հեթում I թագավորի (1226-1269) պարագային, որն իր հրովարտակում ճշգրտում է. «Այդ սուրբ կազմակերպության՝ Աստօն կացարանի համար է, որ մենք հայտարարում ենք և ցանկանում ենք այս պահից ի վեր մասնակցել դրա բոլոր բարեգործություններին»՝ հավաստելով, այսպիսով, միաբանության կազմում գործելու իր ցանկությունը:

Ասպետական միաբանության կազմում որևէ մեկի՝ իբրև «միաբանի» ընդունելությունը հանգեցնում էր նվիրատվության կամ տարեկան ռենտայի<sup>96</sup>: 1212 և 1236 թվականներին կազմված նվիրատվական հրովարտակներն անվարանորեն մասամբ առնչվում էին հայոց գահակալների՝ տևտոնական համաեղբայրության մեջ ընդգրկվելուն:

Գերմանական համալրում ունեցող ասպետական միաբանության հետ այս մերժեցումները, հավանաբար, իրականացվել են նաև գեր-

---

<sup>93</sup> Տաճարականների և Կիլիկիայի հայկական թագավորության փոխհարաբերությունների մասին տե՛ս J. Riley-Smith, նշվ. աշխ., էջ 92-117: Տե՛ս նաև՝ սույն ժողովածուի I զվուխը:

<sup>94</sup> Innocent III.— PL. XLIII, cols. 1005-1006. Պատճառն այն է, որ ըստ Ջ. Ռիլեյ-Սմիթի՝ Պաղրասին առնչվող իրենց պահանջները Պապի քննությանը ներկայացնելը հանգում էր դրանց օրինականությունը հարցականի ներքո դնելուն (J. Riley-Smith, նշվ. աշխ., էջ 102):

<sup>95</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 234:

<sup>96</sup> A. Demurger, նշվ. աշխ., էջ 107:

մանացիների կայսրերին սիրաշահելու ծածուկ նպատակով, ինչը բացատրում է նաև հայոց թագավորների՝ տևտոնականների, այլ ոչ թե հիվանդախնամների միաբանության ասպետների համաեղբայրության մեջ ընդգրկվելուն առնչվող ընտրությունը, որն օգտվում էր շատ ավելի կարևոր նվիրատվություններից, և որի հետ Կիլիկիայի գահակալները գերազանց փոխհարաբերությունների մեջ էին ու կարող էին ակնկալել դրա անվերապահ աջակցությունը թե՛ մարտի դաշտում և թե՛ միաժամանակ դիվանագիտական ասպարեզում:

Ի տարբերություն այլ միաբանությունների՝ ազգային համալրում ունեցող գերմանացիների Սուրբ Մարիի միաբանությունը թույլատրել է, հետևաբար, մշտական կապ պահպանել գերմանացիների կայսրերի և հայոց թագավորների միջև: Թե՛ այդ և թե՛ հայ ղեկավարների հանդեպ ունեցած նրանց անսասան հավատարմության պատճառով տևտոնականները կարողացել են օգտվել Կիլիկիայում ռազմավարական որոշակի կարևորություն ունեցող նվիրատվություններից, որոնք նրանց թույլատրում էին, այսպիսով, պաշտպանել այդ երկիրը ներխուժումներից: Նրանք չեն բավարարվել այդ առաքելության իրականացմամբ և ստանձնել են նաև հայոց թագավորների պաշտպանությունը թե՛ Պապի մոտ՝ նրանց չարախոսողներից և թե՛ ժառանգության շուրջ ծագած վեճերի ընթացքում Անտիոքի իշխաններից, անկախ այն բանից, թե ինչին էր վերաբերում խոսքը՝ Անտիոքի իշխանությանը, թե Կիլիկիայի հայոց թագավորությանը: Միաբանության հանդեպ հայոց թագավորների երախտագիտությունը դրսևորվել է այն բանում, որ նրանցից առաջին երկուսն անդամակցել են տևտոնական համաեղբայրությանը, մի ընտրություն, որն, անկասկած, քաղաքական բնույթ ուներ, բայց վկայում էր նաև այն հարգալից վերաբերմունքի մասին, ինչն ի հայտ էր գալիս եղբայրների իրականացրած ռազմական և հիվանդանոցային գործունեության հանդեպ:

### ԳԼՈՒԽ III

#### ՀՈԳԵՎՈՐԱՍՊԵՏԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՐԵՎԵԼԵՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ (ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՍՈՐՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ (XII ԴԱՐԻ ՍԿՁԲԻՑ ՄԻՆՉԵՎ XIV ԴԱՐԻ ՍԿԻՁԲԸ)

Ասպետական միաբանությունների, մասնավորապես դրանցից երկուսի՝ տաճարականների և Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդանոցի ավելի վաղ ներկայությունն Անտիոքի իշխանությունում, Կիլիկիայի հայկական իշխանությունում և Եդեսիայի կոմսությունում նպաստել է դրանց անդամների և Արևելքի քրիստոնյաների միջև կապերի հաստատմանը: Արևելքի լատինական պետությունների հարևան Կիլիկիայան Հայաստանը որոշ չափով գտնվում էր դրանց ազդեցության ոլորտում: Այն որդեգրել է դրանց որոշ սովորույթները, հիմնադրել ավատատիրական կազմակերպություն, հաստատել լատինական դիվան և փոխառել ֆրանկների կողմից սպաներին տրվող որոշ տիտղոսներ, ինչպիսիք են մարեշալի և սպարապետի տիտղոսները: Այս փոփոխությունների գերակշռող մասը, թվում է, թե իրականացվել է Լևոն I-ի թագավորության օրոք<sup>97</sup>: «Անտիոքի ասիզները», որոնք մինչև 1266 թ. հայերենի է թարգմանել Սմբատ սպարապետը<sup>98</sup>, նույնպես օգտագործվել են թագավորությունում: Չնայած այս էական փոփոխություններին, հայկական արքունիքը պահպանել է իր ինքնությունն ու առանձնահատկությունները: Կիլիկիան Հայաստանում բարեհաճ ընդունելության է արժանացել, մասնավորապես գերմանացիների կայսրերի հովանուները գտնվող տևոնական միաբանությունը, քանզի Լևոն I-ը թագավորական գահը ստացել էր կայսրից՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադի

---

<sup>97</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ. 19, 30-31, 40-52; Cl. Mutafian, նշվ. աշխ., էջ. 45: Լևոնը (1150-1219), որը Ռուբինյան հարստությունից էր, 1187-1198 թթ. Կիլիկիան Հայաստանի իշխանն էր, իսկ 1198 թ. հունվարին դարձել է այս երկրի առաջին թագավորը: Նա թագավորել է մինչև իր վախճանը՝ 1219 թ.:

<sup>98</sup> *Assises d'Antioche*, trad. française et texte établis par L. Alichan, Venise-Saint-Lazare, 1876. Սմբատը (1206/8-1275) հայոց թագավոր Հեթում I-ի եղբայրներից էր, որը վարում էր թագավորության սպարապետի պաշտոնը:

միջնորդությամբ<sup>99</sup>: Ասպետական մյուս միաբանությունները չեն ընդգրկվում մեր ուսումնասիրության շրջանակում, թեպետ դրանց, մասնավորապես Սուրբ Ղազարի միաբանության պատմությունը, ամենևին զուրկ չէ հետաքրքրությունից: Մենք ունենք Արևելքի քրիստոնյաների բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնց հեղինակները, մասնավորապես նրանցից ոմանք, ցուցաբերել են որոշակի հետաքրքրություն այս միաբանությունների հանդեպ: Մեր տրամադրության տակ կան ժամանակագրություններ, պատմություններ, ժամանակագրական աղյուսակներ, հիշատակարաններ, ծիսական աշխատություններ, Հայոց եկեղեցուն նվիրված աշխատություններ, եղերերգություններ, ինչպես նաև լատիներեն տառերով (*latinisante*) գրված սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են դիվանագիտական փաստաթղթերը և հայոց արքունիքից էլնող՝ այս թեմային ամչվող այլ գրություններ, որոնք պատրաստվում ենք քննարկել: Բացառությամբ ասորի երեք ժամանակագրի՝ Միխայել Ասորու<sup>100</sup>, Անանուն Եղեսացու<sup>101</sup> և Բար Չեբրեոսի<sup>102</sup>, Արևելքի քրիստոնյա բոլոր հեղինակները, որոնց պատրաստվում ենք հղել՝ հայեր են: Նրանք հաշվի են առնում խաչակրաց առաջին արշավանքի հաջորդ օրն Արևելքի լատինական պետություններում, ինչպես նաև Անտիոքի իշխանու-

---

<sup>99</sup> Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադը միաժամանակ կայսերական ջանցլերն (*chancelier*) էր և Պապի նվիրակը: Հայնրիխ VI կայսրի վախճանից հետո, թագ ստանալու համար Լևոնը դիմել է նրան:

<sup>100</sup> Միխայել Ասորին եղել է Անտիոքի հակոբիկյան համայնքի պատրիարքը (1166-1199): Նրա աշխատությունների թվում է համընդհանուր պատմությանը նվիրված մի ուսումնասիրություն, որն ավարտին է հասնում 1195 թ. (*Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche* (1166-1199), éd. et trad. par *J. Chabot*, t. III, Paris, 1905) (այսուհետև՝ **Michel le Syrien**):

<sup>101</sup> «Անանուն Եղեսացին» ունի բազմաթիվ աշխատություններ, որոնցից են «Հոգևոր իրադարձությունների գիրքը» և «Քաղաքացիական ժամանակագրությունը»: Վերջին աշխատությունը, որը սկիզբ է առնում VIII դարի իրադարձություններից, հեղինակն ավարտին է հասցրել 1237 թ. հետո, սակայն, մեզ հասել է մինչև 1234 թ. ընդգրկող ժամանակաշրջանի շարադրանքը: Այդուհանդերձ, այս ժամանակագրությունը, թվում է, թե պատկանել է երկու հեղինակի, որոնցից առաջինը եղել է մի հոգևորական Եղեսիայից, որը կարող էր բնակվել Բարսումայի վանքում: Հմմտ. **M. Amouroux-Mourad**, *Le Comté d'Edesse*, 1098-1150, Paris, 1988, p. 3-4:

<sup>102</sup> Գրիգոր Աբու-Ֆարաջը, որին անվանում են Բար Չեբրեոս, ծնվել է Սալաթիայում, այնուհետև ապրել լատինական պետություններում և Կիլիկիայում, հետո մեկնել է Միջագետք և Ատրպատական, որտեղ 1264 թ. հասել է մափրիանի՝ Անտիոքի պատրիարքարանի արևելյան կողմի մեծ մետրոպոլիտի (հակոբիկյան) աստիճանի: Նա ունի կրոնական մի ժամանակագրություն (*The Chronography of Gregory Abū'l Faradj, the son of Aaron, the Hebrew physician commonly known as Bar Hebraeus being the first part of his political history of the world*, trad. ang. du syriaque par *E.-A. Wallis Brudge*, 2 vol., London, 1932) և մի ժամանակաբանություն: Նա վախճանվել է 1286 թ.:

թյան արևմտյան սահմանում գտնվող Կիլիկիայի հայկական պետությունում հաստատված հոգևորասպետական միաբանություններին առնչվող իրադարձությունները: Այս հեղինակների աշխարհագրական տեղայնությունը տատանվում է ըստ նրանց դավանանքների: Ասպետական այս միաբանությունների մասին հիշատակող հայերը սերում են առավելապես Կիլիկյան Հայաստանից, իսկ հակոբիկյան դավանանքի ստորի ժամանակագիրների գերակշռող մասը ծագումով Եդեսիայի կոմսությունից է: Այս հեղինակները որոշակիորեն ծանոթ են եղել հոգևորասպետական միաբանություններին. ըստ այս կամ այն հեղինակի՝ այդ ծանոթությունը եղել է փոքրիշատե ստույգ, քանզի 1130-ական թվականներից ի վեր, ասպետական այս միաբանությունների անդամներին կարելի է հանդիպել Եդեսիայի կոմսությունում և Անտիոքի իշխանությունում<sup>103</sup>:

Այն, թե ինչպես են Արևելքի քրիստոնյա հեղինակները ներկայացնում ասպետական միաբանությունները<sup>104</sup>, մեզ մղում է խորհելու բազմաթիվ խնդիրների շուրջ. ինչպե՞ս են հայ և ասորի հեղինակները հիշատակում ասպետական այս միաբանությունների մասին: Արդյո՞ք նրանք միշտ են դրանք ներկայացնում հստակորեն: Այս հաստատությունների ո՞ր կողմերի վրա են նրանք շեշտը դրել: Ասպետական միաբանություններին բնորոշ ներքին և արտասովոր բնույթի ո՞ր առանձնահատկություններն են հեղինակների վրա ամենամեծ ազդեցությունը գործել: Ի՞նչ համընդհանուր պատկեր են նրանք արտացոլում: Արդյո՞ք ժամանակի ընթացքում նրանց տեսակետը բարեշրջվել է: Արդյո՞ք այն փոփոխվել է՝ ըստ հեղինակի պաշտոնի, միջավայրի և պատմողի ներգրավվածության աստիճանի:

---

<sup>103</sup> Եդեսիայի կոմսությունում ասպետական միաբանություններին արված առաջին նվիրատվությունների մասին տես **M. Amouroux-Mourad**, նշվ. աշխ., էջ 141: Կիլիկիայում այս միաբանությունների գործունեության սկզբնական փուլի մասին տես **J. S. C. Riley-Smith**, *The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia*, p. 92-117: Տե՛ս նաև սույն ժողովածուի I գլուխը:

<sup>104</sup> Ինչ վերաբերում է ասպետական միաբանությունները միջնադարյան հասարակությանը ներկայացնելուն, տես հետևյալ աշխատությունը՝ **H. Nicholson**, *Templars, Hospitallers and Teutonic Knights. Images of the Military Orders, 1128-1291*, Leicester, London and New York, 1995:

## 1 – Հիշատակման զանազան ձևեր

Ասպետական միաբանությունները ներկայացվում են տարբեր ձևերով՝ ըստ քննարկվող հեղինակների էթնիկական և կրոնական պատկանելության, ինչպես նաև այս միաբանությունների շուրջ նրանց իմացության աստիճանի:

### Ա – Հոգևորասպետական միաբանությունների հիշատակության բացակայությունը

Որոշ հայ հեղինակներ չեն մտահոգվում դրանք հիշատակելու անհրաժեշտությամբ, անգամ այնպիսի հանգամանքներում, երբ դրանց ներկայությունն, ի դեպ, ապացուցված է: Այսպիսին է կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի<sup>105</sup> պարագան, որն իր «Սալահ Էդ-Դինի կողմից Երուսաղեմի գրավման ողբում»<sup>106</sup> հիշատակում է Այյուբյան սուլթան Սալահ Էդ-Դինի կողմից Պաղրաս բերդամրոցի գրավման մասին 1188 թ. սեպտեմբերին: Կաթողիկոսը, սակայն, չի հոգացել հիշատակել թե՛ այդ միջոցին այս դոյակի տիրակալ տաճարականների ներկայության և թե՛, *a fortiori*\*, նրանց վերապահված ճակատագրի մասին.

«Նրանք (Սալահ Էդ-Դինի զորքերը – *Մ.-Ա. Շ.*) գնացին ճամբարելու մի ընդարձակ հարթավայրում,

Մի լճի մոտ, որը գտնվում է այս վայրերում,

Եվ շրջապատեցին բերդամրոցը,

Որն անվանում են Սարա (Պաղրաս)»<sup>107</sup>:

Երբեմն հիշատակարանների հեղինակները կամ գրիչները ևս անուշադրության են մատնում ասպետական միաբանությունները, այն դեպքում, երբ ուղղակիորեն հիշատակում են դրանց առնչվող իրադարձությունների մասին: 1219 թ., վախճանվելուց առաջ, հայոց թագավոր Լևոն I-ն իր թագավորությունը հանձնել է կրտսեր դստերը՝ Չապելին (Իզաբել), հրահանգելով թագավորության խնամակալ՝ Գաստոնի տիրակալ Ատանին և խնամակալ Կոստանդին դը Պապեռոնին՝ նրան

<sup>105</sup> Գրիգոր Դ Տղան (1133-1189) կաթողիկոս է եղել 1172-1189 թթ.:

<sup>106</sup> *RHC, DA*, t. I, p. 272-307.

\* Լատ.– Առավել ևս: – Օ. թ.:

<sup>107</sup> *RHC, DA*, t. I, p. 303. Լատինական և ֆրանկական սկզբնաղբյուրներում նաև Գաստոն անվանված Պաղրասն Ամանոսի հարավում գտնվող բերդամրոց էր՝ ուղղված դեպի Կիլիկիայի հարթավայրը: Հարավ-արևելքից այն պաշտպանում էր Ասորվոց դուռնը և գտնվում Անտիոքից նվազագույնը 30 կիլոմետր դեպի հյուսիս:



ամուսնացնել իր դիրքին համապատասխանող մեկի հետ<sup>108</sup>: Այսպիսով, 1123 թ. թագուհին ամուսնացել է Անտիոքի իշխան Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի հետ: Այդուհանդերձ, նոր թագավորը, որին հայոց իշխանները մեղադրում էին լատինամետ տրամադրություններ ունենալու, հայկական գահին պատկանող հարստությունները խաբեությամբ հավիշտակելու և Անտիոքի իշխանություն տեղափոխելու մեջ, ձերբակալվել է և մահացել 1225 թ.<sup>109</sup>: Խնամակալ Կոստանդինն այդ ժամանակ ցանկացել է Ջապելին ամուսնացնել իր որդու՝ Յեթումի հետ: Ջապելը մեկնել է ապաստանելու հիվանդախնամների մոտ, որոնց նրա հայր Լևոնը 1210 թ. տվել էր Սելևկիա քաղաքը<sup>110</sup>: Այս դիպվածի առիթով է, որ պատարագամատույցներից մեկի գրիչ Յովհաննեսը հայտնում է. «Եկն առ մեզ **Սարգիս** հայրն և եբեր մեզ վատ զրոյց, որ եկեալ **Լևոն** թագաւորին թագուհի ի **Կիպռուսա** ի **Սելևկիա**, որ տենայր զիր դուստրն, որ էր Յեթում թագաւորին թագուհի: Եւ տարան զթագուհին ի **Սելևկիա**, և անդ ետես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարոն **Կոստանդին**, և մտաւ ի **Սելևկիա**, և մռտեց հետ իր մաւրն, և զպարոնն հանին քաշնաւք բերդէն: Այս այսպէս գործեցաւ, և ենք յահի և յերկեղի. այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի»<sup>111</sup>:

Յովհաննեսը կամ անտեղյակ լինելով բերդամրոցը հիվանդախնամների միաբանությանը պատկանելու իրողությանը և կամ ամոթահար չանելու համար այս հեղինակավոր միաբանությանը՝ նրան մերձեցնելով թագուհու դիրքորոշմանը, ինչը դատապարտում է, չի հիշատակում ո՛չ միաբանության եղբայրների ներկայության և ո՛չ այս գործին նրանց մասնակցության մասին:

Իրենց ժամանակագրություններում ասպետական միաբանությունների մասին հիշատակում են նաև այլ հեղինակներ, ինչը սակայն պարբերաբար չի արվում: Երբեմն պատահում է, որ նրանք անտեսում են դրանք, այն դեպքում, երբ դրանց դերը կամ ներկայությունն անժխտելի է:

<sup>108</sup> **Կիրակոս Փանծակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ *Կ. Ա. Սելիք-Օհանջանյանի*, Երևան, 1961, էջ 187-190; **Kirakos de Gandzak**, Histoire d'Arménie, trad. française.– **Marie-Félicité Brosset**, Deux historiens arméniens, Saint-Petersbourg, 1870, p. 92-93; La Chronique attribuée au Connétable Smbat, p. 93-94: Տե՛ս նաև **Cl. Mutafian**, նշվ. աշխ., էջ 50-52:

<sup>109</sup> **Կիրակոս Փանծակեցի**, նշվ. աշխ., էջ 187-190; **Kirakos de Gandzak**, նշվ. աշխ., էջ 93; Chronique du royaume de la Petite Arménie par le connétable Sempad.– *RHC, DA*, t. I, p. 647-648; La Chronique attribuée au Connétable Smbat, p. 95-96; **Cl. Mutafian**, նշվ. աշխ., էջ 52-54:

<sup>110</sup> **J. Delaville-le-Roulx**, Cartulaire général de l'Ordre des Hospitaliers de Saint-Jean de Jérusalem (1100-1310), t. II, Paris, 1894-1906, p. 115-116, N 1344.

<sup>111</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց *Ա. Ա. Սաթևոսյան*, Երևան, 1984, էջ 166, թիվ 122:

Միխայել Ասորին, որն, ի դեպ, խիստ ուշադիր է հոգևորասպետական միաբանություններին առնչվող փաստերի հանդեպ, բազմաթիվ առիթներով մոռանում է հիշատակել դրանց մասին: Օրինակ՝ երբ Կիլիկիայում Մանուել {I} Կոմնենոսի արշավանքի ժամանակ, 1158 թ., լատինական գլխավոր առաջնորդները զնացել են բասիլևսին ընդառաջ, որպեսզի նրան հաշտեցնեն հայոց իշխան Թորոսի հետ, տաճարականները ներկա են եղել, սակայն պատրիարքն այդ մասին ակնարկ իսկ չի անում: Նա այդ մասին չի նշում նաև իր պատմության մեջ, երբ հետաքրքրություն է հանդես բերում Յալեպի դեմ ուղղված՝ հույների, լատինների և հայերի միացյալ արշավանքի հանդեպ<sup>112</sup>: Իսկ երբ նա հիշատակում է 1160-ական թվականների սկզբին մի գողի Պաղրաս գալու մասին՝ չի հստակեցնում, որ ամրոցի տիրակալները տաճարականներն էին<sup>113</sup>:

Ավելի ուշ ժամանակաշրջանի մեկ այլ ասորի հեղինակ՝ Բար Յերեոսը ևս հիշատակում է այս վերջին զվարճալի պատմության մասին, չնատնանշելով, թե ովքեր են Պաղրասի սեփականատերերը, ինչը տրամաբանական է, եթե նկատի ունենանք, որ XII դարին վերաբերող իրադարձությունների առնչությամբ նա առաջնորդվել է, ի դեպ, Միխայել Ասորու պատմությամբ<sup>114</sup>: Այստեղ տառացիորեն գտնում ենք միևնույն հատվածը: Յեղիճակը չի հիշատակում տաճարականների մասին նաև այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է մահմեդականների կողմից Պաղրասի բերդամրոցի թալանին, այն բանից հետո, երբ Սալահ Էդ-Դինն այն գրավել էր կամ դրա պաշարմանը հայերի կողմից<sup>115</sup>:

Չնայած որոշ բացթողումներին, վերոնշյալ ասորի երկու հեղինակը, ընդհանուր առմամբ, համեմատաբար իրազեկ են այն գործողություններին, որոնց միաբանությունները մասնակցել են:

---

<sup>112</sup> «1470 թվին հույների Մանուել կայսրն ասպատակեց Կիլիկիան: [...] Երուսաղեմի և Անտիոքի թագավորները՝ ֆրանկների պատրիարքի հետ միասին եկան և գտան նրան ու համաձայնություն կայացրին նրա հետ, նրան վերահաշտեցրին Թորոսի հետ, որին բերեցին նրա մոտ [...]: Բոլոր քրիստոնյա հույները, ֆրանկներն ու հայերը միավորվեցին՝ Յալեպը, Դամասկոսը և ամբողջ Ասորիքը գրավելու համար»: **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 316:

<sup>113</sup> «Եվ այդ տարի, ֆրանկները ցանկացան բռնել մի ավազակի, որը Պաղրասում էր: Նա փախավ և զնաց ու գտավ Նուր Էդ-Դինին»: Նույն տեղում, էջ 318:

<sup>114</sup> «Եվ [այդ] տարում կար մի ոմն ֆրանկ, որը Պաղրասում կողոպտիչ էր, և քանի որ ֆրանկները ցանկացան բռնել նրան, նա փախավ ու զնաց Նուր Էդ-Դինի մոտ»: **Bar Hebraeus**, նշվ. աշխ., էջ 287:

<sup>115</sup> Նույն տեղում, էջ 336-337:

Հոգևորասպետական միաբանությունները շրջանցելու փուլին հաջորդած՝ դրանց հիշատակման մասին վկայող առաջին քայլը հանգում է դրանց նույնացմանը «Ֆրանկների» հետ: Իրոք, այս անվանումը, որը համեմատաբար անստույգ է (թեպետ կարող է բացահայտել դրանց համալրման աշխարհագրական ծագումը), միաբանությունների անդամներին ձուլում է այլ ֆրանկների հետ, անկախ այն բանից, թե նրանց ճանապարհները ոչ հեռավոր անցյալում են խաչաձևվել<sup>116</sup>, թե դրանք վաղուց ի վեր են հաստատվել Սուրբ Երկրում՝ առանց հաշվի առնելու դրանց հաստատության առանձնահատկությունները: Այս առումով հատկանշական է պատմիչ Կիրակոս Գանձակեցու<sup>116</sup> Ջապելի Սելևկիա մեկնելուն առնչվող պատմությունը. «Իսկ թագուհին ոչ հալաներ լինել կին մանկան<sup>117</sup>. ապստամբեցաւ չոգաւ ի Սելևկիա առ ֆռանկսն՝ որ անդ, զի մայր նորա ֆռանկ էր ազգաւ ի Կիպրոս կղզւոյ: Եւ առեալ Կոստանդինի զգօրսն ամենայն պաշարեաց զքաղաքն, մինչև յոչ կամաց ետուն զթագուհին ի ձեռս նորա: Եւ տարեալ ամուսնացոյց զնա որդւոյ իւրում»<sup>118</sup>:

Այս մեջբերումը բացահայտում է այն փաստը, որ ֆրանկներն ընդունել են Ջապելին, և ընդգծում, այսպիսով, միևնույն ազգի մարդկանց միջև համերաշխության ձևերից մեկը, որովհետև Ջապելի մայրը՝ Սիբիլ թագուհին, Կիպրոսի թագավոր Ամորի I-ի դուստրն էր<sup>119</sup>: Այսպիսով, կամ ֆրանկներին հատուկ համերաշխության որոշակի ձևը մատնանշելու նպատակով, կամ Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդախնամների մասին տեղեկություններ չունենալու հետևանքով (այս վերջին վարկածն, այդուհանդերձ, մեր օրերի հեռավորությունից ամենաարժանահավատն է, քանզի Կիրակոսն իր պատմության մեջ որևէ այլ տեղ չի հիշատակում ասպետական միաբանությունների՝ նույնիսկ իբրև «Ֆրանկների» մասին), հեղինակը միաբանությունները վերածում է ազգի, որից դրանք ծագել են, ամենևին հաշվի չառնելով դրանց գործունեությունն ու առաքելությունը:

<sup>116</sup> Կիրակոս Գանձակեցին (1203-1272)՝ 301-1265 թթ. Հայաստանի պատմության հեղինակ է: Որոշ ժամանակ մոնղոլների գերին լինելուց հետո՝ նա կարողացել է փախչել: Նրա պատմությունը հարուստ է այդ ժողովրդի նվաճումներին վերաբերող տեղեկություններով:

<sup>117</sup> Խոսքը վերաբերում է Կոստանդինի որդի Յեթումին:

<sup>118</sup> **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 189: Այս հատվածին հանդիպում ենք հետևյալ հրատարակության մեջ՝ **Kirakos de Gandzak**, նշվ. աշխ., էջ 429:

<sup>119</sup> **C. Toumanoff**, նշվ. աշխ., էջ 428:

Գ – Ասպետական միաբանությունների  
ասպետներն իբրև «եղբայրներ»

Այս մարտնչող հոգևորականներին բնորոշելու համար, մասնավորապես ասորի գրիչները և աննշան չափով որոշ հայ հեղինակներ, բավական հաճախ օգտագործել են մեկ այլ՝ «եղբայրներ» արտահայտությունը: Արևելքի քրիստոնյաների շրջանում, անկախ այն բանից՝ ասորիների, թե հայերի, այս անվանումը պահպանվել է այն ձևով, ինչպես այն ժամանակ արտասանել են լատիները և արտացոլվել է նրանց՝ համապատասխան լեզուների հնչյունական տառադարձության մեջ: Այս հարցն ավելի հստակեցնելու համար, Միխայել Ասորու ժամանակագրության հրատարակության մեջ Ժ. Շաբոն այս բառը թարգմանում է՝ տառադարձելով այն իբրև «Փրեր» (Phrêr)<sup>120</sup>, ամենևին չբացառելով «եղբայրներ» իմաստը<sup>121</sup>: Մեկ անգամ տաճարականներին նա նույնիսկ բնութագրում է իբրև «Փրեր եղբայրների»<sup>122</sup>. փաստորեն, Միխայել Ասորին «Փրեր» բառն օգտագործում էր իբրև հատուկ անուն, իսկ «եղբայր» բառն իբրև հասարակ անուն (որն օգտագործվել է՝ կարևոր չէ, թե ինչ կարգի վանականի համար), իսկ «Փրեր եղբայրներն» այն ժամանակ եղել են առանձնահատուկ վանականներ, քանզի նրանք պատկանել են «Փրեր» կատեգորիային, այն է՝ ասպետական միաբանություններին: Աբուլ Ֆարաջի ժամանակագրության՝ իր անգլերեն թարգմանության մեջ Ե.-Ա. Վալիս Բրուջը պահպանում է ֆրանսերեն «եղբայրներ» (frères) բառը<sup>123</sup> (կամ երբեմն, այնուամենայնիվ, այն առնում է փակագծերի մեջ՝ անգլերեն «Brothers» կամ «Brethern» բառերի կողքին) և մի հստակ պարագայում նույնիսկ գրում է. «Maistir of the Frîrê»<sup>124</sup>, այն է՝ եղբայրների ղեկավար, ավելի մերձենալով, այսպիսով, ասորական հնչմանը: Ինչ վերաբերում է Ա. Աբունային, Անանուն Եղեսացու ժամանակագրության՝ իր ֆրանսերեն թարգմանության մեջ ընդգծելու համար այդ առանձնահատկությունը՝ եղբայրներ բառը նա առնում է փակագծերի մեջ<sup>125</sup>:

<sup>120</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201-203, 207-208, 235, 286-287, 314:

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 201-203, 314, 324-325:

<sup>122</sup> «Ֆրանկները ցանկանում էին, որ իրենց տրվեն այն ամրոցները, որոնք հայերն այս Փրեր եղբայրներից զավթել էին հույների համար»: Նույն տեղում, էջ 314:

<sup>123</sup> Bar Hebraeus, նշվ. աշխ., էջ 283, 308-309, 370, 381, 389-390:

<sup>124</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>125</sup> Anonyme syriaque, p. 141.

Հայ հեղինակներից Գրիգոր Երեցը<sup>126</sup> ևս հիշատակում է «եղբայրների» մասին (առանց մատնանշելու նրանց պատկանելությունն այս կամ այն ասպետական միաբանությանը)՝ ֆրանսերեն բառի՝ հայերենի հնչյունային տառադարձությամբ, որը նրա ժամանակագրության թարգմանության մեջ լավագույնս ներկայացրել է և բացատրել է. Դյուլորիեն<sup>127</sup>, այն դեպքում, երբ Ա. Է. Դոստուրյանն իր նորագույն թարգմանության մեջ հայերեն «ֆրերք» բառը (խոսքը վերբերում է «եղբայր» բառին՝ հայերենի հոգնակի մասնիկով) թարգմանում է (կամ ավելի շուտ մեկնաբանում) ուղղակիորեն իբրև տաճարականներ<sup>128</sup>: Հիշատակարաններից մեկում ևս նշված է. «պատերազմողս, որ կոչին փրերք»<sup>129</sup> կապված 1187 թ. հուլիսին Հաթինի ջախջախումից հետո Սալահ Էդ-Դինի կողմից նրանց գերեվարման հետ: Սմբատ սպարապետը, անհարկի իրեն վերագրվող ժամանակագրությունում<sup>130</sup>, մատնանշում է հոգեվորասպետական միաբանությունների անդամներին երկու ձևով և, այսպիսով, անցում կատարում հեղինակների մի խմբից մյուսին, քանզի նրանց մասին հիշատակում է կամ իբրև «եղբայրների»<sup>131</sup>, կամ «խաչի դրոշմը կրող հանդերձանքներով եղբայրների»<sup>132</sup> (չնայած ըստ հեղինակի՝ այս ձևակերպումը կիրառելի է ավելի շուտ տաճարականների համար)<sup>133</sup>, կամ տաճարականների<sup>134</sup> և կամ հիվանդախնամների<sup>135</sup>, որոնք մատնանշվում են իբրև այդպիսիք (այդուհանդերձ, նա երբևէ չի հիշատակում տևտոնական ասպետների մասին):

---

<sup>126</sup> Գրիգոր Երեցը եղել է քահանա, նա շարունակել է Արևմուտքում Մատթեոս Եղե-սացի անվամբ հայտնի Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունը մինչև 1162 թ.:

<sup>127</sup> Chronique de Grégoire le Prêtre.– *RHC, DA*, t. I, p. 171-172, 184, 188, 189, 194 (այսուհետև՝ **Grigor Yerets**); **Matthieu d'Edesse**, p. 337-339, 350-351, 354-357, 361.

<sup>128</sup> Armenia and the Crusades, 10<sup>th</sup> to 12<sup>th</sup> centuries. The Chronicle of Mathew of Edessa, introduction, commentaire et trad. de *Ara Edmond Dostourian*, Lanham, New York, London, 1993, p. 262-264, 270-271, 273-277 (այսուհետև՝ **A. E. Dostourian**).

<sup>129</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ՝ *Ա. Ա. Մաթևոսյանի*, Երևան, 1988, էջ 272, թիվ 280:

<sup>130</sup> Այս ժամանակագրությունն ավելի շուտ կարող է լինել նրա եղբայրներից որևէ մեկի՝ ջանցլեր Վասիլի († 1275) աշխատությունը, որը Սսի արքեպիսկոպոսն էր և ջանալերը: Ժամանակագրության հնարավոր հեղինակի մասին տե՛ս Ժ. Դեղեյանի ներածությունը. *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 26:

<sup>131</sup> Նույն տեղում, էջ 45, 62-63:

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 59, 116-117:

<sup>133</sup> Զմմտ. Ժ. Դեղեյանի դիտողություններն այս առիթով. նույն տեղում, ծանոթագրու-թյուն թիվ 63, էջ 62:

<sup>134</sup> *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 96.

<sup>135</sup> Chronique du royaume de la Petite Arménie, p. 645, 648; *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 89.

«Եղբայրներ» անվանման առիթով կանխատեսելի է երկու վարկած. մի կողմից՝ խոսքը, հավանաբար, առնչվում է ֆրանսիական արտահայտությունը պահպանելու՝ Արևելքի քրիստոնյաների դրսևորած ցանկությանը, թեպետ այն կարող էր ունենալ շատ ավելի ընդարձակ իմաստ, քան անհրաժեշտ էր հոգևորասպետական միաբանությունների էությունը չաղավաղելու և լավագույնս ներկայացնելու համար: Նրանց լեզուներում չունենալով համարժեք՝ այս անվանումը նրանց թույլատրել է ընդգծել այս միաբանությունների անդամների առանձնահատկությունը՝ այլ միաբանությունների համեմատությամբ: Մյուս ենթադրությունը, որը չի հակասում նախորդին, հանգում է այն բանին, որ հեղինակները, որոնց վերաբերում է խոսքը, հոգևորասպետական միաբանությունների մասին չունեին խիստ հստակ գիտելիքներ և, հետևաբար, դրանց անդամներին անվանում էին ոչ թե՛ ըստ այն միաբանության, որին նրանք անդամակցում էին, այլ պարզապես «եղբայրներ» ընդհանուր անվամբ: Այս տեսությունը հաստատվում է տաճարականների և հիվանդախնամների միակցումով, ինչն արել է Միխայել Ասորին «Ֆրանկ «Փրերների» պատմությունում», որտեղ տաճարականներին ներկայացնում է իբրև հիվանդանոցների հիմնադիրների<sup>136</sup>, մի գործունեություն, որը բնորոշ է Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդանոցի միաբանությանը (իսկ ավելի ուշ՝ տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությանը), սակայն ոչ մի պարագայում՝ տաճարականների միաբանությանը, որն, ինչպես և մյուս բոլոր հոգևոր միաբանությունները, կատարել է, այդուհանդերձ, նշանակալի բարեգործություններ: Այնուամենայնիվ, այլ հեղինակներ, ինչպես Սմբատ սպարապետը, իրազեկ են ասպետական միաբանություններին առնչվող իրադարձություններին և այդ ընթացքում տաճարականներին երբեմն նույնացնում են հիվանդախնամների հետ: Կարելի է կարծել, որ հստակության բացակայությունը բնորոշ է ասորի հեղինակներին՝ այս միաբանությունների անդամների հետ փոխհարաբերությունների բացակայության հետևանքով: Սակայն այս հավանականությունը փոքր է, եթե նկատի ունենանք վերջիններիս ավելի վաղ հաստատումը Եդեսիայի կոմսությունում<sup>137</sup>:

---

<sup>136</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 203:

<sup>137</sup> M. Amouroux-Mourad, նշվ. աշխ., էջ 141: Այս կոմսությունում հիվանդախնամներին արված նվիրատվությունների մասին հեղինակը հիշատակում է 1130-ական թվականների սկզբից ի վեր:

Դ – Միաբանության անվանը  
համապատասխանող հիշատակում

Հոգևորասպետական միաբանությունների եղբայրների անվանման երրորդ ձևը՝ նրանց մասին հիշատակումն է այն միաբանության անվամբ, որին նրանք անդամակցում են: Անվանման այս ձևը որդեգրել են այդ միաբանությունների մասին համեմատաբար ամբողջական գիտելիքներ ունեցող հեղինակները: Թագավորական ընտանիքի անդամները և շրջապատը (խոսքը վերաբերում է անձամբ թագավորին, թագավորական աստիճանավորներին կամ պրելատներին) պարբերաբար առնչվելով դրանց հետ, նախահավաստ են եղել գրել դրանց մասին: Հիրավի, տաճարականները, հիվանդախնամները և տևոնական ասպետները գտնվում էին հայոց գահակալի արքունիքում: Նրանց կարելի էր տեսնել թագավորի կողքին արարողությունների և կրոնական նշանակալից իրադարձությունների ժամանակ: Այսպիսին էր, օրինակ՝ Ռայնոդ-Ռուբենի թագադրման պարագան՝ 1212 թ., Աստվածահայտնության օրը: Տևոնականների Սուրբ Մարիի հիվանդանոցի մեծ մագիստրոս Հերման դը Սալզան և Սելեկիայի սենյորը՝ Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդախնամը, ինչպես նաև այս միաբանությունների այլ անդամներ, գտնվում էին Լևոն I-ի կողքին<sup>138</sup>: Արևելքի քրիստոնյաների շրջանում՝ ասպետական միաբանություններին՝ իրենց անվամբ հիշատակում են միայն հայերը (բացառությամբ Անանուն Եղեսացու ժամանակագրության մեջ մի հիշատակության)<sup>139</sup> և ինչ վերաբերում է նրանց, ապա ամենաստույգը՝ ամենաբարձր դիրքեր գրավողներն են: Այդ նկատելի է լատիներեն լեզվով գրված զանազան հրովարտականներում, որոնք հրապարակել է հայկական թագավորության դիվանը<sup>140</sup>:

<sup>138</sup> “Wilbrandi de Oldenborg, Peregrinatio”. – Peregrinatores medii aevi quatuor, Buchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii et Wilbrandus de Oldenborg, Leipzig, éd. par J. C. M. Laurent, 1864, p. 177-178; Wilbrand d’Olbenbourg, Itinerarium Terrae Sanctae. – S. de Sandoli, Itinera hierosolymitana Crucesignatorum (Saec. XII-XIII), t. 3, Jérusalem, 1983, p. 222-223.

<sup>139</sup> «Տաճարական և հիվանդախնամ եղբայրների թվում գտնվող ավելի քան հարյուր հիսուն ազնվականի բռնեցին և ուղարկեցին Դամասկոսի բանտ»: Տե՛ս **Anonyme syriaque**, p. 148:

<sup>140</sup> Կիլիկյան Հայաստանում թագավորության ջանքերը հաճախ Սսի արքեպիսկոպոսն էր: Այդուհանդերձ, պարտականությունների կատարման ընթացքում նրան օժանդակում էին լատինական մի ջանցներ և գրիչներ: Հմմտ. V. Langlois, նշվ. աշխ., էջ 19: Կարելի է մտորել, թե ինչ չափով է լատինական ջանցներն ազդեցություն ունեցել հոգևորասպետական միաբանություններին հղված հրովարտականները ներկայացնելու ձևի վրա:

Օրինակ՝ 1210 թ. ապրիլի 15-ին Լևոն I-ը նվիրատվություն է արել «հիվանդախնամների միաբանությանը»: Նա հիշատակում է «հիվանդախնամների Սուրբ միաբանության մագիստրոսի և վանքի» մասին և իր, ինչպես նաև իր զարմիկ Ռայմոնդ-Ռուբենի ու իրենց հողային տարածքների ճակատագրերը վստահում «եղբայր Գարին դը Մոնտեգյուին» և միաբանության վանքին<sup>141</sup>: Այս թագավորի՝ հիվանդախնամների շնորհած այլ հրովարտակներն, ըստ էության, նույնքան հստակ են: Ինչ վերաբերում է տևտոնականներին՝ ապա 1212 թ. ապրիլին Լևոն I-ը հիշատակում է «տևտոնականների հիվանդանոցի Սուրբ միաբանության եղբայրների [...]»<sup>142</sup> մասին: Կիլիկյան Յայաստանի թագավորը, որը Պաղրաս բերդամրոցին տիրանալու պատճառով տաճարականների հետ բացահայտ առճակատման մեջ էր՝ հստակորեն հիշատակում է միաբանության և դրա անդամների մասին: 1199 թ. հրովարտակում նա հիշատակում է «տաճարականների մագիստրոսի և վանքի» մասին<sup>143</sup>, 1201 թ. հոկտեմբերի 1-ի թվակիր՝ Իննոկենտիոս Գ պապին հղած նամակում՝ «տաճարականների մագիստրոսի» և «տաճարականների» մասին<sup>144</sup>: Նույնը կարելի է ասել նրա դիվանի հատկացրած այլ փաստաթղթերի մասին: Չեթուն I-ն<sup>145</sup> ու նրա կինը՝ Ջապել թագուհին, 1236 թ. հունվարի 22-ին «սուրբ և հոգևոր մագիստրոս, եղբայր Յերմանի և Աստոն համար թանկագին ասպետավագ, եղբայր Լիտտուլդի միջոցով գերմանացիների հիվանդանոցի միաբանությանն» են նվիրում Չարունի քաղաքը և դրա հանդակները. մինչև նույն փաստաթղթում այս միաբանությունը ևս անվանվում է իբրև «գերմանացիների հիվանդանոցի եղբայրների բանակ»<sup>146</sup>: Կիլիկյան Յայաստանի գահի ժառանգորդ և Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենը նվիրատվություն է անում «Երուսա-

<sup>141</sup> J. Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344:

<sup>142</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 234 (8-րդ գլուխը վերաբերում է Կիլիկյան Յայաստանին (էջ 59-67), իսկ հավելվածում (էջ 234-237) կարելի է գտնել հրովարտակների մասնակի հրատարակությունը, որը սրբագրում է Շտրեյկեի հրատարակումը):

<sup>143</sup> Innocent III. Epistolae.— *Patrologie latine*, J.-P. Migne, vol. 214, 1855, cols. 810-812, N 252; Acta Innocentii PP. III (1198-1216) e registri vaticanis aliisque eruit, introductione auxit, notisque illustravit, P.-T. Haluscynskyj, Typis polyglottis vaticanis, 1944.

<sup>144</sup> Innocent III.— *Id.*, cols. 1003-1006, N 43; Acta Innocentii PP. III, *id.*, p. 559, N 7.

<sup>145</sup> Չեթուն I-ը (1215-1270) Չեթունյան հարստության առաջին հայոց թագավորն էր: Քանի որ Լևոն I-ը վախճանվել էր առանց արու ժառանգ ունենալու՝ Չեթունն ամուսնացել է (այնպիսի հանգամանքներում, որոնք արդեն առիթ ունեցանք հիշատակել), այս թագավորի դստեր՝ Ջապելի հետ: Նա թագավորել է 1226-1269 թթ.:

<sup>146</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:



ղեմի հիվանդների հիվանդանոցի միաբանությանը» և Ճշգրտորեն հիշատակում այս միաբանության անդամներին (որոնք հաստատում են այս արտոնությունը), ինչպես նաև նշում նրանց հասարակական դիրքի մասին<sup>147</sup>: Իր այլ փաստաթղթերում ևս նա շարունակում է միևնույն ձևով հիշատակել հիվանդախնամների միաբանության մասին՝ բացառությամբ որոշ նրբերանգների, ինչպիսին է՝ «Երուսաղեմի չքավորների հիվանդանոցի միաբանությունը»<sup>148</sup>: 1219 թ. մարտին նա նաև հարկերից ազատող մի հրովարտակ է շնորհել «տևտոնականների Սուրբ Մարիի հիվանդանոցի մագիստրոսին և եղբայրներին»<sup>149</sup>: Մեծ սեյյոր Կոստանդին Սարվանդիքարը միաբանության հետ ունենալով, այդուհանդերձ, վիճարկելի հարցեր, 1271 թ. հունիսի 15-ին, վեճի կարգավորման ընթացքում, հայերեն կազմված հրովարտակում հարգալից նշում է. «Գերմանացի հիվանդախնամների մեծ մագիստրոս, եղբայր ժամը»<sup>150</sup>: Իսկ Իննոկենտիոս Գ պապին հղած նամակում կաթողիկոս Յովհաննես {Ջ Սսեցին} քննարկում է Լևոնին և «տաճարականներին» հակադրած վեճը<sup>151</sup>:

Իր «Ժամանակագրական աղյուսակում» Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում II-ն<sup>152</sup> իբրև «ալաման ֆրեք»՝ հականե-հանվանե հիշատակում է տաճարականների (իբրև Պելերինի դոյակի սեփականատերերի)<sup>153</sup> և տևտոնական ասպետների մասին՝ Մոնֆորի դոյակի վերականգնման նրանց նախաձեռնության առիթով<sup>154</sup>:

Հեթումյան թագավորական ընտանիքի երկու նշանավոր անձինք ևս հետաքրքրվել են հոգևորասպետական միաբանությունների եղբայրներով: Խոսքը վերաբերում է Հեթում I-ի եղբայր Սմբատ սպարապետին

<sup>147</sup> Եղբայր Գարին դը Սոնտեգյու՝ հիվանդախնամների միաբանության մարեշալ, եղբայր Գուբեր՝ Անտիոքի հիվանդախնամների միաբանության ասպետավագ, եղբայր Ժիրան Ղեղուլյու և եղբայր Բեռնար: **J. Delaville-le-Roulx**, *նշվ. աշխ.*, էջ 70-71, թիվ 126:

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 175, թիվ 1441:

<sup>149</sup> **E. Strehlke**, *նշվ. աշխ.*, էջ 41-42, թիվ 51:

<sup>150</sup> **L. Alishan**, *Sissouan ou l'Arméno-Cilicie, description géographique et historique*, Venise-St. Lazare, 1889, p. 239; *Les Gestes des Chiprois*, note d, p. 840.

<sup>151</sup> **Innocent III**. – *PL*, t. 215, cols. 692-694, N 120.

<sup>152</sup> Հեթում II-ը (1266-1307) Լևոն II-ի որդին էր: Կիլիկյան Հայաստանում նա ընդմիջումներով թագավորել է 1288-1293, 1295-1296, 1299-1301 թթ.՝ երկփեղկվելով իր կրոնական հակումների և քաղաքական պատասխանատվությունների միջև: 1301-1307 թթ. նա եղել է երիտասարդ Լևոն III թագավորի խնամակալը:

<sup>153</sup> *Table chronologique*. – *RHC, DA*, t. I, p. 484.

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 485: Պելերինի դոյակը և Մոնֆորը գտնվում էին Երուսաղեմի թագավորությունում: Պելերինի դոյակը հիմնադրվել էր պաղեստինյան ծովափում՝ Հայֆա և Կեսարիա քաղաքների միջև, իսկ Մոնֆորը տաճարականների այս ամրոցի հյուսիս-արևելքում էր:

վերագրվող ժամանակագրությանը, որտեղ հիշատակվում է «տաճարական ասպետների»<sup>155</sup>, «հիվանդախնամների մագիստրոսի»<sup>156</sup> մասին, սակայն խաչակրաց հինգերորդ արշավանքի ընթացքում Եգիպտոսում ռազմարշավը գլխավորող զինվորական առաջնորդների և նրանց զորքերի կապակցությամբ նաև նշվում է. «Իրենց մագիստրոսների հետ մեկտեղ՝ եղբայրների միաբանությունները, տաճարականներն ու հիվանդախնամներն՝ իրենց բոլոր վանականների հետ միասին»<sup>157</sup>: Երկրորդ անձը՝ Չայթոն պատմիչը կամ Չեթուն Կոռիկոսցին է<sup>158</sup>, որն իր «Ծաղիկք պատմութեանց Արևելից» գրքում հիշատակում է Ղազանի կոչով՝ Տյուրոսի իշխանի կազմակերպած զորահավաքի մասին, որին մասնակցում էին “maistres [du Temple] e de l’Hospital e leur covent”<sup>159</sup>: Նույն հեղինակն իր «ժամանակագրությունում» մատնանշում է ասպետական միաբանությունների կյանքին առնչվող ակնառու փաստեր և ըստ այդմ՝ հաճախ է հիշատակում դրանց մասին: Նրա պատմությունը ստույգ է, քանզի նշված են մեծ մագիստրոսների և որոշ բարձրաստիճան անձանց անունները: 1227 թ., օրինակ, կարելի է հիշատակում գտնել հիվանդախնամների մագիստրոս, եղբայր Գարին դը Մոնտեգյուլի մահվան («Եւ վախճանեցաւ մայստռն Ոսպեթլուն ֆրէր Կարին տ[ը] Մունդակոյ») <sup>160</sup>, իսկ 1244 թ.՝ նաև տաճարականների մագիստրոս, եղբայր Արման դը Պերիգորի («Մայստռն Դանփլուն՝ ֆրէր Չերմանդ տը

<sup>155</sup> La Chronique attribuée au Connétable Smbat, p. 96.

<sup>156</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>157</sup> Նույն տեղում, էջ 92: Խաչակրաց հինգերորդ արշավանքը, որը 1216 թ. քարոզում էր Ոնորիոս Գ պապը, ղեկավարել են Յունգարիայի թագավոր Անդրե II-ը և Ավստրիայի դուքս Լեոպոլդ VI-ը: Չնայած 1217 թ. Յունգարիայի թագավորի պարտությանը, ժամ դը Բրիենի նախաձեռնությամբ մի արշավանք է իրականացվել Եգիպտոսի ուղղությամբ: Տաճարականների մեծ մագիստրոս Գիյոն դը Շարտրը և հիվանդախնամների մագիստրոս Գարին դը Մոնտեգյուն մասնակցել են 1218 թ. մայիսին սկսված այդ արշավանքին:

<sup>158</sup> Միաժամանակ՝ պատմիչ, խնամակալ և սպարապետ Չեթուն Կոռիկոսցին (1240/5-1314), որին անվանում են նաև Չայթոն, եղել է Չեթուն I-ի եղբոր՝ Օշին իշխանի որդին: Այս անձնավորության մասին տես **Cl. Mutafian**, Héthoum de Korikos, historien arménien, p. 174-183:

<sup>159</sup> **Haython**, նշվ. աշխ., էջ 196-199 (ֆրանսերեն տարբերակը. լատիներեն տարբերակում՝ էջ 320-321). թարգմանվում է՝ «տաճարականների և հիվանդախնամների մագիստրոսներն իրենց եղբայրների հետ»: Տես « La Fleur des histoires de la terre d’Orient », prince Haython, début XIV<sup>e</sup> siècle, trad. du moyen français, présenté et annoté par *Christiane Deluz*. – Croisades et pèlerinages..., p. 851-852: Պարսկաստանի մոնղոլ խան Ղազանի հրամանատարությամբ մամլուքների դեմ XIV դարի սկզբին՝ ֆրանկների, հայերի և մոնղոլների միացյալ (կամ ծրագրված) արշավանքների մասին տես **A. Demurger**, Jacques de Molay. Le crépuscule des Templiers, Paris, 2002, p. 139-157:

<sup>160</sup> Չեթուն պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 65:

Փեռկարդն»)<sup>161</sup> և շատ ուրիշների վախճանի մասին: Հիշատակարաններից մեկում Յեթուհը կրկին անդրադառնում է 1291 թ. Ակրայի գրավմանն ալ-Աշրաֆ Խալիլի կողմից, այն քաղաքի, «որ էր տուն իշխանութեան Դամփլուն և Ոսպեթալին և այլոց անուանաւոր իշխանաց»<sup>162</sup>:

Հիշատակարաններ կազմած այլ հեղինակներ հստակորեն հիշատակում են ասպետական միաբանությունների մասին և վերստին Սեն-ժան դ'Ակրայի անկումի առիթով: Այսպիսին է Գևորգ Լամբրոնացու պարագան. «Ձմեծահռչակ եւ զգեղեցկաշէն քաղաքն Աքա, զոր ունէին ազգ ֆրերացն, տունն Դամբլուն, եւ Ոսպեթալին»<sup>163</sup>: Նույնը վերաբերում է Հովհաննես Երզնկացուն<sup>164</sup>. «Իսկ ՉԽ (1291) թուին, որդին Ալֆէ մելիք Աշրաֆ անուն, խակամիտ և գազանաբարու, առ զմեծահռչակ և բազմամբոխ քաղաքն զԱքայ, զոր ունէին ազգ ֆրերացն, տունն Դամփլուն և Ոսպեթալին»<sup>165</sup>:

Եկեղեցական որոշ գործիչներ ևս հոգևորասպետական միաբանությունների մասին հիշատակում են՝ ըստ դրանց անունների: Մխիթար Տաշրացին<sup>166</sup> տեղեկացնում է, ի դեպ, Պապի նվիրակի հետ իր զրույցին տաճարականների մեծ մագիստրոսի և հիվանդախնամների ասպետավագի ներկայության մասին<sup>167</sup>: Սյունիքի Ստեփանոս Օրբելյան հայ եպիսկոպոսը<sup>168</sup> վկայում է, որ Ակրան ծառայում էր «իբրև նստավայր և մայրաքաղաք ֆրանկների երեք՝ տաճարականների, հիվանդախնամ

---

<sup>161</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>162</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 718, թիվ 579:

<sup>163</sup> Նույն տեղում, էջ 702, թիվ 570:

<sup>164</sup> Հովհաննես Երզնկացին, որը ծնվել է 1250-ական թթ. շրջանում և վախճանվել 1330 թ., ղեկավարել է կաթողիկոս Հակոբ Ա {Կլայեցու} հիմնադրած դպրոցը:

<sup>165</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574: 1291 թ.: Այն ժամանակ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաք Սեն-ժան դ'Ակրա քաղաքի անկումը մամլուք սուլթան ալ-Աշրաֆ Խալիլի՝ ալ-Մանսուր Կալաունի որդու զրոհների հետևանքով՝ նշանավորել է Մերձավոր Արևելքում խաչակիրների հիմնադրած պետությունների անկումը: Լատինների մեծամասնությունը տեղափոխվել է Կիպրոս կղզի:

<sup>166</sup> Մխիթար Տաշրացին ապրել է XIII դարում: Նրան՝ աստվածաբանության դոկտորին (վարդապետին), կաթողիկոս Կոստանդին Ա {Բարձրբերդցին} առաքելությամբ ուղարկել է Ակրա:

<sup>167</sup> Relation de la conférence tenue entre le docteur Mekhitar de Dashir, envoyé du catholicos Constantin I<sup>er</sup>, et le légat du pape, à Saint-Jean d'Acre, en 1262. – *RHC, DA*, t. I, p. 695-696.

<sup>168</sup> Ստեփանոս Օրբելյանը (1260 ?-1304) զբաղեցնում էր Սյունիքի մետրոպոլիտի պաշտոնը և ստացել էր «պրոտոֆրոնտեսի» (առաջին փոխանորդ եպիսկոպոսի, որը բուլոր եպիսկոպոսների համար ամենաբարձր աստիճանն էր) կոչում:

ների և գերմանացիների թագավորների համար»<sup>169</sup>: Իսկ ինչ վերաբերում է Սամուել Անեցու շարունակողին, ապա նա հիշատակում է Ֆրիդրիխ II-ին՝ Եգիպտոսի սուլթանին հանձնելու՝ «տաճարական եղբայրների» պատրաստակամության մասին<sup>170</sup>:

Հիշատակման այս զանազան եղանակները՝ ամենահեղիեղուկից մինչև ամենահստակն ու ամենաճշգրիտը, արդեն վկայում են, թե ինչպես են Արևելքի քրիստոնյաները ներկայացրել ասպետական միաբանությունները և ընկալել դրանց կենսակերպն ու դերն Արևելքի լատինական երկրներում, դրանց բարեշրջումը: Արևելքի քրիստոնյաների աշխատություններում, նվազագույնը մասամբ, հաշվի են առնվել նմանապես հոգևորասպետական միաբանությունների առաքելությանը և դրանով պայմանավորված գործողություններին յուրահա-տուկ բոլոր ոլորտները:

## **II – Ասպետական միաբանությունների գործունեության բազմազան ոլորտների ընկալումը**

### *Ա – եղբայրների գործունեության կրոնական և հոգևոր ոլորտը*

Արևելքի քրիստոնյաներին եղբայրներն ավելի աշխուժորեն հետաքրքրում են իրենց ռազմական սխրանքներով, քան վանական կենսակերպով և հոգևոր գործունեության ոլորտով: Այդուհանդերձ, ասպետական միաբանությունների գործունեության կրոնական կողմը նկատելի է այն արտահայտություններում, որոնք օգտագործվել են բնորոշելու համար այս միաբանությունները կամ դրանց անդամակցողներին: Այս առումով ամենահարուստ փաստաթղթերը հայկական թագավորական դիվանից ելնող վավերագրերն են, որոնցում գահակալներն օգտագործում են որոշ միաբանությունների նկատմամբ տաճած իրենց հարգանքը և երբեմն նույնիսկ մեծարանքը բացահայտող մակդիրներ: Հաշվի առնելով Լևոն I-ին և տաճարականներին հակադրած տարածայնությունը, առանց դժվարության ըմբռնելի է դառնում, որ նման հարգալից վերաբերմունքի ավելի շուտ արժանացել են հիվանդախնամներն ու տևտոնականները: Լևոն I-ը նշում է «հիվանդախնամների սուրբ միաբա-

<sup>169</sup> **Stépannos Orbélian**, Histoire de la Sioumie, trad. de l'arménien par *M. Brosset*, v. I, Saint-Petersbourg, 1864, p. 245-246.

<sup>170</sup> **Samuel d'Ani**, Tables chronologiques.– **Marie-Félicité Brosset**, Collection d'historiens arméniens, t. II, Saint-Petersbourg, 1876, p. 470-471.

նության»<sup>171</sup>, իսկ Ռայմոնդ-Ռուբենը՝ «սրբազնագույն միաբանության»<sup>172</sup> մասին: Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդախնամների հոգևոր կյանքն այս հրովարտականերում գովաբանվել է այս ձևերով, և միաբանությունը ձեռք է բերել սրբի համբավ: Տևտոնականների գործունեության կրոնական կողմը շատ ավելի ակնհայտ է Լևոն I-ի՝ 1212 թ. ապրիլի թվակիր նվիրատվական հրովարտականում, որից բերում ենք մի քաղվածք. «Ես նվիրաբերում եմ և զիջում տևտոնականների հիվանդանոցի Սուրբ միաբանության հարգարժան կրոնավոր եղբայրներին, որոնք փոխարինում են մակաբայեցիներին՝ Իսրայելի տոհմի պաշտպանության գործում և որոնց «միաբանն» են և ցանկանում են միանալ նրանց բարեգործություններին ու աղոթքներին»<sup>173</sup>:

Այստեղ Լևոնը մեծապես առաջ է անցնում պարզունակ մակդիրներից՝ վկայելու համար տևտոնական ասպետների կրոնական գործունեության մասին և միաժամանակ հիշատակում է աղոթքներով լի նրանց կենսակերպի ու բարեգործությունների մասին: Բացի դրանից, նա զուգահեռներ է անցկացնում Կիլիկյան Հայաստանում՝ հավատքով պայմանավորված նրանց ռազմական գործունեության և Հին Կտակարանի ընտանիքներից՝ մակաբայեցիների գործունեության միջև, որն Իսրայելում մարտնչել է Անտիոքոս IV Եպիփանեսի դեմ<sup>174</sup>: Միևնույն փաստաթղթում և ավելի դասական եղանակով հիշատակվում է «տևտոնականների հիվանդանոցի սուրբ միաբանության» մասին, ինչպես մինչ այդ՝ հիվանդախնամների պարագայում:

Ինչպես Լևոն I-ի շրջանառության մեջ դրած նախորդ հրովարտականում, նրա հաջորդները՝ Հեթում I-ն ու Ջապելը ևս տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությանը շնորհած նվիրատվության մեջ օգտագործում են գրառումների միևնույն զրքի գովաբանական ձևերը.

«Քանի որ մենք տեսել ենք, որ զերմանացիների հիվանդանոցի սուրբ և հոգևոր միաբանությունը լի է ու լիացած բարյացակամությամբ և կրում է խաչի դրոշմը, մարտնչում է Քրիստոսի խաչի թշնամիների դեմ

---

<sup>171</sup> J. Delaville-le-Roulx, *Ուշվ. աշխ.*, էջ 115-116, թիվ 1344; էջ 164-165, թիվ 1426; էջ 165-166, թիվ 1427:

<sup>172</sup> Նույն տեղում, էջ 70-71, թիվ 1262; էջ 122-123, թիվ 1355:

<sup>173</sup> V. Langlois, *Ուշվ. աշխ.*, էջ 117-120; E. Strehlke, *Ուշվ. աշխ.*, էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, *Ուշվ. աշխ.*, էջ 234:

<sup>174</sup> Նույն տեղում: Մակաբայեցիների վրա հղումները հաճախակի էին խաչակրաց արշավանքների դարաշրջանի ֆրանկների ժամանակագրություններում, և ասպետական միաբանությունների ասպետները հաճախ համեմատվում էին Հին Կտակարանի այս հերոսների հետ: Տե՛ս A. Demurger, *Chevaliers du Christ*, p. 188-189: Մակաբայեցիները պարբերաբար հղվել են նաև միջնադարյան հայկական պատմագրության մեջ:

և ըստ այդմ՝ մարտերում հաղթում իր թշնամիներին, նշանավորվել է և հզորացել ծառայելով հիվանդներին, նվերների միջոցով միշտ ամոքել է ընչազուրկների [կարիքները]: [...] Քանի որ գերմանացիների սուրբ միաբանության եղբայրներն իրականացնում են Գրոց և քրիստոնեական ամբողջ օրենքը և ձգտել են միջանկյալ այս կյանքին ու արժանի դարձել Աստծո անմահ և հավերժական թագավորությանը, ինչպես գրված է. «Եւ ուր ես եմ, այնտեղ կը լինի եւ իմ ծառան»<sup>175</sup>, և կրկին՝ «որովհետեւ ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ»<sup>176</sup>: Հանուն այս սուրբ միաբանության, Աստծո բնակավայրի՝ մենք հայտարարում ենք և ցանկանում ենք նրանց բարեգործությունների ընթացքում լինել նրանց շարքում»<sup>177</sup>:

Թագավորական զույգն այս հատվածում ընդգծում է տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությանը բնորոշ երեք գլխավոր սկզբունքները. հոգևոր բնույթը՝ «սուրբ», «կրոնական» և «խաչի դրոշմը կրող» արտահայտություններով, սակայն, այն, ինչը նույնիսկ հոգևորից ավելի է՝ մասնավորապես տևտոնականների տեղի ու դերի ընդգծումն է (քաղվածքի վերջին մասում) աստվածային նպատակների իրականացման գործում: Որոշակի ոգևորությամբ հիշատակվում է նրանց գործունեության ոլորտների և ռազմական հզորության, ինչպես նաև նրանց բարեգործությունների հետ անքակտելիորեն կապված հյուրընկալության մասին («ծառայել հիվանդներին», «նվերներ ընչազուրկներին»): Այսպիսով՝ ըստ հայոց թագավորների, միաբանության ասպետներին բնորոշ հոգևորությունն այն սկզբունքն է, որով նրանք առաջնորդվում են բոլոր գործողությունների ընթացքում: Հոգևոր գործունեության ոլորտն, այսպիսով, միաբանությանը վեր է դասում ամեն ինչից և իր ազդեցությունը թողնում դրա բոլոր գործողությունների վրա (կրոնական գործունեության, ռազմական գործողությունների և ամենաընչազուրկների հանդեպ տածվող ուշադրության)՝ դրանց հաղորդելով սուրբ բնույթ:

Որոշ ժամանակագրությունների հեղինակներ ասպետական միաբանությունների անդամների գործունեության այս կողմի մասին զգալ են տալիս ածականների, հավելումների կամ անվանական խմբերի միջոցով, որոնք զուգորդում են նրանց հետ: Գրիգոր Երեցը ներկայացնում է դրանցից մի օրինակ՝ տաճարականներին համեմատելով

<sup>175</sup> Ավետարան ըստ Հովհաննեսի, 12, 26:

<sup>176</sup> Ավետարան ըստ Մատթեոսի, 18, 20:

<sup>177</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:

«երկնքի դեսպանորդների» հետ և նրանց անվանելով «զորք, որը սիրում է Քրիստոսին», այն պարագայում, երբ նրանք օգնության են հասել հայոց իշխան Թորոս II-ի եղբայր Ստեփաննեին<sup>178</sup>:

Իսկ երբ Սմբատ սպարապետին վերագրվող ժամանակագրության հեղինակը մեզ տեղեկացնում է «խաչի դրոշմը կրող հանդերձանքներով եղբայրների» մասին<sup>179</sup>, դրանով նա ցանկանում է ոչ միայն նկարագրել խաչի ոսկեգօծ թիկնոցը, որը կրում են տաճարական ասպետները, այլև նրանց ներկայացնելու այս ձևով ընդգրկում է այն ամենն, ինչն այս խորհրդանիշը ներառում է:

Որոշ հեղինակներ շատ ավելի ճշգրիտ են ներկայացնում ասպետական միաբանությունների վանական կյանքը: Ներկայացված է աղքատության, ողջախոհության և հնազանդության երեք խրատը: Միխայել Ասորին շեշտը դնում է, մասնավորապես եղբայրների անձնական աղքատության վրա. «Իբրև սեփականություն՝ բացարձակապես ոչինչ չունեին, սակայն, իրենց տիրույթները դարձնում էին համընդհանուր սեփականություն»<sup>180</sup>: Հակոբիկյան պատրիարքը հիշատակում է մի ասույթի մասին, որը վերաբերում է նրան, ով կարող էր չհետևել այս խրատին. «Եթե հայտնի է դառնում, որ որևէ մեկը համայնքից ինչ-որ բան է թաքցրել կամ եթե հայտնաբերում են, որ նա մահանալիս ունեցել է որևէ բան, որը չի տվել համայնքին՝ նրան արժանի չեն համարում հուղարկավորելու»<sup>181</sup>:

Այս ասպետների բարոյական անաղարտության մասին հիշատակվում է թե՛ Միխայել Ասորու ժամանակագրությունում («Ինչ վերաբերում է նրանց՝ նրանք իրենց պարտադրում էին ապրել վանականի կյանքին

---

<sup>178</sup> **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 171-172; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 337-339; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 262-264: Հեղինակը կրկին բնորոշում է տաճարականների իբրև «Քրիստոսի զորքի»: Տե՛ս **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 188; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 354-357; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 273-277:

<sup>179</sup> La Chronique attribuée au Connétable Smbat, p. 59, 116-117.

<sup>180</sup> **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202: Նա նաև նշում է. «Յուրաքանչյուրն, ով դառնում էր եղբայր՝ համայնքին էր տալիս այն ամենն, ինչ ուներ»: «Նրանք ունեին հետևյալ սովորույթը: Որևէ մեկի թուլատրված չէ իբրև սեփականություն ունենալ կամ տուն, կամ փող, կամ որևէ ունեցվածք»: «Եվ ուստի, նրանք բոլորն աղքատ էին և ամեն ինչից կտրված»: Տե՛ս նույն տեղում, էջ 201-203: Տաճարականների կանոնն այս կետում հաստատում է. «Մենք հաստատակամորեն պահանջում ենք, որ ոչինչ չթաքցվի, և որ ոչ մի եղբայր չունենա որևէ բան՝ ո՛չ մթերային պաշարներ, ո՛չ սպիտակեղեն, ո՛չ բրդե հագուստ, ո՛չ որևէ այլ բան, քան պայուսակը»: Տե՛ս **L. Dailliez**, Règle et statuts de l'Ordre du Temple, Paris, 2<sup>ème</sup> éd. augmentée par *J.-P. Lombard*, 1996 (1<sup>ère</sup> éd., Paris, 1972), p. 111 (11-րդ հոդված):

<sup>181</sup> **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202:

հատուկ կանոններով, առանց կին առնելու»<sup>182</sup> և թե՛ Յուսիկ անունով գրչի՝ XIII դարում գրած հիշատակարանում. «Մերձ յաստուածապահ դղեկին Պաղղաս, ի սահմանս Անտիոք քաղաքի, [...] յորում բնակեալ են աստուածահաճոյ հարք և կուսակրան ճգնաւորք»<sup>183</sup>: Խոսքը վերաբերում է Պաղղասում հիմնավորված տաճարականների քահանաներին և ասպետներին:

Հակոբիկյան պատրիարքի աշխատություններում հնազանդությունն ի հայտ է գալիս քողարկված. «Ոչ մեկի թույլատրված չէ [...] հեռանալ առանց ղեկավարի թույլտվության [...] և ոչ էլ ասել՝ «Ես չեմ գնա», երբ ստացվում է ինչ-որ տեղ գնալուն և մահկանացուն այնտեղ կնքելուն առնչվող հրաման»<sup>184</sup>:

Ասպետական միաբանությունների առօրեական կյանքը ևս Միխայել Ասորու առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է: Աղոթքները<sup>185</sup> կարևոր տեղ են զբաղեցնում եղբայրների գործունեության ոլոր-

---

<sup>182</sup> Նույն տեղում: Տաճարականների կանոնադրությունում կարելի է կարդալ. «Թո՛ղ որ բարոյական անաղարտության ծաղիկը միշտ անպակաս լինի մեզմից»: Տե՛ս **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 114 (հոդված 53): Ինչպես նաև. «Մենք հավատում ենք, որ ցանկացած կրոնի համար կանանց դեմքին նայելը կործանարար է: Եվ դրա համար թո՛ղ որ ձեզմից ոչ մեկն իրեն թույլ չտա համբուրել որևէ կնոջ, այրու, կույսի, ո՛չ էլ իր մորը, իր քրոջը, իր մորաքրոջը և կամ որևէ այլ կնոջ: Այսպիսով, Հիսուս Քրիստոսի ասպետները պետք է ցանկացած ձևով խուսափեն կանանց համբուրելուց, որի հետևանքով տղամարդիկ բազմաթիվ առիթներով զոհվել են: Թո՛ղ որ նրանք հավերժ երիտասարդ մնան և ապրեն Աստծո առջև մաքուր խղճով ու հաստատուն կյանքով» (նույն տեղում, էջ 118, հոդված 68): Եվ կամ. «Բարոյական անաղարտությունն արիության և մարմնի առողջության գրավականն է, որովհետև եթե որևէ եղբայր չի խոստանում լինել բարոյապես անաղարտ, նա չի կարող ո՛չ հասնել հավիտենական հանգստի և ո՛չ էլ տեսնել Աստծոն և այլն» (նույն տեղում, էջ 106-107, հոդված 27):

<sup>183</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158, թիվ 114:

<sup>184</sup> **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202: Պատրիարքն ավելացնում է. «Տարվա վերջին նրան, ով համաձայնվում է և խոստանում կրել լուծը՝ նրանք աղոթում են և հագցնում իրենց հագուստները»: Հնազանդության խոստումի առիթով տաճարականների կանոնադրությունում գրված է. «Բոլոր այն եղբայրների համար, որոնք երդվում են, պատշաճ է, որ [...] նրանք հաստատակամորեն հնազանդվեն Տիրոջը, քանզի Հիսուս Քրիստոսի համար հնազանդությունից թանկ ոչինչ չկա»: Տե՛ս **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 109 (հոդված 35):

<sup>185</sup> Միաբանության նախնական կանոնադրությունում ամրագրված է, որ տաճարականները պետք է «անկեղծ ցանկությամբ միշտ լսեն ժամերգության առաջին մասը և ժամերգությունն ամբողջությամբ՝ խստագույնս հետևելով կանոններին և Երուսաղեմ Սուրբ քաղաքի վանական առաջնորդների (այն է՝ Աստծո գերեզմանի կանոնիկոսների – *Մ.-Ս. Շ.*) սովորույթներին»: Հաշվի են առնվում նրանց առաքելության առանձնահատկությունը և դրա հնարավոր հետևանքները, քանզի այնուհետև ճշգրտվում է. «Սակայն, երբ միաբանության և Արևելքի քրիստոնեության կարիքների համար, ինչը կարող է հաճախ պատահել, եղբայրներից մեկը միաբանությունից դուրս է ուղարկվում և չի կարողանում ծիսակատարություններ մատուցել Աստծոն, նա պետք է ժամերգության առաջին մասում



տում, սակայն պատրիարքը դրանց վրա չի ծանրանում<sup>186</sup>: Հուսիկ գրչի հիշատակարանում շատ ավելի արտահայտիչ ձևով նկատելի է ժամերգությունների կարևորությունը (Պաղրասի) տաճարականների համար. «Եւ անդադար Սաղմոսի եւ արհնութեամբ, ի տուէ եւ ի գիշերի, երգովք հոգեւորաւք եւ ձայնիւք քաղցրութեամբ փառաւորեն զամենասուրբ Երրորդութիւն, որ է արհնեալ յաւիտեան»<sup>187</sup>:

Միխայել Ասորին հետաքրքրվում է նաև, թե ինչպիսիք են տաճարականների կազմակերպական հիմունքները նրանց միաբանության շրջանակում (նա հիշատակում է միաբանության մեջ մտնելու ձևերի, եղբայրների միջև առաջադրանքների բաշխման, անդամների միջև աստիճանակարգության մասին)<sup>188</sup>, սննդի<sup>189</sup> և հանդերձավորման<sup>190</sup> հարցերում՝ նաև վանականի կենսակերպին համապատասխանող նրանց սովորույթներով:

Աղքատների նկատմամբ գթասրտությունը հոգևոր բոլոր միաբանություններին բնորոշ պարտականություններից է, անկախ այն բանից՝ ասպետական, թե ոչ, և տաճարականները, հիվանդախնամներն ու տևողականներն այս ասպարեզում բացառություն չեն: Ռայմոնդ-

---

«հայր-մերն» ասի տասներեք անգամ, իսկ ժամերգություններից յուրաքանչյուրի ժամանակ՝ յոթ անգամ, երեկոյան ժամերգության ժամանակ՝ ինն անգամ»: Բայց մենք նախընտրում ենք, որ նա մասնակցի ամբողջ ժամերգությանը»: Տե՛ս **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 101-102 (հոդվածներ 9 և 10):

<sup>186</sup> «Նրանք աղոթում են»: Տե՛ս **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202:

<sup>187</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158, թիվ 114:

<sup>188</sup> **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202:

<sup>189</sup> «Նրանց սնունդը (կարգավորված է) այս ձևով. կիրակի, երեքշաբթի և ուրբաթ օրերին նրանք ուտում են միս, իսկ մյուս օրերին՝ ձու, պանիր, խմուն են կաթ: Ամեն օր հացի հետ զինի խմուն են միայն իրենց եկեղեցիներում ժամերգություն անցկացնող քահանաները, ինչպես նաև զինվորները, այն է՝ հեծյալներն իրենց վարժությունների և հետևակայինները՝ մարտերի ժամանակ»: Նույն տեղում, էջ 202: Ըստ տաճարականների կանոնադրության՝ եղբայրները միս կարող են ուտել շաբաթական երեք անգամ, որը համապատասխանում է Միխայել Ասորու խոսքերին. մյուս օրերին նրանք սնվում են բանջարեղեններով կամ ապուրով: Տե՛ս **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 104, հոդվածներ 17, 19 և 20 (վերջին հոդվածը վերաբերում է պասի ժամանակահատվածներին): Ասպետական միաբանությունների անդամների սննդին առնչվող սովորույթները ճշգրտվել են նրանց ռազմական գործունեության լույսի ներքո:

<sup>190</sup> «Նրանց հանդերձանքը բաղկացած է շատ պարզունակ սպիտակ հագուստից, ինչից բացի նրանք ուրիշ ոչինչ չեն կարող հագնել: Երբ նրանք քնում են՝ իրավասու չեն հանել հագուստը կամ ձեռքից բաց թողնել սանձը»: Տե՛ս **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 202: Կանոնադրությունը կարգավորում է եղբայրների թիկնոցների գույները. ասպետների համար՝ սպիտակ թիկնոց, զինակիրների և սերժանտների համար՝ սև թիկնոց: Տաճարականների հագուստի մասին տե՛ս **L. Dailliez**, նշվ. աշխ., էջ 106-108 (հոդվածներ 27, 28, 29 և 30):

Ռուբենն այստեղ չի սխալվում, երբ հիվանդախնամների առիթով նշում է «Երուսաղեմի հիվանդանոցի աղքատների միաբանության» մասին<sup>191</sup>: Յեթում I-ն ու Ջապելը ևս չեն սխալվում, երբ տևողականների Սուրբ Մարիի միաբանությանը շնորհվող հրովարտակում հաղորդում են, որ վերջիններս «միշտ ընծաների միջոցով հոգում են ընչազուրկների [կարիքները]»<sup>192</sup>: Միխայել Ասորին այս առիթով բավական պարճախոս է և դա երբեմն արտահայտում է փոքր-ինչ ընդհանուր ձևով. «Նրանք գթասիրտ են բոլոր նրանց նկատմամբ, ովքեր պաշտում են խաչը և նրանց մերձավորներն են»<sup>193</sup>: Սակայն, այս թեմայի շուրջ նա հանդես է գալիս նաև ավելի հստակորեն<sup>194</sup>: Նա հիշատակում է նաև սովի ժամանակ Երուսաղեմում տաճարականների բաժանած սննդի, ինչպես նաև այն մասին, որ Քրիստոսի այս ասպետները գիտակցաբար անձնագոհության են դիմել, քանզի ցանկացել են այդուհետև ևս աղքատներին հատկացնել հացահատիկի միևնույն քանակը, չնայած իրենց պաշարների՝ անհանգստություն պատճառող նվազմանը: Ոգևորված՝ Միխայել Ասորին հիշատակում է մի աստվածային հրաշքի մասին, որը եղբայրներին թույլատրել է մեծահոգի վճռի կայացումից հետո իրենց նկուղները կրկին լեցուն տեսնել<sup>195</sup>:

<sup>191</sup> J. Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 122-123, թիվ 1355:

<sup>192</sup> V. Langlois, նշվ. աշխ., էջ 141-143; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>193</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 203:

<sup>194</sup> «Չացահատիկի և այլնի բերքահավաքներից, ինչպես նաև գինուց ստացվող հատույթի տասներորդ մասը նրանք բաժանում են աղքատներին: Ամեն անգամ, երբ իրենց տներից մեկում նրանք հաց են թխում՝ տասից մեկը պահում են աղքատների համար: Այն օրերին, երբ սեղան են պատրաստում և երբ եղբայրները հաց են ուտում, այն ամենն, ինչ մնում է՝ տրվում է աղքատներին: Շաբաթական երկու անգամ, հատկապես աղքատներին, նրանք բաժանում են հաց և գինի»: Նույն տեղում, էջ 202-203: Պատրիարքը հետաքրքրվում է որոշակի յուրահատուկ պայմաններում ամենաընչազուրկների համար նախատեսված ընծաներով. «Երբ որևէ մեկը վախճանվում է՝ նրա համար նրանք քառասուն պատարագ են մատուցում: Նրա համար նրանք աղքատներին կերակրում են քառասուն օր և օրական քառասուն մարդու»: Նույն տեղում, էջ 202: Այստեղ, Միխայել Ասորու դատողությունները համապատասխանում են այն ամենին, ինչը կարելի է կարդալ տաճարականների կանոնադրությունում. «Սենք նաև խնդրում ենք և կարգադրում մեր հովվական իշխանությանը, որ աղքատը կերակրվի մսով և նրան գինի տրվի մինչև քառասուներորդ օրը՝ ի հիշատակ վախճանված եղբոր, կարծեք, նա դեռևս կենդանի է»: Տե՛ս L. Dailliez, նշվ. աշխ., էջ 102, հոդված 11: Գթասրտության մասին տե՛ս նաև 21-րդ և 71-րդ հոդվածները (էջ 105, 118):

<sup>195</sup> «Այս ժամանակաշրջանում Երուսաղեմում մեծ սով բռնկվեց: Սակայն, այս «փրկերները» [...] ըստ իրենց սովորույթի, աղքատներին էին հատկացնում և բաժանում առանց նվազեցնելու [...]: Տե՛րը [...] նրանց այցելեց: Չենց որ կառավարիչները ներս մտան՝ տե-

Հիվանդախնամների և տևողականների միաբանություններին հավասարապես բնորոշ են հիվանդների նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը և հիվանդախնամային գործունեությունը<sup>196</sup>, ինչը հատուկ է տաճարականների զորքին: Հայ գահակալներն այստեղ դուրսագրաց են. Ռայմոնդ-Ռուբենը Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի հիվանդանոցը բնորոշում է իբրև «Երուսաղեմի հիվանդների հիվանդանոցի միաբանություն»<sup>197</sup>, իսկ՝ ըստ Հեթում I-ի և նրա կնոջ Ջապելի, գերմանացիների հիվանդանոցի միաբանությունը «նշանավորվել է և ամրապնդվել հիվանդներին ցուցաբերած աջակցության ընթացքում»<sup>198</sup>: Միխայել Ասորին նկարագրում է եղբայրների՝ հիվանդներին ուղեկցելու ամբողջ ընթացքը, անկախ այն բանից, թե նրանց հովանավորյալների համար ինչպիսին է արդյունքը. «Իրենց բոլոր երկրներում, և, մասնավորապես Երուսաղեմում, նրանք հիմնադրեցին հիվանդանոցներ, այնպես, որ ցանկացած օտարերկրացի, որը հիվանդանում է, դրանցում տեղ է գտնում: Նրանք նրան ծառայություններ են մատուցում և խնամում մինչև ապաքինումը և այդ պարագայում՝ տեղափոխության համար նրան հատկացնում են դրան ու խաղաղությամբ ետ ուղարկում, իսկ եթե նա վախճանվում է՝ հոգում են նրա հուղարկավորության ծախսը»<sup>199</sup>:

Հոգևորասպետական միաբանությունների ընկալման ասպարեզում Միխայել Ասորին հատում է փաստերի պարզունակ գունազարդման սահմանը, քանզի երբեմն գերբնական կամ նաև բնական, սակայն, բացառիկ՝ երկնային լուսատուների հետ կապված երևույթները համակցում է տաճարականների զորքի մասին հիշատակմանը: Մենք արդեն անդրադարձանք դրանց համառոտ ուրվագծին, երբ խոսքն առնչվեց Սուրբ քաղաքում միաբանության նկուղների մթերային պաշարներին վերաբերող հրաշագործությանը: Պատրիարքը նմանապես հիշատակում է արևի խավարման ժամանակ «քառասուն «Փրեր» հեծյալների [...]՝ չորս հարյուր այլ քրիստոնյաների և սարկավագ Բար Քորուայի

---

սան, որ բոլոր նկուղներն առատորեն լեցուն են ու լի հացահատիկով, գարով, գինով և բանջարեղեններով»: **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 207-208:

<sup>196</sup> Երուսաղեմի Սուրբ Հովհաննեսի միաբանության եղբայրների հիվանդախնամային գործունեության մասին տե՛ս **S. Edgington**, *Medical Care in the Hospital of St John in Jerusalem.*— **H. Nicholson**, *Military Orders*, p. 27-33; տևողականների գործունեության մասին տե՛ս **K. Miltzer**, նշվ. աշխ., էջ 51-59; **B. Demel**, նշվ. աշխ., էջ 61-73:

<sup>197</sup> **J. Delaville-le-Roulx**, նշվ. աշխ., էջ 70-71, թիվ 1262:

<sup>198</sup> **V. Langlois**, նշվ. աշխ., էջ 141-143; **E. Strehlike**, նշվ. աշխ., էջ 65-66, թիվ 83; **K. Forstreuter**, նշվ. աշխ., էջ 235-236:

<sup>199</sup> **Michel le Syrien**, նշվ. աշխ., էջ 203:

հետ մեկտեղ» վախճանի մասին՝ համակցելով երկու իրադարձությունը<sup>200</sup>:

Ասպետական միաբանությունների անդամների գործունեության կրոնական և հոգևոր ոլորտի վերջին ծայրահեղ կողմը, որը նկատելի է Արևելքի քրիստոնյաների աշխատություններում՝ մինչև մուլուցքի վերջին՝ նահատակության սահմանագծին հասցված հավատքն է: Կեղծ Սմբատի ժամանակագրությունում դառնում ենք հանուն Աստծո սիրո՝ տաճարականների և հիվանդախնամների ծայրահեղ զոհաբերության ակամատեսը: Հաթիմի ջախջախումից հետո, 1187 թ., Սալահ էդ-Դինն ասպետական միաբանությունների անդամներին առաջարկել է ուրանալ հավատքը և դարձի գալ իսլամի՝ «նվերների» և «պատիվների» դիմաց, սակայն, եղբայրները, չնայած այս շահավետ առաջարկությանը, նախընտրել են մեռնել՝ տաճարականների մագիստրոսի՝ հեղինակի կողմից նրան վերագրվող սրտաճնլիկ հորդորից հետո<sup>201</sup>: Եղբայրների նահատակությանը հստակորեն անդրադարձել են որոշ ժամանակագիրներ, ինչպես Գրիգոր Երեցը, որը հիշատակել է քրիստոնյաների կողմից 1153 թ. Ասկաղոնի պաշարման մասին. «Այս պաշարման ընթացքում, մի ամբողջ տարի, ֆրանկների քաջարի ազգը, ինչպես նաև նրանց խիզախ և սուրբ թագավորը, շատ ուժասպառ եղան: Նրանցից և եղբայրներից շատերն արժանացան նահատակի լուսապսակի»<sup>202</sup>: Ըստ Միխայել Ասորու՝ տաճարականներն իբրև «նահատակների են դիտում նրանց, ովքեր զոհվում են ճակատամարտերում»<sup>203</sup>: Այսպիսով, Արևելքի քրիստոնյաների սկզբնաղբյուրների հեղինակների համար գոյություն ունի նահատակ եղբայրների երկու խումբ. նրանք, ովքեր մահացել են՝ քանզի չեն ցանկացել ուրանալ իրենց հավատքը (Կեղծ Սմբատ), և նրանք, ովքեր կյանքից զրկվել են հանուն իրենց գործի, այսինքն այն պայքարի, որը

---

<sup>200</sup> Նույն տեղում, էջ 235-236:

<sup>201</sup> «Եղբայրներ, ահա և հասել են մեր հոգիների փրկության օրերը, որոնք մեզ հնարավորություն կտան հասնել Դրախտին, ինչն էս ձեզ հավաստիացնում են: Քրիստոսին սիրելու հարցում եղեք համերաշխ և անսասան. մենք այսօր կխառնենք մեր արյունը նրա՝ Փրկչի արյանը. չերկյուղենք նրանցից, ովքեր սպանում են մարմինները և թույլ չտանք, որ անցողիկ կյանքի հրապույրները մեզ խաբեն»: Տե՛ս La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62-63: Այդուհանդերձ, թվում է, թե այս ելույթն ունեցել է ոչ թե ժիրայր ող Ռիդեֆորը՝ միակ տաճարականը, որն անվնաս է մնացել այս պատահարից, այլ միաբանության՝ Սիկոլա անունով ասպետը (ըստ՝ L'Itinerarium Peregrionorum et gesta regis Ricardi, cité par S. Der Nersessian, The Armenian Chronicle, p. 753, note 40; Etudes, p. 362, note 40; La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62, note 64):

<sup>202</sup> Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 184; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 350-351; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 270-271:

<sup>203</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 202:

Սուրբ երկիրը քրիստոնյաներին վերադարձնելու համար մղվել է նրանց դեմ, ուն իրենք դիտել են իբրև անհավատների, այն է՝ մահմեդականների (Գրիգոր Երեց և Միխայել Ասորի): Ասպետական միաբանությունների գործունեության կրոնական և հոգևոր ոլորտի հենց այս վերջին բնորոշումն է մեզ հնարավորություն ընձեռում կապ հաստատել Քրիստոսի այս ասպետներին բնորոշ ռազմատենչությունը ներկայացնելու հետ:

### *Բ – Եղբայրների ռազմական կոչումը*

Արևելքի քրիստոնյաներին ակնհայտ է թվում, որ հոգևորասպետական միաբանությունների անդամները շարքային զինվորներ չեն: «Անպարտելի զորք» և «Քրիստոսի զորք» արտահայտությունները, որոնցով նրանց բնորոշել է Գրիգոր Երեցը<sup>204</sup>, վկայում են աստվածային այն առաքելությունը ներկայացնելու ձևի մասին, որը նրանք կոչված են իրականացնել:

Եղբայրների նախնական առաքելությունը կրում է որոշակի ռազմական բնույթ, որն, ի դեպ, բխում է հակոբիկյան պատրիարքի աշխատություններից. «Բողոկն II-ի իշխանության սկզբում, մի ֆրանկ մարդ [...] ցանկություն է հայտնել [...] վանական դառնալ, այն բանից հետո, երբ երեք տարի շարունակ՝ թե՛ ինքը և թե՛ նրան ուղեկցող երեսուն հեծյալը թագավորին օգնել են պատերազմի ընթացքում [...]: Երբ թագավորը և նրա մեծերը տեսել են, որ այս երեք տարվա ընթացքում նրանք պատերազմում հռչակվել են և իրենց ծառայությամբ քաղաքին օգտակար եղել, այդ մարդուն խորհուրդ են տվել՝ իր կողքին գտնվողների հետ մեկտեղ ծառայել զորքում՝ վանական դառնալու և միայն իր հոգին փրկելու ուղղությամբ ջանքեր գործադրելու և այդ վայրերը գողերից պաշտպանելու փոխարեն»<sup>205</sup>: Իրոք, միաբանության հիմնադրման նախնական նպատակը հանգել է ուխտագնացներին հովանավորելուն և սուրբ վայրերի պաշտպանությանը<sup>206</sup>: Լատինների և

---

<sup>204</sup> Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 171-172, 188, 189; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 335, 337-339, 354-357; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 262-264 (թարգմանված է իբրև «Քրիստոսի սիրելիներ»), 273 («անպարտելի ուժեր»):

<sup>205</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201:

<sup>206</sup> Տաճարականների միաբանության հիմնադրման մասին տե՛ս A. Demurger, Les Templiers. Une chevalerie chrétienne au Moyen Age, Paris, 2005, p. 27-31; *Նույնի՛* Chevaliers du Christ, p. 36-40; M. Barber, նշվ. աշխ., էջ 1-37:

նույնիսկ հայոց գահակալների կողքին՝ տաճարականներն ավելի ուշ են մասնակցել մարտերին:

Հայերի և ասորիների՝ եղբայրների պատերազմական գործունեության ոլորտի վրա նետած հայացքը նկատելի է այն մարտերի պատմությունների հենքի վրա, որոնց վերջիններս մասնակցել են, անկախ այն բանից, թե խոսքն ինչին է վերաբերում՝ ռազմական արշավանքներին, թե տարածքների կամ ամրոցների պաշտպանությանը: Հեթում պատմիչն իր «Ծաղիկք պատմութեանց Արևելից» գրքում ներկայացնում է, թե ինչ ձևով են տաճարականներ և հիվանդախնամներ ընդգրկող՝ քրիստոնյաների զորքերը մոնղոլ խան Ղազանի կանչով ժողովվել՝ մանլուքներին համատեղ դիմակայելու նպատակով<sup>207</sup>: Միննույն հեղինակն իր ժամանակագրությունում հիշատակում է բազմաթիվ ճակատամարտերի մասին, որոնցում ասպետական միաբանությունների անդամները հռչակվել են և կամ հաճախ կնքել մահկանացուն<sup>208</sup>. օրինակ՝ 1289 թ. ապրիլին, Կալաուն սուլթանի կողմից Տրիպոլիի գրավման ժամանակ<sup>209</sup>: Բազմաթիվ գրիչներ և պատմիչներ իրենց հիշատակարաններում հաղորդում են, թե ինչպես են ասպետական միաբանությունները 1291 թ. ապարդյուն ջանքեր գործադրել Սեն-ժան դ'Ակրան պաշտպանելու համար<sup>210</sup>: Ինչ վերաբերում է Կեղծ Սմբատին, ապա նա հիշատակում է եղբայրների մասնակցության մասին բազմաթիվ մարտերի, մասնավորապես Հաթինում, ինչպես արդեն առիթն ունեցանք տեսնել<sup>211</sup>: Այդուհանդերձ, այս սկզբնաղբյուրները բավարարվում են ռազմի դաշտում կամ պաշարման ժամանակ ասպետական միաբանությունների մասնակցության մասին պարզունակ հիշատակմամբ: Դրանք չեն ծանրանում մարտը վարելու նրանց հմտության, կիրառած միջոցների կամ ռազմավարության վրա, այլ հիշատակում են միայն հանդիպումների ավարտի մասին և ներկայացնում եղբայրներին՝ հաղթանակի, ինչպես նաև պարտության պարագայում, վկայելով անհաջողության դեպքում նրանց վիճակված ճակատագրի մասին:

Երբեմն տաճարականները, հիվանդախնամները և տևտոնականները պարտության արդյունքում ներկայացված են իբրև գերիներ: XII դա-

---

<sup>207</sup> Haython, նշվ. աշխ., էջ 196-199 (լատիներեն տարբերակում՝ էջ 320-321); « La Fleur des histoires de la terre d'Orient », p. 851-852.

<sup>208</sup> Հեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60, 65, 66, 67, 68, 74, 75-76, 77:

<sup>209</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>210</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 706-713, թիվ 574; էջ 718-720, թիվ 579:

<sup>211</sup> La Chronique attribuée au Connétable Smbat, p. 62-63.

րի հայկական հիշատակարաններից մեկում Սալահ Էդ-Դինի մասին գրիչը գրում է. «Եւ ձերբակալ արարեալ զթագաւորն եւ զարս պատերազմողս, որ կոչին փրերք»<sup>212</sup>: Վերստին Յաթինի ճակատամարտի առիթով՝ Անանուն Եղեսացին ավելի հանգամանորեն հաղորդում է. «Ավելի քան հարյուր հիսուն ազնվական՝ տաճարականների և հիվանդախնամանների եղբայրների թվից, բռնվեցին և ուղարկվեցին Դամասկոսի բանտ, բացի ծեր իշխան Ռենոյից, ում գլխատեցին Սալահ Էդ-Դինի ներկայությամբ՝ շատ այլ առաջնորդների հետ մեկտեղ, որոնք սպանվեցին նրա վրանի առջև»<sup>213</sup>:

Արևելքի քրիստոնյաների սկզբնաղբյուրներում հաճախ է հիշատակվում հոգևորասպետական միաբանությունների եղբայրների մահվան մասին, անկախ այն բանից, թե որտեղ է դա տեղի ունեցել՝ մեծ ճակատամարտերի ընթացքում, ինչպես Յարիմում՝ 1163 թ.<sup>214</sup>, թե Յաթինում՝ 1187 թ.<sup>215</sup>, պաշարումների ժամանակ, օրինակ՝ քրիստոնյաների կողմից Ասկաղոնի գրավման ժամանակ՝ 1153 թ. օգոստոսի 19-ին<sup>216</sup>, կամ գուցե նվազ նշանակալից մարտերում: Մահը հաճախ ստանում է յուրահատուկ, արտասովոր բնույթ, քանզի այն, ինչպես տեսանք վերը, մերձենում է նահատակությանը:

Արևելքի քրիստոնյաները հաշվի են առել նաև եղբայրների տիրապետության տակ գտնվող քաղաքների և ամրոցների կորուստը. օրինակ՝ 1268 թ. տաճարականների Պաղրաս բերդամրոցի<sup>217</sup> կամ հիվանդախնամանների Ասպետների Կրակ ամրոցի, իսկ 1271 թ. տևտոնականների Մոնֆոր ամրոցի<sup>218</sup>: Ամենաակնհայտ պարագան, որը տարբեր պատմություններում առավել հաճախ է կրկնվում՝ վերաբերում է Սեն-ժան

<sup>212</sup> Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 272, թիվ 280:

<sup>213</sup> *Anonyme syriaque*, p. 148-149.

<sup>214</sup> «Նուր Էդ-Դինը պաշարեց Յարիմը: Այդ ժամանակ հինգ իշխան՝ Անտիոքի իշխանը, Տրիպոլիի կոմսը, Թորոս Կիլիկեցին, հույն Դուկաս Տարսոնեցին և եղբայրների առաջնորդը՝ շուրջ տասներեք հազար հեծյալով և հետևակայինով միավորվեցին: Նրանք հանդիպեցին Նուր Էդ-Դինի հետ և ֆրանկներն անփառունակ կտրատվեցին մասերի: [...] Բոլոր եղբայրները սպանվեցին: [...] Նուր Էդ-Դինը գրավեց Յարիմը և հունական Սիմեոն վանքը»: Տե՛ս *Michel le Syrien*, նշվ. աշխ., էջ 324-325: Գրեթե տառացիորեն միևնույն հատվածը կարելի է գտնել Բար Յեբրեսուի մոտ: Տե՛ս *Bar Hebraeus*, նշվ. աշխ., էջ 288:

<sup>215</sup> *La Chronique attribuée au Connétable Smbat*, p. 62-63.

<sup>216</sup> *Grigor Yerets*, նշվ. աշխ., էջ 184; *Matthieu d'Edesse*, նշվ. աշխ., էջ 350-351; *A. E. Dostourian*, նշվ. աշխ., էջ 270-271:

<sup>217</sup> Հիշատակել է Յեթում պատմիչը. տե՛ս Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 74:

<sup>218</sup> Նույն տեղում, էջ 75:

դ'Ակրա քաղաքի կորստին<sup>219</sup>:

Չնայած եղբայրների հանդեպ որոշ ժամանակագիրների դրսևորած հարգալից վերաբերմունքին, Քրիստոսի ասպետների անվեհերությունն ու ռազմական արժանիքները երբեմն կասկածի տեղիք են տալիս. դա հավաստվում է Յովհաննես Երզնկացու գրած հիշատակարանում, ինչը ևս առնչվում է Ակրայի անկմանը. «Իսկ Չես (1291) թուին, որդին Ալֆե մելիք Աշրաֆ անուն<sup>220</sup>, խակամիտ և գազանաբարու, առ զմեծահռչակ և բազմամբոխ քաղաքն զԱքայ, զոր ունեին ազգ ֆրեբացն, տունն Դամբլուն և Ոսպեթալին, անարի և թոյլ գտեալ ազգն արիական առաջի անաւրիհացն: Մատնեցաւ քաղաքն ի պաշարումն և առաւ, և սպառեցան սպանմամբ սրոյ և գերութեամբ»<sup>221</sup>:

Հարկ է նկատի ունենալ միաբանությունների ռազմական դերի ընկալման մեկ այլ դրսևորում ևս: Խոսքը վերաբերում է այն բանին, թե ինչպես են հայկական թագավորական պետական դիվանից ելնող տարբեր հրովարտականների հենքի վրա գահակալներն ընկալել յուրաքանչյուր միաբանության: Այսպիսով, ներկայացման այս ձևը փոփոխվում է՝ ըստ գահակալի (որին վերաբերում է խոսքը) և հրովարտական հիշատակված միաբանության միջև գոյություն ունեցած փոխհարաբերությունների: Իբրև օրինակ՝ նշենք, որ Լևոն I-ը գրեթե մշտապես գանգատվում է իր նկատմամբ տաճարականների թշնամական դիրքորոշումից, քանզի թշնամանքը երբեմն հասնում էր մինչ բացահայտ առճակատման<sup>222</sup>, այն պատճառով, որ տաճարականների միաբանությունը զորավիզ էր Տրիպոլիի կոմսի շահերին՝ ի վնաս Կիլիկյան Հայաստանի թագավորի եղբոր թոռան՝ Ռայմոնդ-Ռուբենի: *A contrario*\*, Լևոնը հրճվում էր հիվանդախնամների՝ այս առճակատման ընթացքում դրսևորած զուսպ դիրքորոշմամբ<sup>223</sup>: Այս թագավորը, իսկ ավելի ուշ Յեթում I-ը, երախտագիտությամբ են հիշատակում Երուսաղեմի Սուրբ Յովհաննեսի և տևտոնականների Սուրբ Մարիի հիվանդանոցների միաբանությունների՝ իրենց թագավորությանը ցուցաբերած ռազ-

<sup>219</sup> Stépannos Orbélian, նշվ. աշխ., էջ 245-246; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 706-713, թիվ 574; էջ 718-720, թիվ 579:

<sup>220</sup> Խոսքը վերաբերում է մամուլի սուլթան ալ-Աշրաֆ Խալիլին:

<sup>221</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574:

<sup>222</sup> Տե՛ս Լևոն I-ի՝ Իննուկենտիոս Գ պապին հղած նամակը. հմմտ. Innocent III.– PL, t. 215, cols. 687-692, N 119:

\* Լատ.– Փոխարենը: – Ծ. ք.:

<sup>223</sup> Նույն տեղում:



մական աջակցության մասին<sup>224</sup>:

Արևելքի քրիստոնյա որոշ հեղինակների հետաքրքրում է ասպետական միաբանությունների ստորակարգությունը: Միխայել Ասորին ջանում է վերականգնել, ընդհանուր գծերով, միաբանությունների ներքին կառուցվածքը՝ հիշատակելով ոմանց պարտականությունների մասին. «Ամեն օր հացի հետ միասին գինի են խմում միայն իրենց եկեղեցիներում պատարագ մատուցող քահանաները, ինչպես նաև զինվորները, այն է՝ հեծյալներն իրենց վարժությունների ժամանակ և հետևակայինները՝ մարտերի ընթացքում: Աշխատավորներից յուրաքանչյուրը զբաղվում է իր արհեստով, նույն ձևով են վարվում դաշտերի աշխատավորները: Յուրաքանչյուր քաղաքում և գյուղում, ուր նրանք տուն ունեն՝ կա մի ավագ և տնտեսությունը վարող և նրանց կարգադրությամբ՝ այդտեղ գտնվողներից յուրաքանչյուրը զբաղվում է իր գործով: Բուրդի վերադասը Երուսաղեմում է: Նա ղեկավարում է ամենքին և նրանցից ոչ մեկին երբևէ չի թույլատրվում սեփական նախաձեռնությամբ որևէ բան անել»<sup>225</sup>:

Իրոք, ասպետական միաբանությունների անդամների թվում կարելի էր հանդիպել հոգևորական եղբայրների, քահանաների կամ ժամերգությունն անցկացնող երգչախմբային եղբայրների և մարտնչող աշխարհիկ եղբայրների, հեծյալների ու սերժանտների: Կար նաև անձնակազմ՝ միաբանությունների կյանքի համար անհրաժեշտ՝ գյուղատնտեսությամբ և արհեստագործությամբ զբաղվելու համար: Ինչ վերաբերում է Յեթում պատմիչին, ապա նա միաբանությունների առաջնորդների մասին ունի հիմնավոր իմացություն, քանզի իր ժամանակագրությունում ճշգրտում է ասպետական երեք մեծ միաբանությունների զանազան մագիստրոսների ինքնությունը և նրանց հիշատակում՝ ըստ այն իրադարձությունների և երբեմն նույնիսկ բարձրաստիճան անձանց, որոնց անդրադառնում է, ինչպիսին է տաճարականների մարեշալը<sup>226</sup>:

#### *Գ – Գործունեության քաղաքական ոլորտը*

Ռազմական կոչումից բացի այս միաբանություններին բնորոշ են ինքնուրույն քաղաքական գործողությունները: Դրանք նկատելի են զա-

<sup>224</sup> J. Delaville-le-Roulx, նշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344; էջ 118-119, թիվ 1349; V. Langlois, նշվ. աշխ., էջ 117-120; E. Strehlke, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46, էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, նշվ. աշխ., էջ 234, 235-236:

<sup>225</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 202:

<sup>226</sup> Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60:

նազան հարթություններում: Մի կողմից, իրենց տիրապետության տակ՝ հաճախ գերիշխող դիրքեր զբաղեցնող բերդամրոցներ (արդեն տեսանք Պաղարասի և Սելևկիայի պարագաները) և քաղաքներ (օրինակ՝ Ակրան) ունենալը միաբանություններին և դրանց ղեկավարներին ընծեռում է վճռական դեր, որը մահմեդականների դեմ հնարավոր հարձակումների նպատակով քրիստոնյա առաջնորդների (անկախ այն բանից՝ Մերձավոր Արևելքում հաստատված լատին կամ հայ իշխանների, թե հենց նոր ափ ելած խաչակիրների) համախմբման ժամանակ անհնար էր արհամարհել: Բացի դրանից, Արևելքի քրիստոնյաների, մասնավորապես հայերի համար, եղբայրներն ի կատար են ածում նաև դիվանագիտական առաքելություն, որը հնարավոր չէ արհամարհել: Այսպես, իր միաբանության հրահրմամբ՝ տևողական մի ասպետ ստանձնում է Իննոկենտիոս Գ-ի մոտ Լևոն Լ-ի շահերի պաշտպանությունը<sup>227</sup>: Ինչ վերաբերում է հիվանդախնամ եղբայրներին, ապա Կիլիկյան Հայաստանի թագավորին տված փոխառությամբ՝ նրանք նպաստում են նրա դուստր Ռիթայի ամուսնության ֆինանսավորմանը Երուսաղեմի թագավոր Ժան դը Բրիենի հետ<sup>228</sup>: Իսկ տաճարականներին, ի դեպ, Լևոն Լ-ի նախկին հակառակորդներին, հաջողվում է ձախողել թագավորի դեմ հյուսված դավադրությունը՝ դավադիրներին բացահայտելու միջոցով<sup>229</sup>: Իրենց աշխատություններում հայերը հավաստում են ասպետական միաբանությունների ամենահասությունն Արևելքի լատինական երկրների և Կիլիկիայի հայկական թագավորության կյանքում՝ թե՛ ռազմական և թե՛ քաղաքական ասպարեզներում:

#### *Դ – Հոգևորասպետական միաբանությունների հարստության ընկալումը*

Ասպետական միաբանությունների գործունեության տնտեսական ոլորտն Արևելքի քրիստոնյաների սկզբնաղբյուրներում ի հայտ է գալիս

<sup>227</sup> Տե՛ս Իննոկենտիոս Գ-ի՝ Լևոն Լ-ին հղած նամակը: Հմմտ. **Innocent III.**– *PL*, t. 216, cols. 54-56, N 45:

<sup>228</sup> **J. Delaville-le-Roulx**, նշվ. աշխ., էջ 165-166, թիվ 1427:

<sup>229</sup> 1217 թ. այս դավադրության պատասխանատուն Ռայմոնդ-Ռուբենն էր. “Then Lîôn, the king of the Armenians, the brother of Rûfin the Armenian, because he, Rûfin the Frank, was the son of his brother’s daughter, was enraged and he came to Antioch; and he made the people of Antioch swear oaths of fealty to him. Then this stupid man seeing that he was reigning became puffed up with pride and he wished to seize Lîôn, who had made him king, so that he might reign over Cilicia also. Then when the Brethren (Frères) knew of the plot they informed Lîôn concerning him, and he escaped without injury”. Տե՛ս **Bar Hebraeus**, նշվ. աշխ., էջ 370:

եղբայրների՝ շարժական, թե անշարժ ունեցվածքը ներկայացնելու միջոցով:

Ինչպես հաճախ, այս միաբանությունների հարստության ընդհանուր պատկերը ներկայացնում է Միխայել Ատրիին: Նախ, նա հիշատակում է նրանց արված առաջին նվիրատվությունների մասին. «Թագավորը նրանց տվեց Սողոմոնի տունը՝ բնակվելու համար և գյուղեր՝ գոյությունը պահպանելու համար: Պատրիարքը ևս նրանց տվեց եկեղեցուն պատկանող մի քանի գյուղեր»<sup>230</sup>: Պատրիարքն այնուհետև բացահայտում է նրանց ծավալման ձևերից մեկը՝ նոր անդամների ընդունելությունը. «Յուրաքանչյուրն, ով դառնում էր նրանց եղբայրը՝ համայնքին էր տալիս այն ամենն, ինչ ուներ՝ կամ գյուղ, կամ քաղաք, կամ որևէ այլ բան: Նրանք ստվարանում էին, ծավալվում և դառնում երկրների տիրակալներ ոչ միայն Պաղեստինի տարածաշրջանում, այլև, մասնավորապես Իտալիայի և Հռոմի հեռավոր տարածաշրջաններում»<sup>231</sup>: Եզրափակելուց առաջ նա իր զարմանքն է հայտնում այս միաբանությունների հարստության առիթով. «Նրանք ունեին ամրոցներ և քրիստոնյաների տիրապետության տակ գտնվող բոլոր երկրներում իրենք իսկ կառուցում էին ամրոցներ: Նրանց հարստությունը բազմապատկվեց ոսկով և ցանկացած բնույթի այլ բաներով՝ ցանկացած տեսակի սպառազինությամբ, ոչխարների, եզների, խոզերի, ուղտերի, ձիերի հոտերով, ինչը գերազանցում էր բոլոր թագավորների հարստությանը»<sup>232</sup>: Ըստ էության, ասպետական միաբանությունների տիրապետության տակ գտնվում էին բազմաթիվ գյուղեր, քաղաքներ և դոյակներ՝ տնամերձ տարածքներով, սակայն, նույնն ասել ամբողջ երկրների մասին՝ չափազանցություն է, քանզի «երկրներ» բառի իմաստն այն ժամանակ կարող էր ավելի մերձենալ «տարածաշրջաններ» բառի իմաստին<sup>233</sup>:

Ավելի ուշ և ավելի հստակորեն հայոց գահակալների նվիրատվական փաստաթղթերում նկարագրված են ասպետական միաբանու-

<sup>230</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201:

<sup>231</sup> Նույն տեղում, էջ 201-202:

<sup>232</sup> Նույն տեղում, էջ 203:

<sup>233</sup> Ասպետական միաբանությունների սեփականության և ֆինանսական գործունեության մասին, ընդհանուր առմամբ, տե՛ս **A. Forey**, *The Military Orders from the Twelfth to the Early Fourteenth Centuries*, London, 1992, p. 58-77, 98-132; **A. Demurger**, *Chevaliers du Christ*, p. 160-162: Ավելի մասնավորապես հիվանդախնամների առնչությամբ տե՛ս **J. S. C. Riley-Smith**, *The Knights of St John in Jerusalem and Cyprus, 1050-1310*, Edimbourg, 1967, p. 421-469; **M. Ballard**, *I possedimenti degli Ospedalieri nella Terrasanta (secoli XII-XIII)*.– **J. Costa-Restagno** (dir.), *Cavalieri di San Giovanni e Territorio*, Bordighera, 1999, p. 473-505: Տաճարականների մասին տե՛ս **M. Barber**, նշվ. աշխ., էջ 229-279; **A. Demurger**, *Les Templiers*, p. 273-329: Տևողականների մասին տե՛ս **K. Toomaspoeg**, նշվ. աշխ., էջ 77-95:

թյունների տիրապետության տակ գտնվող տարածքների զանազան տեսակները: Օրինակ՝ դա կարելի է տեսնել 1212 թ. ապրիլին՝ տևտոնական ասպետներին Լևոն I-ի շնորհած հրովարտականում. «Ես տալիս եմ և նվիրում այսուհետև և մեկընդմիջտ շատ լավ և չափազանց ընդարձակ տիրույթների և գյուղերի հողային տարածքներ [...] Առաջին հերթին՝ Ամուղա կոչվող նշանավոր դղյակը և դրան կից՝ ստորև նշված գյուղերը՝ իրենց սեփականությամբ և իրենց սահմաններով [...]»<sup>234</sup>:

Միևնույն հրովարտական Լևոնը եղբայրներին արտոնություններ է ընձեռում՝ թույլատրելով նրանց գնել և վաճառել այն ամենն, ինչն անհրաժեշտ է իրենց ապրուստի համար:

Էլ ավելի ուշ հոգևորասպետական միաբանությունների ունեցվածքի մասին արձագանքներ հնչում են հիշատակարաններում, որոնք հիշատակում են այս կամ այն ամրոցի՝ իբրև այս կամ այն միաբանության սեփականության մասին<sup>235</sup>:

Արևելքի քրիստոնյաների կողմից ասպետական միաբանությունների ռեսուրսների ներկայացման հիման վրա կարելի է պատկերացում կազմել վերջիններիս տիրապետության տակ գտնվող տարածքների և հարստության մասին: Այդուհանդերձ, այդ ընկալումը խիստ սահմանափակ է, քանզի ոչ մի տեղեկություն չի հաղորդվում նրանց տիրույթների շահագործման ձևի, դրանցից զանձվող զանազան հարկերի վերաբերյալ կամ տնտեսական գործունեության այլ ոլորտներում եղբայրների մասնակցության կամ առնվազն ներդրման մասին: Չնայած այդ ամենին, նրանց ֆինանսական գործունեության ասպարեզներից մեկի՝ փոխառության մասին, հիշատակվում է Լևոն I-ի՝ 1214 թ. ապրիլի 23-ի թվակիր հրովարտականում: Թագավորը վկայում է, որ հիվանդախնամների մեծ մագիստրոս Գարին ղը Սոնտեգյուից ստացել է սարակինոսյան 20000 բեսան՝ ինչն օժանդակել է իր դստեր՝ Ռիթայի ամուսնության ֆինանսավորմանը ժամ ղը Բրիենի հետ: Քանի որ այդ գումարը վերցվել էր միաբանության հանգանակություններից, Լևոնն այդ պարտքը

---

<sup>234</sup> V. Langlois, *նշվ. աշխ.*, էջ 117-120; E. Strehlke, *նշվ. աշխ.*, էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, *նշվ. աշխ.*, էջ 234:

<sup>235</sup> Օրինակ՝ Գեթունի ժամանակագրության մեջ հեղինակը հիշատակում է տևտոնականների կողմից Սոնֆոր դղյակի կառուցման մասին (էջ 64), Պաղրասի և Լա Ռոշ Ռուսսելի՝ իբրև տաճարականների սեփականության մասին (էջ 74) կամ կրկին Ասպետների Կրակի՝ իբրև հիվանդախնամների սեփականության մասին (էջ 75): Բար Գեբրեսոը մեզ հաղորդում է, որ Սելևկիան պատկանում էր եղբայրներին (հիվանդախնամ) (Bar Hebraeus, *նշվ. աշխ.*, էջ 381), իսկ Գեթուն II թագավորն իր «ժամանակագրական աղյուսակում» հիշատակում է Պելերին դղյակում տաճարականների ներկայության մասին և վերստին գերմանացի եղբայրների մասին՝ Սոնֆորում (*RHC, DA, t. 1, p. 484, 485*):

վերադարձնելու համար գրավ է դնում ճկերի տարածքը և այնտեղ գտնվող բոլոր գյուղերը<sup>236</sup>:

Հայերի և ասորիների կողմից ասպետական միաբանությունների գործունեության բոլոր հիմնական ոլորտների ընկալումը՝ դրանց ինքնատիպության և համանմանության պայմաններում, բացահայտում է Արևելքի քրիստոնյաների առանձնահատուկ ուշադրությունն այսչափ արտասովոր առաքելություն ստանձնած այս վանականների հանդեպ: Այս առաքելությունից է սկիզբ առնում նրանց ռազմական ուժը, ինչպես նաև երբեմն ընդարձակ տարածությունների և ռազմավարական նշանակություն ունեցող ամրոցների զավթումը, ինչը միաժամանակ ենթադրում է միաբանությունների թե՛ հաստատուն քաղաքական դերը, ինչն անհնար էր անտեսել, և թե՛ անառարկելի հարստությունը: Այդուհանդերձ, Արևելքի քրիստոնյաներին շատ ավելի ապշեցրել է եղբայրների հոգևոր գործունեության ոլորտը և ցանկացած անձնական շահարգրգռվածություն բացասող ու նյութական բավարարվածություն չակնկալող՝ միայն Աստծո անունից մղվող նրանց պայքարը: Չնայած այս ամենին, սկզբնաղբյուրների բոլոր հեղինակները չէ, որոնց վերաբերում է խոսքը, որ համաձայն են նրանց այդպիսի նկարագրի հետ, ամենևին ո՛չ: Նրանցից յուրաքանչյուրն այս միաբանությունների և դրանց փաստաթղթերի վրա տարբեր հայացք է նետում և երբեմն նույնիսկ զանազանվող կարծիք հայտնում դրանց մասին:

### III – Խիստ և անզիջում զնահատականից դեպի ներքողում

#### *Ա – Ասպետական միաբանությունների հասցեին արված հանդիմանությունները*

Ընդհանուր առմամբ՝ Արևելքի քրիստոնյաների կողմից ասպետական միաբանությունների ընկալումը համեմատաբար բարեհաճ է: Այնուամենայնիվ, որոշ պարագաներում նրանք հայտնում են անզիջում կարծիք այն ամենի շուրջ, ինչն իրենք ավելի հաճախ համարում են դրանց արժեքների (անկախ այն բանից հոգևոր, թե ռազմական) արժեզրկում: Այլ հեղինակներ որոշակիորեն սահմանազատվում են դրանցից՝ համեմատաբար հատու ձևով հիշատակելով դրանց առնչվող փաստերի մասին, առանց համակրանքով վերաբերվելու դրանց ճակատագրին կամ գովերգելու դրանց խիզախությունը, բայց նաև առանց

<sup>236</sup>J. Delaville-le-Rouix, նշվ. աշխ., էջ 165-166, թիվ 1327:

արհամարհանքի արտահայտվելու դրանց մասին:

Հոգևորասպետական միաբանությունների հասցեին հնչել են երկու բնույթի հանդիմանություններ. առաջինը, որը պակաս նշանակալից չէ՝ դրանց հաստատությունների այլասերումն է և դրանց առաքելության նախնական բնույթի փոխակերպումը, որը «Մտորումներ եկեղեցու հաստատությունների մասին» աշխատությունում ձևակերպել է Ներսես Լամբրոնացին<sup>237</sup>:

«Նրանք գտան տարբեր օրենքներով ղեկավարվող հոգևոր միավորումներ, որոնք միավորում են վանական հաստատությունները (աշխարհում ապրելով զինվորական հանդերձանքով) և հետապնդում հարևանությամբ գտնվող թշնամիների դեմ անողոք պայքարի նպատակ: Այս միաբանության ծագումն արժանի է գովեստի, եթե սատանան, այդուհանդերձ, վերջնականապես բարին չի զանազանում չարից, հետևելով այն խոսքին, որն ըմբոստ մարդիկ կարող են մեզ ուղղել և որը կարող ենք օգտագործել նրանց հերքելու համար, ինչը ևս մեզ հայտնի է: Սակայն, հետագայում, այս միաբանության հաստատությունները դադարեցին լինել այն, ինչի համար, ըստ էության, կոչված էին»<sup>238</sup>:

Այսպիսին է միաբանությունների բարեշրջման այն ձևը, որը հանդիմանել է Տարսնի արքեպիսկոպոսը: Բացի վերոնշյալ դատողություններից, հարկ է նմանապես ընդգծել մի փաստ. Հայոց եկեղեցուն ընդունված չէր, որ վանականները մարտնչեին կամ նույնիսկ զենք կրեին (բացառությամբ այն իրավիճակների, երբ ենթակա էին իրական վտանգի): Ներսես Շնորհալու<sup>239</sup> «Թուղթ ընդհանրականն» այս առումով պերճաշուք սկզբնաղբյուր է. «Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, որպէս հրամայէ առաքեալն, այլ հոգեւոր և աստուածային: [...] Վասն որոյ, աղաչենք ի բաց լինել յայսմհետէ ի յանկարգ սովորութենէ աստի»<sup>240</sup>:

<sup>237</sup> Ներսես Լամբրոնացին (1153-1198), որը եղել է Սկևռայի վանքի վանահայրը և Տարսնի արքեպիսկոպոսը, գրել է բազում աշխատություններ, որոնց թվում են «Մեկնութիւն խորհրոյ պատարագին» (1177), «Թուղթ առ Լևոն արքայն» (1195 թ. շրջանում) և այլն: Ներսես Լամբրոնացու կյանքի մասին տե՛ս **Ն. ԵՍՍՍ. Պողարեան**, Հայ գրողներ, Ե-Ժ դարեր, Երուսաղէմ, 1971, էջ 253-259; **L. Zekian**, Nersès de Lambroun.– Dictionnaire de spiritualité, t. XI, cols. 122-134:

<sup>238</sup> Réflexions sur les institutions de l’Eglise et explication du mystère de la messe.– *RHC, DA*, t. 1, p. 571.

<sup>239</sup> Ներսես Շնորհալին (1102-1173) 1166-1173 թթ. եղել է կաթողիկոս:

<sup>240</sup> Մենք շնորհակալություն ենք հայտնում տիկին Մարիամ Վաներյանին՝ սիրալիրաբար մեզ տրամադրելու համար «Թուղթ ընդհանրականի»՝ իր թարգմանությունը, որից մի հատված այստեղ ներկայացրինք: Տե՛ս նաև **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Երևան, 1995, էջ 138:

Հայոց եկեղեցին և դրա ամենանշանավոր ներկայացուցիչները, կարելի է կարծել, որ ասպետական միաբանությունների հանդեպ ունեին, այսպիսով, անբարեհաճ *a priori*<sup>\*</sup>, որովհետև հղելով Ավետարանի, մասնավորապես Պողոսի պատգամները («Առ հռոմ.», 13, 12)՝ Ներսես Շնորհալին քահանաներին խորհուրդ է տալիս «զզեն լուսոյ զգեճուլ», այլ ոչ թե խավարի զրահը կրել<sup>241</sup>: Դա բացառում էր ցանկացած համատեղելիություն հոգևոր կյանքի և ռազմական գործի միջև: Բայց եթե Ներսես Լամբրոնացին, ելնելով նրա դատողություններից, թվում է, թե ընդունում է պատերազմ/վանականություն զուգակցությունը, տաճարականների միաբանությանն ուղղված նրա քննադատությունները թվում են համեմատաբար վաղաժամ<sup>242</sup>:

Ռազմական հողի վրա եղբայրների մասին երբեմն արվել են անզիջում դատողություններ, հատկապես, երբ նրանք ի վիճակի չեն եղել արդյունավետորեն պաշտպանել իրենց վստահված տարածքը կամ քաղաքը: Արդեն նշեցինք Հովհաննես Երզնկացու պարագան, որն ալ-Աշրաֆ Խալիլի կողմից Սեն-ժան դ'Ակրայի գրավումից հետո տաճարականներին և հիվանդախնամներին անվանում է վախկոտներ<sup>243</sup>:

Սամուել Անեցու շարունակողը ևս մատնանշել է տաճարականների անհավատարմությունը.

«Գերմանացիների գահակալը բազմաքանակ բանակով եկավ Կիպրոս կղզի և գնաց Երուսաղեմ՝ ուխտագնացության: Տաճարական եղբայրները գրեցին Եգիպտոսի սուլթան Կամելին, որ կայսրին կհանձնեն նրան. սուլթանը նրանց նամակը փոխանցեց կայսրին՝ համոզելու համար նրան՝ իր ազգին պատկանողների դավաճանության մեջ և Երուսաղեմում նրան ընդունեց բարյացակամությամբ: Քանի որ նրանց միջև խաղաղություն հաստատվեց, կայսրը եկավ և ցասուննալից սպառնաց եղբայրներին»<sup>244</sup>:

Եթե այսպիսի նամակի գոյությունը նույնիսկ չի փաստվել, այս դավաճանության արձագանքը, ինչպես նաև այս փաստաթղթի մասին հիշատակում կարելի է գտնել Մատթեոս Փարիզեցու հիշատակարա-

---

\* Լատ.– Նախափորձական [մոտեցում]: – Ծ. ք.:

<sup>241</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>242</sup> Այրուհանդերձ, հոգևորասպետական միաբանությունները թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում, ի սկզբանե, տեղիք են տվել տարբեր քննադատությունների: Նրանց մեղադրել են նախանձ, ժլատ, ամբարտավան, մենզ, դաժան և այլն լինելու մեջ: Տե՛ս **H. Nicholson**, *Templars*, p. 129:

<sup>243</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 711, թիվ 574: Տե՛ս վերը՝ էջ 49:

<sup>244</sup> **Samuel d'Ani**, *Աշխ.*, էջ 471:

նուն<sup>245</sup>, որն օգտագործել է Ե. Կանտորովիցը<sup>246</sup>: Բացի դրանից, Սիբստրոսը Կալ-Ջավազի ժամանակագիրը հիշատակում է, որ տաճարականները սպառնում էին սպանել կայսրին<sup>247</sup>:

Նա, ով ամենամանողը հայացքն է նետում տաճարականների վրա, ամբողջությամբ ընդունելով զոհի կեցվածք՝ Լևոն I թագավորն է՝ Իննուկենտիոս Գ պապին հղած նամակներում: Նա գանգատվում է իր հանդեպ միաբանության ունեցած բացասական տրամադրվածությունից, այն բանից, որ այն հրաժարվել էր աջակցել իրեն թագավորության սահմանների պաշտպանության հարցում, այնուհետև, ինչն ավելի կարևոր է, իր շահերի և, անընդունելիության բարձրագույն աստիճանը, քրիստոնյաների դեմ ուղղված դրա ռազմական գործողություններից<sup>248</sup>: Հայ գահակալը, որն անձամբ էր ներքաշված, տաճարականների միաբանությունը ներկայացնում է, այսպիսով, խիստ բացասական երանգներով, որովհետև չկարողանալով միաժամանակ լինել թե՛ դատավոր և թե՛ մասնակից, չէր կարող լինել անկողմնակալ: Բացի դրանից, Լևոն I-ը հրաժարվելով եղբայրներին զիջել նրանց նախկին՝ Պաղրաս բերդամրոցը, որն անձամբ ինքն էր ետ վերցրել Սալահ Էդ-Դիմի նվաճումից հետո, չէր կարող հույսեր կապել նրանց հաշտվողական դիրքորոշման հետ:

---

<sup>245</sup> **Matthaei Parisiensis**, monachi sancti Albani, *Chronica majora*, H. R. Luard (éd.), t. III, A. D. 1216 à A. D. 1239, Londres, 1876, p. 177-179.

<sup>246</sup> L'empereur Frédéric II, Paris, rééd. de 2000, p. 177.

<sup>247</sup> *Chroniques arabes des croisades, textes recueillis et présentés par F. Gabrieli*, Paris, 2<sup>ème</sup> éd., 1996, p. 302. Ֆրիդրիխ II Յոհաննեստուֆենը չէր կարող բարեհաճորեն տրամադրված լինել տաճարականների միաբանության նկատմամբ այն պատճառով, որ 1227 թ. Գրիգոր Թ պապը բանադրել էր գերմանացիների կայսրին: Այդուհանդերձ, չնայած պապական արգելքին, կայսրը ձեռնարկել էր խաչակրաց վեցերորդ արշավանքը՝ ծով դուրս գալով 1228 թ. հունիսին և դրանով իսկ զրկվելով ասպետական միաբանությունների (բացառությամբ տևոնական ասպետների) աջակցությունից: Տաճարականների՝ կայսրի հանդեպ ունեցած թշնամանքի հետևանքով, վերջինս ցանկություն է դրսևորել պաշարել նրանց միաբանությունն Ակրայում: Այդուհանդերձ, նա հարկադրված է եղել նահանջել, քանզի ժամանակ չի ունեցել հստակեցնելու իր ծրագիրն այն պատճառով, որ ժամ ուր Բրիենը ներխուժել է Սիցիլիայի նրա թագավորություն: Եթե հիվանդախնամներն, ի վերջո, Ֆրիդրիխ II-ի հանդեպ որդեգրել են ավելի հաշտվողական դիրք, ապա դա չէր կարող վերաբերվել տաճարականների պարագային, որոնք նրան դիմակայելու համար միավորվել են Սուրբ Երկրի բարոնների հետ: Տե՛ս **J. Richard**, *Histoire des croisades*, Paris, 1996, p. 321, 323:

<sup>248</sup> Հմմտ. **Innocent III.** – *PL*, t. 214, cols. 810-812, N 252; cols. 1003-1006, N 43; t. 215, cols. 687-692, N 119:



Շատ ավելի նվազ կրքոտությամբ համակված գրողների մեկ այլ խումբ ջանում է մարտնչող եղբայրներին վերաբերող փաստերը շարադրել համեմատաբար չեզոք ձևով, նրանց բնութագրելիս ձեռնպահ մնալով արհամարհական կամ վայելուչ ածականներ օգտագործելուց: Նրանց ավելի հետաքրքրում է բուն տեղեկությունը, քան մեկնաբանությունը, որին նրանք դրանից կարող են հանգել: Այս առումով հատկանշական է Յեթում պատմիչի «Ժամանակագրությունը»: Առանց հանդիմանելու կամ գովաբանելու հոգևորասպետական միաբանությունների անդամներին, Յեթումը հետաքրքրվում է դրանց պատմությունն ուրվագծող բուրդ կարևոր իրադարձություններով, անկախ այն բանից, թե ինչին է վերաբերում խոսքը՝ դրանց հիմնադրման տարեթվին, մեծ մագիստրոսների և որոշ գլխավոր աստիճանավորների վախճանին, ամբողջների կառուցմանը, թե կորստին, այն արշավանքներին, որոնց դրանք մասնակցել են, պաշտպանողական մարտերին, այդ առճակատումների հանգուցալուծմանը, դրանց օգտին արված նվիրատվություններին և վաճառքներին, դիվանագիտական գործունեությանը և դրանց առնչվող մի քանի զվարճալի պատմությունների<sup>249</sup>: Տաճարականների և տևոնական ասպետների մասին հիշատակելու համար Յեթում II-ն իր «Ժամանակագրական աղյուսակում» դիմում է մինույն քայլին<sup>250</sup>, կիրառելով այնպիսի մի մոտեցում, որը վերստին որդեգրվել է նաև ձեռագրերի որոշ հիշատակարաններում<sup>251</sup>: Իսկ ասորի ժամանակագիրների թվում անանուն մի հեղինակ եղբայրների մասին հիշատակում է Սալահ Էդ-Դինի դեմ մղվող մարտի ընթացքում և Հաթինի ջախջախումից հետո նրանց գերեվարության կապակցությամբ՝ առանց որևէ կարծիք հայտնելու մարտը վարելու նրանց ձևի կամ նրանց ճակատագրի մասին<sup>252</sup>:

<sup>249</sup> Յեթում պատմիչի ժամանակագրությունը (XIII դ.), էջ 60, 65-68, 74-77, 79: Յեթում Կոռնկոսցին նմանապես չեզոք ձևով է հիշատակում տաճարականների և հիվանդախնամների միաբանությունները «Ծաղիկք պատմութեանց արևելից» գրքում: Տե՛ս **Haythou**, նշվ. աշխ., էջ 196-199 (լատիներեն տարբերակում՝ էջ 320-321); « La Fleur des histoires de la terre d’Orient », p. 851-852.

<sup>250</sup> *RHC, DA*, t. 1, p. 484-485.

<sup>251</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 701-703, թիվ 570; էջ 718-720, թիվ 579:

<sup>252</sup> *Anonyme syriaque*, p. 148-149.

Գ – Ասպետական միաբանություններին  
ուղղված նպաստավոր և բարեհաճ հայացք

Ասպետական միաբանությունների անդամների մասին հիշատակող սկզբնաղբյուրների ետնախորքի վրա կարելի է հավաստել դրանց հեղինակների դրսևորած հարգալից վերաբերմունքի, իսկ երբեմն նույնիսկ հիացմունքի աստիճանական աճ: Երբ Լևոն I-ը կամ Ռայմոնդ-Ռուբենը նվիրատվական կամ արտոնումի հրովարտակներ են շնորհում հիվանդախնամներին՝ միաբանությունը բնորոշում են իբրև «սուրբ» կամ «սրբազնագույն միաբանություն», իսկ մեծ մագիստրոսի անվանը միշտ նախորդում է «պատվարժան» մակդիրը<sup>253</sup>:

Տաճարականների ընկալումը Կեղծ Սմբատի կողմից, որոնց նա անվանում է «խաչի դրոշմը կրող հանդերձանքներով եղբայրներ», հանգում է ներքողի՝ նկարագրելու համար, մասնավորապես նրանց քաջությունը Սալահ Էդ-Դիմին դիմակայելու ընթացքում, երբ Յաթինի ջախջախումից հետո նրանց ընծեռվել էր ընտրության հնարավորություն<sup>254</sup>: Այդուհանդերձ, չնայած ժամանակագիրը մատնանշում է Կիլիկյան Յայաստանում տաճարականներին և հիվանդախնամներին վերաբերող կարևորագույն իրադարձությունների մեծ մասը, նա չի հիշատակում Անտիոքի ժառանգության շուրջ ծագած վեճի մասին, որի գլխավոր դերակատարները եղել են նրանք՝ Տրիպոլիի կոմսի, Ռայմոնդ-Ռուբենի և Լևոն I թագավորի հետ մեկտեղ, հավանաբար, եղբայրների նկարագիրը պահպանելու մտահոգությունից դրդված, ինչը կարող էր արատավորվել՝ եթե հիշատակեր առճակատման մեջ նրանց ներգրավված լինելու մասին:

Իր «ժամանակագրության» մեջ Բար Յերբեոսն այն կարծիքին է, որ 1156 թ. ի վեր, երբ Ռենո դը Շատիյոնը հայոց իշխան Թորոս II-ի դեմ հարձակում է ձեռնարկել<sup>255</sup>, տաճարականները «գործում են ելնելով բոլոր քրիստոնյաների շահերից»<sup>256</sup>: Տաճարական եղբայրները շարունակում են պահպանել բարեհաճ նկարագիրը, երբ 1217 թ. Լևոն I-ի համար բացահայտում են Ռայմոնդ-Ռուբենի հյուսած դավադրությունը,

<sup>253</sup> J. Delaville-le-Roulx, *Աղվ. աշխ.*, էջ 70-71, թիվ 1262; էջ 71, թիվ 1263; էջ 115-116, թիվ 1344; էջ 122-123, թիվ 1355; էջ 164-165, թիվ 1426; էջ 165-166, թիվ 1427, էջ 175, թիվ 1441; էջ 176, թիվ 1442:

<sup>254</sup> La Chronique attribuée au Connétable Smbat, p. 59-63.

<sup>255</sup> Հարձակումը ձեռնարկվել է Բյուզանդիայի կայսր Մանուել {} Կոմնենոսի հրահրմամբ: Անտիոքի իշխանի իրական նպատակն, այդուհանդերձ, Ամանոսի ամրոցները եղբայրներին վերադարձնելն էր, որոնք նախկինում ֆրանկներից գրավել էին հույները:

<sup>256</sup> Bar Hebraeus, *Աղվ. աշխ.*, էջ 283:

որը նպատակ ուներ առևանգել նրան ու թագավորել նրա փոխարեն<sup>257</sup>: Յեղիմակը հաղորդում է նաև այն իրադարձության մասին, որ հիվանդախնամները, որոնց մոտ Ջապելն ապաստանել էր իր ամուսնու վաղաժամ վախճանից հետո, թագուհուն «պաշտպանել են պատվով»<sup>258</sup> և նրան իրենցից պահանջող Կոստանդինին ասել. «Մեր տները և փոքր ամրոցները քրիստոնյաներին ապաստանող գյուղեր են, և մենք չենք կարող հանձնել մի կնոջ, թագուհու, որն ապաստանել է մեզ մոտ»<sup>259</sup>: Մեծ մետրոպոլիտն ընդգրկվում է, այսպիսով, Արևելքի այն քրիստոնյաների թվում, որոնք ըմբռնում են, թե ասպետական միաբանությունների ստանձնած առաքելությունն ինչ իմաստ և նպատակ ունի և բացահայտում է դրանից բխող որոշ առանձնահատկություններ ու արժանիքներ, ինչպիսիք են հավատարմությունը՝ միաբանություններին և քրիստոնյաներին ապաստանելու պատրաստակամությունը:

Արևելքի քրիստոնյաների որոշ սկզբնաղբյուրներում ասպետական միաբանությունների նկատմամբ տածվող հարգանքն ավելի խորն է, իսկ երբեմն դրանցում հնչում է իսկական ներքող:

### *Դ – Ներբողական ընկալումը*

XII դարի որոշ ժամանակագրություններում և XIII դարի առաջին կեսի որոշ հրովարտականերում կարելի է զանազանել ասպետական միաբանությունների ծայրահեղ ներբողական ընկալումը: Գրիգոր Երեցի համար տաճարականները «երկնքի դեսպանորդներն են»<sup>260</sup>, «զորք, որը սիրում է Քրիստոսին»<sup>261</sup> և «անպարտելի զորք»<sup>262</sup>: Նրանք արժանանում են «նահատակի պսակի»՝ մարտնչելով նահմեղականների դեմ<sup>263</sup>: Բացի դրանից, հայ ժամանակագիրն ընդգծում է տաճարական ասպետների աջակցությունը հայերին, որն ուներ միաժամանակ թե՛

---

<sup>257</sup> Նույն տեղում, էջ 370:

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 381:

<sup>259</sup> Նույն տեղում, էջ 389-390:

<sup>260</sup> **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 171-172; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 338; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 263:

<sup>261</sup> **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 171-172; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 338, 354; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 273:

<sup>262</sup> **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 189; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 335; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 273:

<sup>263</sup> **Grigor Yerets**, նշվ. աշխ., էջ 184; **Matthieu d'Edesse**, նշվ. աշխ., էջ 350-351; **A. E. Dostourian**, նշվ. աշխ., էջ 270:

ռազմական բնույթ և ուղղված էր Մանուել {I} Կոմնենոսի անունից գործող սելջուկյան սուլթանի դեմ<sup>264</sup> և թե՛ նաև դիվանագիտական, քանզի տաճարականները պաշտպանում էին Թորոս II իշխանի գործն այդ նույն կայսրի մոտ<sup>265</sup>:

Ավելի՛ քան այլք, Միխայել Ասորին մանրամասնում է ասպետական միաբանությունների կենսակերպը: Այդ իսկ պատճառով, նա գովեստներ է շռայլում եղբայրների կողմից՝ իրենց իսկ պարտադրվող կարգապահության, ինչպես նաև նրանց ներկայության շահեկանության հասցեին թե՛ մարտի դաշտում և թե՛ ընչազուրկներին ու հիվանդներին մշտապես անդուլ օգնության ձեռք մեկնելու ասպարեզում<sup>266</sup>: Պատրիարքն անդրադառնում է նաև նրանց շիտակությանն ու ազնվությանը, երբ հիշատակում է Բարսումայի վանքի ռազմակալման ու կողոպուտի մասին, որը տեղի է ունեցել 1148 թ. հունիսի 18-ին՝ կոմս Ժոսսելենի կողմից<sup>267</sup>: Նա մեզ տեղեկացնում է այս իրադարձությանը հետևած՝ տաճարականների արձագանքին. «Նրան ուղեկցող որոշ ֆրանկներ փրերների, այն է՝ «եղբայրների» թվում էին: Տեսնելով այս, նրանք նրան ասացին. «Մենք քեզ հետ եկել ենք թուրքերի դեմ պատերազմելու և քրիստոնյաներին օգնելու, այլ ոչ թե եկեղեցիներն ու վանքերը կողոպտելու համար», և նրանք «լքեցին նրան ու հեռացան՝ առանց հաց ուտելու կամ ջուր խմելու»<sup>268</sup>:

Հուսիկ գրչի հիշատակարանը կարելի է դասել ասպետական միաբանությունները ներբողող այս սկզբնաղբյուրների շարքում, որովհետև հեղինակն իրական հիացմունքով է արտահայտվում տաճարականների մասին, որոնց եռանդը զովաբանում է, հիշատակելով նրանց բարոյական անաղարտության և ռազմական գործունեության ասպարեզի մասին<sup>269</sup>:

Միաբանությունների ներբողական ընկալումը հաճախ առնչվում է դրանց հավատքի, մեծահոգության և ռազմական հատկանիշների հի-

---

<sup>264</sup> Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 189; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 338; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 263:

<sup>265</sup> Grigor Yerets, նշվ. աշխ., էջ 188; Matthieu d'Edesse, նշվ. աշխ., էջ 354; A. E. Dostourian, նշվ. աշխ., էջ 273:

<sup>266</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 201-203, 207-208, 235, 314, 324:

<sup>267</sup> Այս իրադարձության հանգամանքներին առնչվող շատ ավելի մանրամասների մասին տե՛ս Anonyme syriaque, p. 113-115; G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés. Etude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), t. 2, Lisbonne, 2003, p. 1238-1239:

<sup>268</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 287:

<sup>269</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158-159, թիվ 114: Հիշատակարանի հատվածներից կատարված հղումները տե՛ս վերը՝ էջ 54-55:

չատակման հետ: Այսպես, եղբայրներին ավելի սիրաշահող դիվանագիտական փաստաթղթերը՝ հայոց գահակալների պետական դիվանի կողմից տևողականների Սուրբ Մարիի միաբանությանը հատկացված երկու նվիրատվական հրովարտականներն են, որոնք առիթն ունեցանք ներկայացնել միաբանությունների գործունեության հոգևոր ուղորտի նկարագրության կապակցությամբ: Առաջինում, որը թվագրված է 1212 թ. ապրիլով, Լևոն I-ը տևողականներին նմանեցնում է մակաբայեցիների հետ և հիշատակում նրանց «բարեգործությունների» և «աղոթքների» մասին: Միաբանության հանդեպ նրա բարեհաճությունն աճում է, երբ նա կարգադրում է, որ իր մարդիկ «այս նույն եղբայրներից ուժով չպահանջեն որևէ ծառայություն կամ տուրք (tributum), կամ բահրա (բնամթերքով) (angarium), կամ անկախ այն բանից, թե ինչ ձևով՝ չգանձեն որևէ հարկ, այլ ընդհակառակը՝ պարտավորվեն նրանց սիրել, մեծարել և հարգել ամեն ինչի համար և ամեն ինչում, ինչպես պատշաճ է աստվածավախ մարդկանց»<sup>270</sup>: Երկրորդ հրովարտական, որը 1236 թ. հունվարի 22-ին հրապարակել են Յեթում I-ն ու Ջապելը, հիշատակվում է եղբայրների գթասրտության և մարտի դաշտում նրանց անվեհերության մասին: Այս միաբանության նկատմամբ նրանք առավել ևս բարեհաճ են տրամադրված, քանզի իրենք դրա «միաբաններն» են, իսկ տևողական ասպետները հայտարարել էին, որ նրանց կպաշտպանեն այնպես, ինչպես իրենց թագավորությունը<sup>271</sup>:

Ասպետական միաբանությունների գործողությունների և անվեհերության գնահատականը հսկայական չափով տատանվում է՝ ըստ հեղինակների տիտղոսի, միաբանությունների հետ նրանց անմիջական առնչությունների, հնարավոր վիճահարույց հարցերի կամ, ընդհակառակը, մատուցված կամ մատուցվելիք ծառայությունների ճանաչման:

Այն դեպքում, երբ աշխարհագրական տեսանկյունից՝ Արևելքի քրիստոնյա հեղինակների մոտ գտնվելու և մշակութային որոշ հոգեհարազատության հիման վրա կարելի էր խորհել հոգևորասպետական միաբանությունների հանդեպ նրանց տեսակետների նմանության մասին, իրականությունը բացահայտվում է բոլորովին այլ տեսքով: Իրոք, հայկական և ասորական հասարակությունները տարբեր են և դա զգացվում է ժամանակագրությունների հնչեղության հենքի վրա: Ասորիների գրած ժամանակագրությունները շեշտը դնում են իրադարձությունների տնտե-

---

<sup>270</sup> V. Langlois, *Աշխ.*, էջ 117-120; E. Strehlke, *Աշխ.*, էջ 37-39, թիվ 46; K. Forstreuter, *Աշխ.*, էջ 234:

<sup>271</sup> V. Langlois, *Աշխ.*, էջ 141-143; E. Strehlke, *Աշխ.*, էջ 65-66, թիվ 83; K. Forstreuter, *Աշխ.*, էջ 235-236:

սական և կրոնական կողմերի վրա, այն դեպքում, երբ ավատատիրական բնույթի հասարակությունում ապրող հայերի գրած ժամանակագրություններն ավելի բևեռված են դրանց ռազմական կողմի վրա: Մեզ են ներկայանում հիշատակման զանազան ձևերը, գնահատման եղանակները, միաբանությունների դերի ընկալումներն ամբողջ բազմերանգությամբ: Այդուհանդերձ, կարող ենք ջանալ առանձնացնել որոշ հիմնական միտումներ: Ընդհանուր առմամբ, ասորի հեղինակները (հատկապես Միխայել Ասորին) բարեհաճ են տրամադրված ասպետական միաբանությունների հանդեպ, որոնց կենսակերպը նրանց հայտնի է, սակայն, այլ հարցերի առնչությամբ նրանք այնքան էլ ճշգրիտ չեն, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է տաճարականներին հիվանդախնամներից զանազանելուն, որոնց բոլորին նախընտրում են անվանել «եղբայրներ»: Հայ հեղինակների գերակշռող մասը (անկախ այն բանից՝ կաթողիկոս, եպիսկոպոս, թե վանական դպրոցների պատասխանատուներ)՝ ավելի դժմի հայացք է նետում հոգևորասպետական միաբանությունների վրա, գտնելով, որ վերջիններս այլևս հարգալից վերաբերմունք չեն դրսևորում այն առաքելության հանդեպ, ինչին նրանք հետանուտ էին (և դա արդեն XII դարի վերջից): Բացի դրանից, Հայոց եկեղեցու վերնախավի համար ըմբռնելի չէր վանական կյանքի և ռազմական գործունեության համատեղելիությունը: Ավելի համեստ պարտականություններ կատարող հայ գրիչները չէին թաքցնում իրենց հիացմունքը տաճարականների հանդեպ, որոնց դիտում են իբրև առաքինության և ինքնագոհության տիպարներ: Ինչ վերաբերում է հայոց գահակալներին և նրանց ընտանեկան շրջապատին, ապա ասպետական միաբանությունների՝ նրանց ուրվագծած պատկերը զանազանվում է ըստ քննարկվող վավերագրերի: Իրավաբանական արժեք ունեցող փաստաթղթերը հաճախ խիստ ներբողական են (բացի տաճարականների պարագայից), իսկ պատմական բնույթի վավերագրերն ամփոփում են շատ ավելի անկողմնակալ և չեզոք պատմություններ: Այդուհանդերձ, հստակորեն զգացվում է, որ ասպետական միաբանություններին, դրանց մեծ մագիստրոսներին, գլխավոր բարձրաստիճան անձանց և դրանց առնչվող իրադարձությունների գերակշռող մասին լավագույնս իրազեկ է հեղինակների վերջին խումբը:

Հայկական սկզբնաղբյուրներում տաճարականներին, հիվանդախնամներին և տևոնականներին վերաբերող հիշատակումների մեծամասնությունն առնչվում է ռազմական իրադարձությունների, անկախ այն բանից, թե ինչին է վերաբերում խոսքը՝ մարտերի, թե գերեվարված կամ սպանված ասպետների և այլնի: Ջարմանալի չէ հավաստելը, որ

սկզբնաղբյուրներում ավելի հաճախ հանդիպում ենք հոգևորասպետական միաբանությունների այս առանձնահատկությանը, քանզի ժամանակագրությունների և պատմությունների նպատակն այս բնույթի իրադարձությունների նկարագրությունն է: Այնուամենայնիվ, այս միաբանությունների անդամների երկակի ինքնության հավաստումը հաճախ ընդգծվել է այնպիսի բառերի միակցմամբ, ինչպիսիք են «երկնքի դեսպանորդները» կամ «Քրիստոսի զորքը»: Բացի դրանից, որոշ հեղինակներ նախաձեռնում են խոսել եղբայրների վանական կյանքի մասին ավելի ծավալուն ձևով: Ասպետական միաբանությունների պատկերը ներկայացնելը շատ ավելի տատանվում է՝ ըստ հեղինակների, քան ըստ ժամանակի, որովհետև դրանց հասցեին կարելի է հատու քննադատությունների, ինչպես նաև ներբողական խոսքերի հանդիպել թե՛ XII և թե՛ XIII դարերում:

Թեպետ յուրաքանչյուր ընկալում ունեցել է իր առանձնահատկությունը, ոչ մի հեղինակ չի կարողացել սահմանազատվել իր գաղափարի և միջավայրի այլաձևող պրիզմայից (քանի որ նրա վկայությունը միակցել է իր գրած փաստաթուղթը և այն հասարակությունը, որը նա ներկայացնում է), այդուհանդերձ, Արևելքի քրիստոնյա հեղինակների աշխատություններում նկատվում է մեկ ընդհանուր՝ հոգևորասպետական միաբանություններն իբրև ցանկացած նյութական բարիքների հանդեպ շահադիտություն չունեցող մարտնչողների ներկայացնելու միտումը, որոնք ներկա են բոլոր ռազմաճակատներում և կյանքը զոհաբերում են իրենց հավատքի զոհասեղանի վրա:

ԱՄՊԵՏԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱԼ  
ԿԻԼԻԿԻԱՆ (XII դարի ԿԵՄԻՑ ՄԻՆՉԵՎ XIV դարի ՎԵՐՋԸ)

Տաճարականները, հիվանդախնամները և տևտոնական ասպետները, որոնց Կիլիկյան Չայաստանում շնորհվել էին իսկական սահմանամերձ մարզեր ձևավորող նշանակալից հողային տիրույթներ, այդուհանդերձ, իրենց տիրապետության տակ այս երկրում ունեին փոքրաթիվ նավահանգստային հենակետեր, որոնց գերակշռող մասը գտնվում էր Ալեքսանդրետի ծոցում: Որոշ սկզբնաղբյուրներ մեզ տեղեկացնում են Կիլիկյան Չայաստանում՝ Այասի նավահանգստի ջրերում հոգևորասպետական միաբանություններին պատկանող նավերի մասին<sup>272</sup>: Որոշ միաբանությունների հանդեպ ավելի քան բարեհաճորեն տրամադրված հայկական իշխանությունները եղբայրներին հատկացրել են ծովային ճանապարհով զանազան ապրանքներ տեղափոխելու արտոնություններ, պայմանով, սակայն, որ դրանք նախատեսված լինեն միայն նրանց միաբանության օգտագործման համար:

Նավահանգստային այս վայրերը նախատեսված էին նախ և առաջ առևտրի համար և այդտեղ տեղի ունեցող փոխանակությունները հստակորեն բացահայտում էին այն ժամանակ Ալեքսանդրետի՝ Արևելքի և Արևմուտքի միջև կապող օղակի դերը: Այս քաղաքի շուրջ, որի աշխույժ գործունեությունը մասամբ իր ազդեցությունն էր թողնում իր շրջապատում գտնվող ավելի փոքր նավահանգիստների գործունեության վրա, միահյուսվում էին առևտրական տարբեր ցանցեր: Բազմաթիվ նոտարական փաստաթղթեր հավաստում են, որ նման բնույթի գործունեությունը Կիլիկյան Չայաստանում ասպետական միաբանություններին խորթ չէր, թեպետ դրանց դերն այս ասպարեզում կարող էր լինել խիստ համեստ, որի և Ջենովայի ու Վենետիկի առևտրի ծավալների միջև համեմատության եզրեր անզան չէին կարող լինել: Իրականում, եղբայրների մասնակցությունը կիլիկյան առևտրին տեղիք է տվել՝ ըստ սկզբնաղբյուրների, շատ ավելի զվարճալի պատմությունների, քան կրել է կանոնավոր գործունեության բնույթ: Չնայած դրան, նավահան-

<sup>272</sup> Ըստ Ռ. Ու. Էդուարդսի և Ջ. Յելլենկեմպերի՝ միջնադարյան Այաս բնակավայրը համապատասխանում է ներկայիս Յունուրթալիքի տեղադրությանը: Տե՛ս **R. W. Edwards**, *Settlements and Toponymy in Armenian Cilicia*. – « *Revue des études arméniennes* », nouvelle série, 24, 1993, p. 233; **H. Hellenkemper**, նշվ. աշխ., 154:



գիտնների վրա, որքան էլ դրանք փոքր լինեին, հաստատված փաստական տիրապետությունը նրանց թույլատրել է ծովային առևտրից եկամուտներ կուտակել՝ ապրանքներից տուրք գանձելու միջոցով:

Ծովը նաև այն միջոցն էր, որը թույլատրում էր ասպետական միաբանություններին իրականացնել Կիլիկյան Չայաստանում ստանձնած առաքելության մի մասը: Այսպիսով, կարելի էր տեսնել, թե ինչպես են հիվանդախնամների ամենաբարձրաստիճան աստիճանավորները պարբերաբար Կիպրոսից Կիլիկիա և Կիլիկիայից Կիպրոս տեղափոխվում՝ համաձայնության եզրեր գտնելու համար Ամորի դը Տյուրոսի և նրա եղբոր՝ Կիպրոսի թագավոր Յենրի II-ի միջև, այնուհետև փորձում ազատագրել Կիլիկյան Չայաստանում ձերբակալված Կիպրոսի գահակալին: XIV դարում եղբայրներին նաև կոչ է արվել ծովային ճանապարհով կանոնավոր օգնություն ուղարկել Կիլիկյան Չայաստան:

Ի՞նչ դեր ուներ ծովը Կիլիկիայում հաստատված հոգևորասպետական միաբանությունների անդամների համար և ի՞նչ չափով էին «անդրծովային երկրներից» Միջերկրական ծովով նավարկելով եկածները միջամտել հայկական թագավորության գործերին:

Մենք խոսքը կկենտրոնացնենք երեք առանցքային հարցերի շուրջ: Դրանք են՝ հոգևորասպետական միաբանությունների փաստացի հաստատումը հայկական պետության ծովամերձ գոտում, այս պետության ծովային առևտրում նրանց ներգրավվածության չափը և դրա դրսևորումները, ինչպես նաև այն առաջնահերթ կարևորությունը, որն ուներ ծովը Կիլիկիայում միաբանությունների (մասնավորապես հիվանդախնամների) դիվանագիտական և ռազմական միջամտությունների համար:

## **I – Ասպետական միաբանությունների ներկայությունը Կիլիկիայի ծովամերձ գոտում**

### *Ա – Նավահանգստային հենակետերին տիրանալը*

Բնակավայրերի՝ անրացված թե ոչ, ձեռքբերման ձևը կիլիկյան ծովամերձ գոտում կախված է եղել այն միաբանությունից, որին առնչվում է խոսքը: XII դարի կեսերից ի վեր տաճարականներն Ամանոսում հաստատել են բերդամրոցների ցանց և այդ աշխույժ գործունեության ընթացքում ծավալվել մինչև Ալեքսանդրետի ծոցի ափերը՝ տիրանալով Բոննել նավահանգստին, հավանաբար՝ Ալեքսանդրետին և, ամենայն հավանականությամբ, ներկայիս Սարի Սեկիի և Չալանի տեղանքում

գտնվող բնակավայրերին: Այդ հաստատումն ու ծավալունն իրականացվել են Անտիոքի իշխան Ռենո դը Շատիյոնի ռազմական ներխուժման հետևանքով, որը 1155 թ. շրջանում հաղթել էր հայոց իշխան Թորոսին և այդ հաղթանակի շնորհիվ հասել այն բանին, որ Ալեքսանդրետի տարածաշրջանում տաճարականների միաբանությանը զիջվեն բազմաթիվ տարածքներ<sup>273</sup>: Հիվանդախնամների կամ տևտոնական ասպետների համար Կիլիկյան Հայաստանում բերդամրոցների կամ գյուղերի ձեռքբերման ձևն արմատապես զանազանվում էր տաճարականների որդեգրած ձևերից, քանզի այդ ձեռքբերումները բխում էին հենց հայկական իշխանության ցանկությունից: Հիրավի, 1210 թ. ապրիլի 15-ին Կիլիկյան Հայաստանի առաջին թագավոր Լևոն I-ը Սելևկիա քաղաքը և միաժամանակ Կամարոփասն ու «Նորբերդը» (Castellum Novum) զիջել է հիվանդախնամների առաջնորդ Գարին դը Սոնտեգյուին և միաբանության վանքին: Նույն տարվա օգոստոսի 3-ին Իննոկենտիոս Գ-ն վավերացրել է այս նվիրատվությունը: Թվում է, թե Սելևկիայի նավահանգիստը տարանջատված էր քաղաքից<sup>274</sup> (որը գտնվում էր ծովից 15 կիլոմետր հեռավորության վրա՝ Կալիկադոնոսի գետաբերանի աջ ափին), թեև կախում ուներ դրանից: Ի դեպ, XII-ից XIV դարերում այս քաղաքը հազվադեպ է հիշատակվում նավահանգստային գործունեությամբ: Այդուհանդերձ, հայտնի է, որ 1140-ական թվականներին Անտիոքի իշխան Ռայմոնդ դը Պուատիեն Սելևկիայում վեներտիկցիներին արտոնություններ է շնորհել առևտրի ոլորտում<sup>275</sup>: Հոգևորասպետական միաբանություններին պատկանող Սելևկիայի նավահանգիստն Ալեքսանդրետի ծոցից (որը երկրի ամենաաշխույժ առևտրական գործունեության գոտին էր) ամենամեծ հեռավորության վրա գտնվող նավահանգստային հենակետն է: Եղբայրները հարկադրված են եղել լքել բերդամրոցն ու քաղաքը տասնվեց տարի դրանք ռազմական լեյուց և դոյակի մեծ մասը կառուցելուց հետո<sup>276</sup>: ներքին քաղա-

<sup>273</sup> Michel le Syrien, p. 314; Bar Hebraeus, t. 1, p. 283.

<sup>274</sup> A. Comnène, Alexiade, t. III, Paris, 1945, p. 46. Այս հատվածը հղում է Ժ. Դեդեյանը. G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, p. 712.

<sup>275</sup> G. Tafel, G. Thomas (dir.), Urkunden zur alteren handels-Staatsgeschichte der Republik enedigh, Bd. 1, Vienne, 1856, S. 102.

<sup>276</sup> R. W. Edwards, The Fortifications of Armenian Cilicia, p. 31-32; K. Molin, նշվ. աշխ., էջ 150: Ըստ Ռ. Ու. Էդուարդսի՝ Հ. Հելլենկեմպերը սխալվել է՝ Կամարոփասը բնորոշելով իբրև Սելևկիա քաղաքի դոյակ: Տե՛ս H. Hellenkemper, նշվ. աշխ., էջ 249; F. Hild, H. Hellenkemper, Veröffentlichungen der Kommission für die Tabulae imperii Byzantini, Bd. IV: Neue Forschungen in Kilikien, Vienne, 1986, S. 36:

քականության պատճառներով<sup>277</sup>:

1214 թ. ապրիլի 23-ին Լևոն I-ը Կանամելլայի նավահանգիստը (ինչպես նաև բազմաթիվ գյուղեր ճկերի տարածքում), իբրև գրավ, երկու տարով հանձնում է հիվանդախնամների միաբանությանը, քանի որ վերջիններս թագավորին պարտքով տվել էին սարակինոսյան 20000 բեսան, որպեսզի օժանդակեին Երուսաղեմի թագավոր Ժան դը Բրիենի հետ նրա դստեր՝ Ռիթայի ամուսնության հետ կապված անհրաժեշտ ծախսերի մարմանը: Ըստ Իբն ալ-Ֆուրատի՝ 1266 թ. ալ-Տինա կամ ալ-Տինան անվամբ հայտնի տաճարական մի բերդամրոց, այն է՝ Կանամելլան, ավերվել է: Ըստ Կլոդ Կահանի<sup>278</sup> և Պոլ Դեշանի, որը շարունակում է նախորդի միտքը<sup>279</sup>, նավահանգիստը կարող էր հիվանդախնամներից տաճարականներին անցնել 1216 թ. հաջորդած որևէ տարեթվի, երբ հիվանդախնամները պետք է, որ այն վերադարձրած լինեին հայոց թագավորին, պարտքի մարումից հետո: Այս տեսությունը հաստատող իրադարձությունն Անտիոքի գրավումն է Լևոն I-ի կողմից 1216 թ. և այս քաղաքի վերահանձնումն իր եղբոր թոռանը, որին մինչ այդ Բոհեմունդ դը Տրիպոլին զրկել էր ժառանգությունից: Այս իրադարձությունը հրահրել է հայոց գահակալի վերահաշտեցումը տաճարականների միաբանության հետ, որին նա վերադարձրել է Պաղրաս բերդամրոցը: Այդժամ, արդյո՞ք այս վերահաշտեցման շրջանակում Կանամելլայի նավահանգիստը ևս նա տվել է այս միաբանությանը, հենց որ գրավի երկու տարվա ժամկետը սպառվել է: Մեզ հասած որևէ փաստաթուղթ այդ չի հավաստում և միայն Իբն ալ-Ֆուրատի ուշ արված վկայությունը կարող է հաստատել այս ենթադրությունը: Այդուհանդերձ, այն փաստը, որ Կանամելլային վերաբերող զրույցին նախորդած տողերում նույն հեղինակը հիշատակում է Ամուդայի՝ իբրև տաճարականներին պատ-

---

<sup>277</sup> Հիրավի, հանգուցյալ թագավոր Լևոն I-ի դուստր Ջապելն ապաստանել էր այստեղ այն բանից հետո, երբ նրա ամուսինը՝ Անտիոքի իշխան Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպը, կալանավորվել էր, իսկ այնուհետև թունավորվել թագավորության խնամակալ Կոստանդինի ջանքերով: Խնամակալը ցանկանում էր երիտասարդ թագուհուն բռնությամբ ամուսնացնել իր հարազատ որդու՝ Չեթումի հետ: Թվում է, թե այդ ժամանակ Սելևկիայի տիրակալի պաշտոնը զբաղեցնող հիվանդախնամների եղբայր Բերտրան դը Տեսիի նախընտրած միակ լուծումը՝ ըստ Կեղծ Սմբատի ժամանակագրության, հանգեցրել է բերդամրոցը և այն ամենը, ինչ այնտեղ կար, Կոստանդինին վաճառելուն, որպեսզի թագուհուն բացահայտորեն հանձնելով՝ չսասանի իր հեղինակությունը, ինչպես նաև չզրկվի Կիլիկյան Հայաստանի փաստացի տիրոջ բարյացակամությունից: Հմմտ. **Sempad le Connétable**, *Chronique du royaume de la Petite Arménie.*– E. Dulaurier, éd. du texte et trad. française.– RHC, DA, t. 1, p. 648:

<sup>278</sup> **Cl. Cahen**, նշվ. աշխ., էջ 512:

<sup>279</sup> **P. Deschamps**, նշվ. աշխ., էջ 70:

կանող բերդամրոցի մասին, այն դեպքում, երբ վերջինս գտնվում էր տևտոնական ասպետների տիրապետության տակ, մեզ դրոշմ է կարծել, որ նա կարող էր նաև տաճարականներին շփոթել հիվանդախնամների հետ<sup>280</sup>: Այս պարագայում, դա կարող է մատնանշել, որ Լևոնը կամ նրա հաջորդները 20000 բեսանի հասնող գումարը երբևէ չէին կարող վերադարձրած լինել: Ըստ Ռոբերտ Էդուարդսի՝ Կանամելլայի նավահանգիստն, անտարակույս, գտնվել է Ալեքսանդրետի հյուսիս-արևելքում, Իսուսի մոտակայքում<sup>281</sup>:

Ինչ վերաբերում է XIII դարի սկզբին հայոց գահակալների՝ հիվանդախնամներին և տևտոնականներին տված այլ վայրերին, ապա դրանց մի մասի տեղադրությունը դժվարությամբ է հստակեցվում: Բացառված չէ, որ դրանք կարող էին գտնվել կիլիկյան ծովամերձ գոտում, Մալլոս քաղաքից ոչ հեռու, որն անվանվել է նաև Մալոն, Մելոն<sup>282</sup> կամ նաև Մելոն (հրովարտակներում) և եղել է համեմատաբար ակտիվ հայկական նավահանգիստ: 1212 թ. ապրիլին Լևոն I-ը տևտոնականների հիվանդանոցին նվիրաբերում է, ի դեպ, «Մելոնի» տարածքում գտնվող բազմաթիվ գյուղեր. խոսքը վերաբերում է գլխավորապես Գունբեթֆորթին, Այունին և Վանգունին<sup>283</sup>: Գունբեթֆորթը հիշատակել է նաև Վիլբրանդ Օլդենբուրգցին՝ Հայաստան կատարած իր այցելությանը նվիրված պատմության մեջ: Հիլդեսհայմի կանոնիկոսը ճշգրտում է, որ այդտեղ կարելի էր գտնել տևտոնական ասպետներին պատկանող մի միաբանություն և այդ վայրը տեղադրում է իր ճանապարհին գտնվող Մամեստիայի և Տարսունի միջև<sup>284</sup>: Այդուհանդերձ, եթե Վիլբրանդը հիշատակել է Գունբեթֆորթի մասին, դրա ծովափին գտնվելու հավանականու-

---

<sup>280</sup> Այս վերջին ենթադրությանը տուրք են տվել նաև Ռ. Ու. Էդուարդսը և Կ. Մոլենը. **K. Molin**, նշվ. աշխ., էջ 186: Ջ. Ռիլեյ-Սմիթի կարծիքն ավելի է զանազանվում. **J. S. C. Riley-Smith**, *The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia*, p. 107:

<sup>281</sup> **R. W. Edwards**, *Settlements and Toponymy in Armenian Cilicia*, p. 225. Սակայն ըստ Հ. Բելլենկեմպերի՝ Կանամելլան կարող էր լինել միայն Պայասը. **H. Hellenkemper**, նշվ. աշխ., էջ 107: Տե՛ս նաև **F. Hild, H. Hellenkemper**, նշվ. աշխ., էջ 104-108:

<sup>282</sup> Ըստ Ղ. Ալիշանի՝ այս երկու անունը կարող էին վերաբերվել միայն մեկ և միևնույն վայրին: Տե՛ս **L. Alichan**, *Sissouan ou l'Arméno-Cilicie, description géographique et historique*, trad. de l'arménien, Venise-St. Lazare, 1899, p. 423: Սկզբնաղբյուրներում Մալլոս քաղաքին տրված զանազան անվանումների և այս նավահանգստի պատմության մասին տե՛ս **F. Hild, H. Hellenkemper**, *Tabulae imperii Byzantini*, Bd. V: Kilikien und Isaurien, Vienne, 1990, p. 337:

<sup>283</sup> **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46:

<sup>284</sup> **Wilbrandi de Oldenburg**, նշվ. աշխ., էջ 176; **Wilbrand von Oldenburg**, *Itinerarium Terrae Sanctae*.— **S. De Sandoli**, éd. du texte et trad. italienne, *Itinera hierosolymitana Crucisignatorum* (Saec. XII-XIII), t. III, Jérusalem, 1983, p. 220-221.

թյունները կարող էին մեծ լինել: Բացի դրանից, գահակալի ջանքերը, որը գյուղերի սահմանները հրովարտակում ճշգրտել է ամենաստակ ձևով, որևէ տեղ չի հիշատակել ծովափի մասին: 1214 թ. ապրիլի 23-ին Լևոն I-ը Վաներ գյուղը, որը ևս գտնվում էր Մալլոսի տարածքում<sup>285</sup>, «նվիրաբերում» է Գարին դը Մոնտեգյուիին և հիվանդախնամ եղբայրներին՝ իբրև սարակինոսյան այն 20000 բեսանի փոխհատուցում, որը միաբանությունը հատկացրել էր Ռիթայի ամուսնության համար: Հրովարտակում ճշգրտվել է, որ հիվանդախնամները կտիրեն “totam terram predicti casalis et maritimam cum portu”-ին և որ բացի դրանից, իրավունք կունենան այդտեղ կառուցել և այդ վայրերը բարեկարգել՝ ըստ իրենց հայեցողության<sup>286</sup>: Այսպիսով, հոգևորասպետական միաբանություններին հանձնված այս գյուղերի մի մասը, հավանաբար, Մալլոսի նավահանգստից հետո գտնվող տարածքում էր (arrière pays), որոնցից մի քանիսի ազդեցությունը տարածվում էր նավահանգստային հենակետերը ներառող ծովափնյա գոտում: Ինչ վերաբերում է այլ գյուղերին, ապա դրանք հարկադրված էին օգտվել այս նավահանգստի գործունեությամբ ընձեռված հնարավորություններից:

1332 թ. օգոստոսի 2-ի թվակիր նամակով Ջիովաննի ԻԲ պապը հիվանդախնամներին հայտնել է հայոց թագավորի՝ իրենց արած նվիրատվական առաջարկության մասին: Իրոք որ, Լևոն IV-ն ունենալով մեկ՝ Սեչինի և Անտիոքետի դոյակները թուրքերին վաճառելու կամ դրանք ավերելու այլընտրանք, խորհում է այդ ժամանակ դրանք հիվանդախնամ ասպետներին հանձնելու մասին: Կիլիկյան ծովամերձ գոտում և Անամուր քաղաքի (Սելևկիայի արևմուտքում) մոտակայքում, ինչպես նաև թուրքական սահմանամերձ գոտում գտնվող այս երկու բերդամրոցը եղբայրներին կարող էին հետաքրքրել ծովային ճանապարհով մատչելի լինելու պատճառով: Այդուհանդերձ, այդ միջնորդությունը որևէ արդյունքի չի հանգեցրել<sup>287</sup>:

<sup>285</sup> Ըստ Հ. Հելլենկեմպերի և Ֆ. Հիլդի՝ Վաներ գյուղը կարող էր գտնվել ներկայիս Գյոքվելի-օղլու Քալեսիի տեղանքում (**H. Hellenkemper**, *Մշվ. աշխ.*, էջ 165; **F. Hild, H. Hellenkemper**, *Tabulae imperii Byzantini*, Bd. V: Kilikien und Isaurien, S. 454-455), ինչին առարկում է Ռ. Ու. Էդուարդսը՝ Վաների տեղանքին առնչվող սկզբնաղբյուրներում հստակության բացակայության պատճառով (**R. W. Edwards**, *The Fortifications of Armenian Cilicia*, p. 135): Ըստ Ղ. Ալիչանի՝ չի բացառվում Վաները (հրովարտակներում «Վաներիում») Վանգունի հետ նույնացնելու հնարավորությունը, քանի որ աշխարհագրական երկու անվանումն ունեն միևնույն՝ «վանք» արմատը: Երկու տեղանքը հիշատակվել են իբրև Մալլոսի տարածքում գտնվող վայրեր: Տե՛ս **L. Alichan**, *Մշվ. աշխ.*, էջ 226:

<sup>286</sup> **J. Delaville Le Roulx**, *Մշվ. աշխ.*, էջ 164-165, թիվ 1426:

<sup>287</sup> **L. Alichan**, *Մշվ. աշխ.*, էջ 378, 383: Հեղինակը տպագրում է քաղվածքներ Ջիովաննի ԻԲ-ի՝ հիվանդախնամներին հղած նամակից (էջ 378): Տե՛ս նաև **A. T. Luttrell**, *The*

Ինչ վերաբերում է ծովամերձ գոտում տաճարականների տիրույթներին, ապա հայոց գահակալները դրանք չեն նվիրաբերել օրինականության շրջանակներում: Չնայած դրան, տաճարականների կողմից այս վայրերի ռազմակալման մասին վկայում են ոչ միայն ավանդական սկզբնաղբյուրները, այլև դրանց որոշ ճարտարապետական առանձնահատկությունները: Տաճարականներն Ամանուսի լեռների ստորոտում գտնվող ծովափնյա փոքր քաղաք Բոննել նավահանգստի տիրակալներն էին<sup>288</sup>: Եղբայրներն իրենց տիրապետությունն այդտեղ հաստատել են XII դարի 50-ական թվականներից ի վեր՝ Թորոսի նկատմամբ Ռեմոյի տարած հաղթանակից հետո: 1211 թ. Իննկենտիոս Գ պապի նամակը Երուսաղեմի պատրիարքին և նրա նվիրակ Ալբեր դը Վերսոյին տեղեկացնում էր, որ օգտվելով Սուրբ երկիր մարտնչելու մեկնած եղբայրների գերակշռող մասի բացակայությունից, Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոնը, ի շարս այլ բռնությունների, Բոննել նավահանգստում զավթել է տաճարականների ամբողջ ունեցվածքը<sup>289</sup>: Ըստ Ջոնաթան Ռիլեյ-Սմիթի՝ Բոննել նավահանգիստը տաճարականներին է վերադարձվել, հավանաբար, 1213 թ., այն բանից հետո, երբ Պապը համաձայնվել էր վերացնել Լևոնի վրա դրած իր բանադրանքը<sup>290</sup>: Տաճարականների միաբանությունն այս նավահանգիստն օգտագործել է հաշվեկատորեն, որովետև 1201 թ. հիշատակելով Կիլիկյան Հայաստանում միաբանության տարեկան եկամուտների մասին, Լևոնը դրանք գնահատում էր 20000 բեսանի սահմանում, ինչը, նրա կարծիքով, արդարացնում էր տաճարականների մասնակցությունը երկրի պաշտ-

---

Hospitallers' interventions in Cilician Armenia: 1291-1375.– **T. S. R. Boase**, Գշվ. աշխ., էջ 128-129; **F. Hild, H. Hellenkemper**, *Tabulae imperii Byzantini*, Bd. V: Kilikien und Isaurien, S. 191-193, 421-423:

<sup>288</sup> Ֆ. Յիլդը և Յ. Յելլենկենմպերն առաջարկում են երեք վայր, որտեղ հնարավոր է տեղադրել Բոննել նավահանգիստը. մի կողմից՝ Հոնոսը (Արսուզը, այսօր՝ Ուլուքինարը), ենթադրություն, որին առավել հաճախ են տուրք տալիս, բայց նաև Գյուլսիհանը, որը փոքր նավահանգիստ է Ալեքսանդրետի և Հոնոսի միջև և «Պոր դը Կոլոնը»՝ Հոնոսից մոտավորապես ինը կիլոմետր դեպի հարավ-արևմուտք գտնվող՝ Քիշլասայ Քյոյի մոտակայքում (**F. Hild, H. Hellenkemper**, *Veröffentlichungen der Kommission für die Tabulae imperii Byzantini*, Bd. IV: Neue Forschungen in Kilikien, S. 115): Բոննել նավահանգստի տեղադրությանն առնչվող վերջին երկու առաջարկությունը հիմնվում են Պ. Ժակոյի աշխատության վրա. տե՛ս **P. Jacquot**, *Antioche, centre de tourisme*, v. 1, Antioche, 1931, p. 140, 144:

<sup>289</sup> *Innocentii III Romani pontificis Opera omnia*, J.-P. Migne, éd., 4 vol., Petit-Montrouge, J.-P. Migne, 1855. *Patrologiae cursus completus, series latina*, t. 216, cols. 430-431, N 64.

<sup>290</sup> **J. S. C. Riley-Smith**, Գշվ. աշխ., էջ 107: Ֆ. Յիլդի և Յ. Յելլենկենմպերի կարծիքով Բոննել նավահանգիստը կարող էր ավելի շուտ տաճարականներին վերադարձվել 1215 թ.: Տե՛ս **F. Hild, H. Hellenkemper**, *Tabulae imperii Byzantini*, Bd. V: Kilikien und Isaurien, S. 383:

պանութեանն իր կողքին, և չնայած այն բանին, որ դեռևս իր տիրապետության տակ էր պահուած նրանց նախկին բերդամրոց Պաղրասը<sup>291</sup>: 20000 բեսանի հասնող այս գումարը ներառում էր Լա Ռոշ Գիյոմի, Լա Ռոշ Ռուսսելի և, անտարակույս, նաև Բոննել նավահանգստի եկամուտները, քանզի գահակալը դեռևս չէր «զավթել» այս վայրը: Տաճարականները լքել են Բոննել նավահանգիստը 1268 թ., նույն տարում, ինչ Պաղրասը և Լա Ռոշ Ռուսսելը<sup>292</sup>, գիտակցելով, որ Յուսիսային Ասորիքում մամլուքների առաջխաղացմանը ցանկացած դիմադրություն ցուցաբերելն ի զուր է: Վերջիններս, որոնց գլխավորում էր սուլթան Բայբարսը, մայիս ամսին գրավել էին Անտիոք քաղաքը:

Ծովափնյա գոտում գտնվող միջնադարյան բնակավայրը, որը ներկայիս Սարի Սեկիի տեղադրման վայրում էր, Պայասից հարավ և Ալեքսանդրետից տասնմեկ կիլոմետր հյուսիս, թվում է, թե XII դարի կեսից սկսած կառուցել են տաճարական ասպետները: Դրա կառուցման ձևը թույլատրել է ապացուցել, թե ով է ռազմակալել այդ վայրը: Ռոբերտ Էդուարդսը լույս է սփռել Սարի Սեկի բերդամրոցի և Պաղրասի ու Դարպասկի բերդամրոցների աղյուսապատումների նմանությունների վրա<sup>293</sup>: Այս վայրից ծովն ավելի մատչելի էր, քանզի այն գտնվում էր Կիլիկյան Յայաստանի չորս դռներից մեկի՝ Պորտելլայի (որն անվանվել է նաև Յովնանի Մույթ)<sup>294</sup> մակարդակի և Միջերկրական ծովից նվազագույնը մեկ կիլոմետր հեռավորության վրա: Ըստ բազմաթիվ պատմաբանների՝ այս բնակավայրը կարող է համապատասխանել միջնադարյան Սերկեզին<sup>295</sup>, որոնք, սակայն, դրանում համոզված չեն: Սարի Սեկիում ժակոն հայտնաբերել է բերդամրոցից մինչև ծովափ ձգվող

---

<sup>291</sup> **Innocentii III**, Գշվ. աշխ., հ. 214, սյունակ 1003-1006, թիվ 43:

<sup>292</sup> *Les Gestes des Chiprois*, p. 771-772; *Chroniques d'Amadi et de Strambaldi*, Paris, 1891, p. 210 (այսուհետև՝ **Amadi**); *Chronique de l'île de Chypre par Florio Bustron*. *Mélanges historiques*, t. V, Paris, 1896 (Coll. de documents inédits sur l'histoire de France), p. 113 (այսուհետև՝ **Florio Bustron**):

<sup>293</sup> **R. W. Edwards**, Գշվ. աշխ., էջ 215, 216:

<sup>294</sup> **F. Hild, H. Hellenkemper**, *Veröffentlichungen der Kommission für die Tabulae imperii Byzantini*, Bd. IV: *Neue Forschungen in Kilikien*, S. 110-112; **R. W. Edwards**, Գշվ. աշխ., էջ 204: Յովնանի Մույթը Սարի Սեկիից գտնվում էր մեկ կիլոմետր հեռավորության վրա դեպի հարավ-արևելք: Այս անվանումը դրան է տրվել, քանզի լեզենդը հյուսողները ցանկանում էին, որ այս վայրում գտնվող կետը Յովնանին ցամաք նետեր հենց այստեղ: Յնմտ. **L. Alichan**, Գշվ. աշխ., էջ 497:

<sup>295</sup> **W. F. Ainsworth**, *Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia*, 2 vol., London, 1842, v. 1, p. 92; **V. Langlois**, *Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus, exécuté pendant les années 1852-1853*, Paris, 1861, p. 472-474; **L. Alichan**, Գշվ. աշխ., էջ 497; **P. Jacquot**, Գշվ. աշխ., էջ 121; **R. W. Edwards**, Գշվ. աշխ., էջ 215:

պարսպի հետքեր<sup>296</sup>։

Չալան քաղաքը պատսպարում է XII դարում տաճարականների կառուցած մի բերդամրոց<sup>297</sup>։ Ըստ Ռ. Ու. Էդուարդսի՝ վերջիններս այն լքել են, հավանաբար, 1266 թ. կամ 1268 թ.՝ մանլուքների առաջխաղացումների ժամանակ<sup>298</sup>։ Ըստ նույն հեղինակի՝ անհնար է ճշգրտորեն սահմանել, թե խաչակիրներին պատկանող միջնադարյան որ բնակավայրին կարող էր համապատասխանել այս վայրը, թեև խոսքը կարող է վերաբերվել ամրացված նավահանգստի<sup>299</sup>։ Նրա կարծիքով, պատմաբանների՝ այս առիթով առաջադրած ոչ մի ենթադրություն չի հիմնավորվում բավականաչափ համոզիչ ձևով<sup>300</sup>։ Այդուհանդերձ, Լա Ռոշ Ռուսսելի հետ նույնացմանն առնչվող՝ Պոլ Դեշանի փաստարկումը, ինչպես ինձ թվում է, միանգամայն արժանի է հավանության<sup>301</sup>։

Ալեքսանդրետը, մեր օրերի Իսկենդերունը, թվում է, թե XII-ից XIV դարերում եղել է տեղական նշանակություն ունեցող նավահանգիստ։ Խոսքը կարող է վերաբերվել խաչակիրներին պատկանող՝ Պաղրասի և Ամանոսում տաճարականների այլ բերդամրոցների ճյուղավորման մեջ ներառված նավահանգստի, որը կարող էր ակնթարթորեն Լևոն I-ի հսկողության ներքո անցնել այն ժամանակաշրջանում, երբ վերջինս XII և XIII դարերի սահմանագծին իր տիրապետության տակ էր պահում Պաղրասը և Դարպսակը<sup>302</sup>։ Միխայել Ասորին, ինչպես և Բար Յեբրեսը<sup>303</sup>, հիշատակում է Թորոսի դեմ Ռենոյի ձեռնարկած հարձակման մասին Ալեքսանդրետի դռան մոտ (Tar`ā de-Sūnqrātūn)<sup>304</sup>, իսկ Գրիգոր Երեցն առանց երկմտանքի Պորտելլան բնորոշում է իբրև առճակատ-

---

<sup>296</sup> P. Jacquot, նշվ. աշխ., էջ 150։

<sup>297</sup> Այստեղ կարելի է տեսնել ադյուսապատումների միևնույն ձևը, ինչ Պաղրասում և Դարպսակում, որին բնորոշ են Ամանոսում տաճարականների ճարտարապետությանը համապատասխանող լայն խոռոչներ ունեցող լուսամուտները և արտաքին ճակատային մասերը։ Տե՛ս R. W. Edwards, նշվ. աշխ., էջ 100-102։

<sup>298</sup> Նույն տեղում, էջ 99-100։

<sup>299</sup> Նույն տեղում։

<sup>300</sup> Նույն տեղում։ Պ. Դեշանի կարծիքով խոսքը վերաբերում է Լա Ռոշ Ռուսսելին։ Տե՛ս P. Deschamps, նշվ. աշխ., էջ 70-71, 363-365։ Կ. Կահանը գտնում է, որ տաճարականների Լա Ռոշ Ռուսսել բերդամրոցը կարող է շատ ավելի համապատասխանել Յաղար Սուզլանին։ Տե՛ս Cl. Cahen, նշվ. աշխ., էջ 143։

<sup>301</sup> P. Deschamps, նշվ. աշխ., էջ 363-365։

<sup>302</sup> R. W. Edwards, նշվ. աշխ., էջ 39։ Ալեքսանդրետ բնակավայրի մասին տե՛ս նաև F. Hild, H. Hellenkemper, Veröffentlichungen der Kommission für die Tabulae imperii Byzantini, Bd. V: Kilikien und Isaurien, S. 302։

<sup>303</sup> Bar Hebraeus, նշվ. աշխ., էջ 283։

<sup>304</sup> Michel le Syrien, նշվ. աշխ., էջ 314։



ման վայր, քանզի հիշատակում է «դռան» մասին<sup>305</sup>: Ըստ սկզբնաղբյուրների՝ 1153 թ. և 1156 թ. միջև տեղի ունեցած այս ճակատամարտը թուլյատրել է տաճարականներին երկարատևորեն հիմնավորվել տարածաշրջանում և, հետևաբար, հավանաբար, նաև Ալեքսանդրետում: Արաբ պատմիչ Էլ-Իմադը եղբորը հղած նամակներից մեկում պարզորոշ նատմանշում է Իսկենդերունահը (Iskenderounah), այն է՝ Ալեքսանդրետն, իբրև սուլթան Սալահ Էդ-Դինի կողմից մինչև 1188 թ. մարտը գրավված քաղաքներից մեկը<sup>306</sup>: Այս վայրն այնուհետև պետք է, որ Լևոն I-ը վերագրված լինի, ինչպես Պաղրասը և Դարպսակը: Ոչ մի սկզբնաղբյուր մեզ չի դրդում խորհել, որ հետագայում տաճարականները կրկին դրան տիրացել են: Վիլբրանդ Օլդենբուրգցին 1211-1212 թթ. նկարագրում է Ալեքսանդրետն իբրև ամրացված, սակայն, ավերված քաղաք<sup>307</sup>: Ջիակոմո Բոսիոն հիշատակում է 1347 թ. մամլուքների կողմից քաղաքի վերջնական գրավման մասին<sup>308</sup>:

Տաճարականները միայն Ալեքսանդրետի ծոցի երկայնքով ձգվող փոքր նավահանգիստների չէին տիրացել, այլև Կիլիկյան Հայաստանի ամենածաղկուն նավահանգստում՝ Այասում, իրենց ենթակայության ներքո ունեին նաև մի նավամատույց<sup>309</sup>:

## *Բ – Ծովային արտոնություններ*

Հայ գահակալները չեն բավարարվել տիրույթների նվիրատվությամբ. զիջված տարածքներում նրանք դրանց հավելել են օրինական իրավունքներ, որոնք երբեմն տարածվել են շատ ավելի ընդարձակ գո-

---

<sup>305</sup> **Grigor Yérêts**, Continuation de la chronique de Matt'eos d'Ouûha.– Edouard Dulaurier, éd. du texte et trad. française.– *RHC, DA*, t. I, p. 171.

<sup>306</sup> **El-'Imad**, Extrait de l'ouvrage intitulé : Le livre des deux jardins. Histoire des deux règnes, celui de Nour ed-Dîn et celui de Saleh ed-Dîn.– A.-C. *Barbier de Meynard*, éd. du texte et trad. française, Recueil des historiens des croisades. Historiens orientaux, t. IV, Paris, 1898, p. 303.

<sup>307</sup> **Wilbrandi de Oldenburg**, նշվ. աշխ., էջ 175; **Wilbrand von Oldenburg**, նշվ. աշխ., էջ 220-221:

<sup>308</sup> **Giacomo Bosio**, Dell'istoria della Sacra Religione et illusrtrissima militia di San Giovanni gierrosolimitano, t. II, p. 68.

<sup>309</sup> Տե՛ս 1279 թ. փետրվարի 11-ի թվակիր փաստաթուղթը, որը հրատարակել է Կ. Դեսիմոնին. **C. Desimoni**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Aïas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois.– « Archives de l'Orient latin », t. I, Paris, 1881, p. 495, N 4:

տիներում:

Քաղաքների, գյուղերի, ինչպես նաև դրանց պատկանելությունների նվիրատվությունները հիվանդախնամներին՝ ինչպես Սելևկիայում, Նորբերդում, Կամարդիասում, Լարանդայում (դրան տիրանալու պայմանով), Վաներում և Ճկերի տարածքում, հանգեցրել են այս տիրույթների նկատմամբ բոլոր իրավունքների նվիրատվությանը թե՛ ցամաքում և թե՛ դրանց ազդեցության ոլորտում գտնվող ծովային տարածություններում<sup>310</sup>: Երբեմն դա թույլատրում էր փոփոխել այս վայրերի տեսքը, օրինակ՝ նոր կառույցներով<sup>311</sup>, անկախ այն բանից, թե խոսքն ինչին է վերաբերում՝ ամրությունների, թե այլ կարգի կառույցների: Մուտքն ու ելքն այս տարածքներ՝ եղբայրների համար հարկերից զերծ էին: Այս իրավունքներով, հիվանդախնամները երբեմն ստանում էին կատարյալ ինքնուրույնություն դիվանագիտության ասպարեզում և հատկապես մահմեդականների հետ առճակատումների լուծման ձևի ընտրության հարցում<sup>312</sup>:

Տևտոնականներին տրված իրավունքները շատ ավելի կարևոր էին, քանզի դրանք սահմանափակված չէին նրանց զիջված ցամաքային և ծովային տարածությունների ազդեցության գոտիներով: Իրոք որ, Ամուդայի դղյակի և Սեսսիհնի, Բուքուեթիայի, Գունբեթֆորթի և Այունի գյուղերի՝ 1212 թ. ապրիլյան նվիրատվական հրովարտակով Լևոն I-ը շատ ավելի մեծ նշանակություն ունեցող զիջողական քայլի է դիմում, երբ թույլատրում է իր թագավորության ամբողջ տարածքում և դրան ենթակա ծովային տարածություններում, առանց հարկ վճարելու վաճառել ու գնել այն ամենն, ինչն անհրաժեշտ է նրանց միաբանության համար: Նավահանգիստներն ընդգրկվում են նրա թվարկած վայրերում.

“Dono et concedo amodo in perpetuum eisdem fratribus plenam libertatem per terram, per mare; per totum regnum meum et per totam terram omnium mihi subiacencium et obediencium in civitatibus, in castellis, in villis, in casalibus, in montibus, in planis, in portibus vendendi et emendi ad opus domus sue omnia victualia et queque sibi necessaria, et eciam equitaturas libere, quiete, pacifice, sine contradictione, sine omni dictura, sine contrarietate et sine exactione aliqua”<sup>313</sup>.

<sup>310</sup> **J. Delaville Le Roulx**, նշվ. աշխ., էջ 115-116, թիվ 1344; էջ 118-119, թիվ 1349; էջ 164-165, թիվ 1426; էջ 165-166, թիվ 1427:

<sup>311</sup> Նույն տեղում, էջ 164-165, թիվ 1426:

<sup>312</sup> Նույն տեղում, էջ 118-119, թիվ 1349:

<sup>313</sup> **V. Langlois**, *Le Trésor des Chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, p. 117-120; **E. Strehlke**, նշվ. աշխ., էջ 37-39, թիվ 46; **K. Forstreuter**, *Der deutsche Orden am Mittelmeer*, S. 234.

Անտիոքի իշխան Ռայմոնդ-Ռուբենը հետևում է իր պապի եղբոր և հովանավորի՝ Լևոն I-ի նախանշած ուղուն, երբ 1219 թ. մարտին համաճանարտոնություններ է շնորհում տևտոնականների Սուրբ Մարիի միաբանությանն Անտիոքի դքսության ամբողջ տարածքում.

“Ut libertatem plenariam habeant emendi, vendendi, intrandi et exeundi cum rebus propriis per totam terram meam tam infra Antiochiam quam extra, et per mare ac per omnia loca mei principatus et per universa passagia ipsi et res, que eorum erunt proprie, libere transire possint et redire, nullam penitus mihi vel balivis meis nec pactonariis nec hominibus meis dreituram neque consuetudines exsolventes”<sup>314</sup>.

Այդուհանդերձ, այս հրովարտակին վիճակված էր, անտարակույս, կարճատև գոյություն՝ նույն տարում հայոց թագավորի հանդեպ Ռայմոնդ-Ռուբենի դավաճանության պատճառով, ինչի հետևանքով Բոհեմունդ IV-ը վերագրավել է իշխանությունը, որը չի թվում, թե վերստին հանդես է եկել տևտոնականների համար շահավետ այդպիսի նախաձեռնությամբ: Լևոն Մեծագործի գերմանական ռազմավարությունը բացատրում է տևտոնական ասպետների նկատմամբ հայոց գահակալների որդեգրած դիրքորոշումը:

Այս փաստաթղթերն ակնհայտ են դարձնում նաև այն առևտրական արտոնությունները, որոնցից միաբանություններն օգտվում էին Կիլիկյան Հայաստանում և, այսպիսով, կռահել են տալիս այս միաբանությունների՝ երկրի տնտեսական գործունեության և այդ թվում ծովային առևտրում դրանց ներգրավվածության մասին:

## **II – Ասպետական միաբանությունները և ծովային առևտուրը Կիլիկյան Հայաստանում**

Հոգևորասպետական միաբանությունների ծովային գործունեությունը նկատելի է բազմաթիվ ասպարեզներում: Մասնավորապես XIII դարի 70-ական թվականներին ջենովացի նոտարների կողմից տրված որոշ փաստաթղթեր թույլատրում են այդ հավաստել: Դրանք մատնացույց են անում ասպետական միաբանությունների անդամների տնտեսական կյանքի մեկ կարճատև ժամանակաշրջանը՝ կապված միջերկրածովյան Կիլիկիայի հետ: 1279 թ. փետրվարի 11-ին Այասում նոտարներից մեկի կազմած պայմանագիրը ճշգրտում է, որ շինափայտերի ծո-

---

<sup>314</sup> E. Strehlke, նշվ. աշխ., էջ 41-42, թիվ 51:

վային բեռը մինչև տաճարականների նավամատույցը պետք է բերեր ոմն Գիյոմ Ռայմոնը<sup>315</sup>: Միաբանությունն անհապաղ օգտվում է նման բնույթի առևտրական գործարքներից՝ հարկեր գանձելով իր նավահանգիստ հասնող և այնտեղից առաքվող ապրանքներից<sup>316</sup>: Այս փաստաթղթերը հիշատակում են նաև առևտրական նպատակներով վարձակալված՝ հիվանդախնամների նավերի ներկայության մասին Այասի նավահանգստում: Հիվանդախնամների՝ «Սուրբ Անդրե» նավը վարձակալել են երեք ջենովացի՝ Պեպոն Մալոնը (կիսով չափ), Բոնիֆաս դը Տիբայը (մեկ երրորդի չափով) և Անրի դը Գրիմալդին (իբրև իր եղբոր՝ Լուկ դը Գրիմալդիի դատապաշտպան՝ մեկ վեցերորդի չափով): Նրանք միջնորդների դեր են կատարում միաբանության և իրենց արտադրանքները մինչև Ջենովա կամ առնվազն իտալական քաղաքի ազդեցության ոլորտում գտնվող՝ Պորտո Վենետիցից մինչև Նուլի ձգվող գոտի փոխադրել ցանկացող վաճառականների միջև: Այս նավը կարող էր կրել 30-ից 35 կանտար (cantar), այն է՝ 6780-ից մինչև 7910 կիլոգրամ: Ապրանքների փոխադրման պայմանները սահմանված են ամենաճշգրիտ ձևով. օրինակ՝ հայտնի է, որ տախտակամածի վրա գտնվող յուրաքանչյուր կանտարի համար սեփականատերը վճարում էր Կիլիկյան Հայաստանի սարակինոսյան ութ բեսան<sup>317</sup>: Նշվում են նաև նավի մեկնումի ժամկետները և պայմանավորվածություն կայացրած կողմերից մեկի նկատմամբ՝ պայմանագրի կետերը չպահպանելու պարագայում կիրառվող պատժիչ միջոցները: Բացի դրանից, տնօրինողներն ավելացնում են միայն մեկ կետ, որը թվում է, թե հաճախ էր հանդիպում հիվանդախնամների (և մասնավորապես նրանց մեծ կոմանդոր Բոնիֆաս դե Կալամանդրակենի) հետ կնքված պայմանագրերում. այն է՝ նավի վերազնունմն այստեղ բացառվում է<sup>318</sup>: Պայմանագրի՝ վերազնունմն առնչվող կետը, հավանաբար, հետապնդում էր, եղբայրների համար ծայրահեղ իրավիճակում, նավը բռնագրավելու նպատակ: Այսպիսով, միաբանությունը կարող էր եկամտաբեր դարձնել նավերի գնման ժամանակ կատարած իր ներդրումը՝ դրանք վարձակալությամբ տալով իտալացի վաճառականներին, եթե դրանք չէին օգտագործվում ռազմական նպատակներով:

<sup>315</sup> C. Desimoni, նշվ. աշխ., էջ 495, թիվ 4:

<sup>316</sup> L. Alichan, նշվ. աշխ., էջ 439:

<sup>317</sup> 100 ռոտլ (rotl) ունեցող կանտարը համագոր էր 226 կիլոգրամի, այն դեպքում, երբ բամբակի համար նախատեսված կանտարը՝ 237 կիլոգրամի: Տե՛ս C. Desimoni, նշվ. աշխ., էջ 450:

<sup>318</sup> Նույն տեղում, էջ 511-512, թիվ 32: Այս փաստաթուղթը թվագրված է 1279 թ. մարտի 24-ով:

1279 թ. մարտի 30-ի թվակիր՝ նոտարական մեկ այլ փաստաթուղթ հիշատակում է հիվանդախնամների՝ Այասուն խարիսխ ձգած նավի մասին, որը քիչ անց պետք է մեկներ Ջենովա: Այս նավը վարձակալել են նաև Ջուզուֆան դը Ջուիզուֆոն և նրա եղբայր Պերսուալը, որպեսզի վերադարձնեին՝ ոսկի, արծաթ և մարգարիտներ իրենց տված վարկատուի՝ Լուկ դը Ռեշոյի պարտքը: Բացի իրենց ապրանքներից, նրանք Լուկ դը Ռեշոյի համար տախտակամածի վրա տեղափոխում էին, իբրև գրավ, իմբիրի համեմունքի և պղպեղի երեսուն զամբյուղ: Այս նավը մեկ ամսից պետք է մեկներ Ջենովա կամ օտարերկրյա այլ նավահանգիստ, որպեսզի ապրանքները բեռնաթափվեին և պարտքը վճարվեր նշված վարկատուին կամ նրա էմիսարներին: Պեպոն Սալոնը՝ նախորդից մեկ ամիս անց կազմված այս փաստաթղթի վկաներից է<sup>319</sup>: Բացառված չէ, և նույնիսկ խիստ հավանական է, որ երկու պարագայում խոսքը վերաբերում է հիվանդախնամների միևնույն նավին, եթե հաշվի առնենք, որ Պեպոն Սալոնի ազգանունը նշված է երկու փաստաթղթում: Բացի դրանից, նպատակակետը նույնն է, իսկ մեկնումի և ժամանման ժամանակահատվածները, ընդհանուր առմամբ, համընկնում են (առաջին պարագայում մեկնումի ժամանակահատվածը նշված է՝ այս պահից, այն է՝ մարտի 24-ից մինչև ապրիլի 19-ը, բայց երկրորդ պարագայում՝ նշված չէ, ինչի կապակցությամբ, սակայն, ճշգրտված է ժամանման ժամանակահատվածը՝ փաստաթղթի ստորագրման պահից նվազագույնը մեկ ամիս անց, այն է՝ մինչև ապրիլի 30-ը, այսպիսով, այս սահմանագծերն անհամատեղելի չեն): Բացի դրանից՝ ըստ առաջին փաստաթղթի, նավի մի մասը դեռևս վարձակալված չէր: Կարելի է նաև նշել այն փաստը, որ հաճախակի ճանապարհորդություններ ձեռնարկելու համար միաբանությունն անհրաժեշտ չափով նավեր չունեին:

Օտտո Բլանկարդի՝ ի նպաստ տևողականների կտակը, հավանաբար, կազմվել է նավերից մեկի տախտակամածի վրա<sup>320</sup>: Իբրև հրահանգ՝ նվիրատուն եղբայրներին հանձնարարում է իր ունեցվածքի վաճառքից ստացված փողն օգտագործել իրենց հիվանդանոցի հիվանդներին կերակրելու համար<sup>321</sup>: Օտտո Բլանկարդը գտնվել է, հավանա-

<sup>319</sup> Նույն տեղում, էջ 519, թիվ 46:

<sup>320</sup> Իրոք որ, փաստաթղթի սկզբում նշված տարեթիվը (Սուրբ Լորանի նախօրյակին, 1278 թ. օգոստոս) զանազանվում է կտակի հավելվածի տարեթվից (24-ը փետրվարի 1279 թ.): Բացի դրանից, առաջին տարեթվին չի հետևում վայրին առնչվող որևէ նշում. ըստ այդմ՝ կարելի է պատկերացում կազմել, որ փաստաթուղթը կազմվել է բաց ծովում, նավի տախտակամածի վրա:

<sup>321</sup> Ունեցվածքը եղել է բազմազան՝ բաղկացած նավի փայերի երեք քառորդից՝ ջե-նովական արտադրության արկղիկ, երկու ներքնակ, շերտավոր մեկ ծածկոց, երկու մեծ

բար, առողջական վատ վիճակում, քանզի կտակը գրել է նավի տախտակամածի վրա և բացի այդ, այն անձանց բացակայությամբ, որոնց հանձնարարվում էր այն իրականացնել: Այս պատճառով, կտակին նա կցել է հավելված, որպեսզի «հրապարակային փաստաթուղթը կազմվի հրապարակայնորեն»<sup>322</sup>: Նոտարական կարգով հաստատված փաստաթղթերը վկայում են, որ ասպետական միաբանությունները, անկախ այն բանից իբրև նավամատույցի, թե նավերի սեփականատերեր, Կիլիկյան Հայաստանում հիմնավորապես ներգրավված էին ծովային առևտրում, ինչպես նաև իտալական քաղաքների առևտրական համայնքների հետ դրանց ունեցած կապը, որոնց վաճառականներն ընդունում էին ոչ միայն դրանց օգտակարությունն իրենց առաջին հերթին հետաքրքրող, այն է՝ առևտրի ասպարեզում, այլև հավասարապես՝ դրանց առաքելության գթասիրտ և հիվանդանոցային բնույթը: Օտտո Բլանկարդի՝ ի նպաստ տևողականների կազմած կտակը որևէ այլ բանի շուրջ խորհելու տեղիք չի տալիս:

Այսպիսով, XIII դարի երկրորդ կեսի ընթացքում և XIV դարի սկզբում հոգևորասպետական միաբանություններն օգտվել են Այասի հարաճուն վերելքից և առևտրական ոլորտում դրա առավելություններից, ինչը բացատրվում է միաժամանակ Ակրայի կործանմամբ, Պարսկաստանի խաների հետ՝ հայոց գահակալների պահպանած արտոնյալ կապերով և քաղաքի խիստ բարենպաստ աշխարհագրական դիրքով (Թավրիզով անցնող մետաքսի ճանապարհին ավարտին էր հասնում այստեղ)<sup>323</sup>: Յաֆֆայի գրավումը Ղիչաղ Թողթայ խանի կողմից 1308 թ. ևս նպաստել է մի քանի տարով առևտրական ուղիների շեղմանը դեպի Այաս<sup>324</sup>: Այս նավահանգստի վրա 1321 թ. մոնղոլների, այնուհետև մամ-

---

սավաններ, սպիտակեղեն, երկու ֆունտ քրքում, մի սրածայր սաղավարտ, մի «գավազանում» (bordoum) (խիստ հավանական է, որ խոսքը վերաբերում է գավազանի, ուխտագնացի փայտի), փոքրիկ երկաթե դանակ և բացի դրանցից՝ մեկ կաթսա:

<sup>322</sup> Այս հավելվածն արվել է, անտարակույս, Այասում, քանզի հաջորդ՝ միևնույն օրն այդ քաղաքում՝ ջենովացիների վաճառատանը կազմված փաստաթղթում հիշատակվում է նաև Անրի դը Գրիմալդին:

<sup>323</sup> Այստով տարանցիկ փոխադրվող մետաքսի մասին տե՛ս **M. Balard**, *La Romanie génoise (XII<sup>e</sup>-début du XV<sup>e</sup> siècle)*, t. 2, Rome, 1978, p. 725, 726, 727, 728, 730; *Առլյնի՝ Gènes et la mer Noire (XIII<sup>e</sup>-XV<sup>e</sup> siècles)*. – « *Revue historique* », Paris, 1983, N CCLXX, p. 35-36 (rééd. **M. Balard**, dir., *La mer Noire et la Romanie génoise (XIII<sup>e</sup>- XV<sup>e</sup> siècles)*, Londres, 1989):

<sup>324</sup> Այդուհանդերձ, 1313 թ. խանը ջենովացիներին կրկին թուլլատրել է վերադառնալ Յաֆֆա: Տե՛ս **R.-H. Bautier**, *Les relations économiques des Occidentaux avec les pays d’Orient au Moyen Age. Points de vue et documents.* – **M. Mollat**, dir., *Sociétés et compagnies de commerce en Orient et dans l’océan indien (Actes du 8<sup>ème</sup> colloque international d’Histoire maritime (Beyrouth - 5-10 septembre 1966))*, Paris, 1970, p. 276 (rééd.: **R.-H. Bautier**, *Commerce méditerranéen et*

լուքների հարձակումները, որոնք 1322 թ. ավերել են դրա բերդամրոցները, հարվածել են առևտրի բարգավաճմանը, թեպետ ներխուժողներն ապրիլ ամսից մեկնել են: Ջիովաննի ԻԲ-ի՝ 37722 ֆլորինի սահմանում Կիլիկյան Հայաստանին հատկացրած ֆինանսական օգնությունը թույլատրել է մասամբ վերականգնել քաղաքի ամրություններն ու աշտարակները, ինչպես նաև կողոպտված այլ քաղաքներ<sup>325</sup>: Այդուհանդերձ, Այասի, հավանաբար, վերջնական գրավումը մամլուքների կողմից 1337 թ., կասեցրել է Արևմուտքի հետ դրա փոխանակումները կամ առնվազն հսկայական չափով արգելակել է դրանք<sup>326</sup>:

Մենք ունենք նաև հոգևորասպետական միաբանություններից պատկանող նավահանգիստների գործունեությանը վերաբերող որոշ տվյալներ: Մի վաճառականի անանուն դասագրքում, որը գտել է և մասամբ հրատարակել Ռոբեր-Անրի Բոտինեն<sup>327</sup>, մեզ են տրամադրվում Այասի և Բոննելի նավահանգիստներ տարանցիկ փոխադրվող ապրանքներին վերաբերվող արժեքավոր տեղեկություններ: Այսպիսով, ըստ այդ սկզբնաղբյուրի, որը Ռ.-Ա. Բոտինեն հակված է թվագրել 1315 թ. սահմաններում, տաճարականների Բոննել նավահանգիստը ներմու-

---

banquiers italiens au Moyen Age, Great Yarmouth (Norfolk), 1992): Այասի նավահանգստի տնտեսական գործունեության մասին տե՛ս նաև **L. Alichan**, *L'Arménie-Veneto, Compendio storico e documenti della Relazioni degli Armeni coi Veneziani*, Venise, 1893; **Ս. Վ. Բոննազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973; **C. Otten-Froux**, *L'Aïas dans le dernier tiers du XIII<sup>e</sup> siècle d'après les notaires génois. – The Medieval Levant. Studies in Memory of Eliyahu Ashtor (1914-1984)*, “Asian and African Studies”, 1988, 22, p. 147-171; **P. Racine**, *L'Aïas dans la seconde moitié du XIII<sup>e</sup> siècle. – “Rivista di Bizantinistica”*, 1992, t. 2, p. 173-206; **C. Otten-Froux**, *Les échanges commerciaux. – Claude Mutafian*, dir., *Le Royaume arménien de Cilicie*, Paris, 1993, p. 118-126; *Մուլնի՝ Կիլիկյան առևտուրը XII-XIV դարերում. – «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 2, էջ 205-214); L. Balletto*, *Il commercio armeno-italiano (secoli XIII-XV). – Claude Mutafian*, dir., *Roma-Armenia*, Roma, 1999, p. 184-187:

<sup>325</sup> Դրամական այս օգնություններին վերաբերող բազմաթիվ հղումներ և փաստաթղթերի որոշ հրատարակումներ տե՛ս **J. Richard**, *Chypre sous les Lusignans. Documents chypriotes des Archives du Vatican (XIV<sup>e</sup> et XV<sup>e</sup> siècles)*, Paris, 1962, p. 36-49: Ջիովաննի ԻԲ-ի կողմից 30000 ոսկե ֆլորինի առաքման մասին հիշատակում է նաև Ներսես Պալիենցին. տե՛ս Ներսես Պալիենցի ժամանակագրական հատվածները (XIV դ.).– Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., էջ 189:

<sup>326</sup> Քրիստոնյաների համար Այասի վերջնական կորստի տարեթվի շուրջ պատմաբանների առաջադրած զանազան ենթադրությունների և սկզբնաղբյուրների լույսի ներքո՝ այդ տվյալների լուսաբանման առնչությամբ հմմտ. **A. T. Luttrell**, *Մշվ. աշխ.*, էջ 134-144:

<sup>327</sup> Այս ձեռագիրը պահպանվել է Ֆլորենցիայի Մարուչելլիանա գրադարանում (C 226 համարի տակ): Հատվածները հրատարակել է Ռ.-Ա. Բոտինեն. **R.-H. Bautier**, *Մշվ. աշխ.*, էջ 263-331:

ծում էր արծաթ, վենետիկյան գրո\*, այծի կաշի և կիպրական հետկայմի շեղ եռանկյունի առագաստներ, իսկ արտահանում էր մեծ քանակությամբ բամբակ, ինչպես նաև բամբակազգիներ, որոնք պետք է իբրև կերակուր ծառայեին Կիպրոսի եզների համար<sup>328</sup>: Իտալացի վաճառականներն, այսպիսով, մասնակցում էին նաև համեստ մեծությամբ ունեցող հայկական այս նավահանգստի առևտրին, որտեղ փոխանակումները կատարվում էին մոտակա Կիպրոս կղզու հետ:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով, հիվանդախնամներին վստահված Կանամելլա նավահանգիստն իր անունն ստացել էր իրեն շրջապատող շաքարեղեգնի բազմաթիվ տնկաստաններից<sup>329</sup>: Ըստ Ջոնաթան Ռիլեյ-Սմիթի՝ Ամանոսի սոճիների արտահանումն սկսվել է այս վայրից<sup>330</sup>: Լևոն I-ի հրովարտակն, ի դեպ, երկու տարով Կանամելլայի եկամուտները, իբրև գրավ, թողնելով հիվանդախնամներին, ճշգրտում էր, որ Գարին դը Մոնտեգյուն և միաբանության եղբայրները կարող էին ունենալ բոլոր իրավունքները (հետևաբար, նրանք կարող էին ապրանքներից գանձել ելքի և մուտքի բոլոր հարկերը), քանզի նրանց էր նվիրաբերվում “omnes drecturas terre et maris, tam lignorum quam aliarum rerum venalium”-ը<sup>331</sup>, ինչը հաստատում է փայտի ծովային առևտրի ենթադրությունը՝ առանց սահմանափակելու, այդուհանդերձ, այս նավահանգստի առևտուրը միայն այս ապրանքով:

Ինչ վերաբերում է, հավանաբար, տաճարականներին պատկանող Սարի Սեկի բերդամրոցին, որը գտնվում էր թե՛ Միջերկրական ծովից և թե՛ Պորտեղլայի մաքսային գոտուց նվազագույնը մեկ կիլոմետր հեռավորության վրա<sup>332</sup>, ապա այն իշխում էր Ալեքսանդրետը Դաշտային Կիլիկիայի հետ կապող ճանապարհի վրա<sup>333</sup>: Ծովային առևտրում այս երթուղու դերն արժանի է եղել ուշադրության, քանզի Հալեպից ժամանող քարավաններն այս ճանապարհով էին ընթանում դեպի Այաս, Պորտեղլա, Մամեստիա, Ադանա և Տարսոն<sup>334</sup>:

\* Վենետիկյան դրամի տեսակ: – Ծ. ք.:

<sup>328</sup> “Portaxi a Porbonello: argento e grossi veneziani d’argento, a cambellotti e mezanelli di Cipri e i piu voglono essere verdi smeraldini e bianchi e azurri e fistichini. Traxi di Pornobello: chotoni assai, e del suo seme si porta in Cipri per dare mangiare a buoi”. Տե՛ս նույն տեղում, էջ 318:

<sup>329</sup> **L. Alichan**, Sissouan ou l’Arméno-Cilicie, p. 475.

<sup>330</sup> **J. S. C. Riley-Smith**, նշվ. աշխ., էջ 108:

<sup>331</sup> 1214 թ. ապրիլ 23-ի հրովարտակը. **J. Delaville Le Roulx**, նշվ. աշխ., էջ 165-166, թիվ 1427:

<sup>332</sup> **H. Hellenkemper**, նշվ. աշխ., էջ 108:

<sup>333</sup> **R. W. Edwards**, նշվ. աշխ., էջ 204, 215:

<sup>334</sup> **P. Z. Bédoukian**, Coinage of Cilician Armenia, éd. révisée, Connecticut, 1979, p. 26.



Միաբանություններն, իրոք որ, ներգրավված էին Կիլիկիայի ծովային առևտրում: Այդուհանդերձ, հարկ է հարաբերականորեն մոտենալ դրա դերին ու նշանակությանը և թեպետ եղբայրների՝ ծովով պայմանավորված գործունեությունն ապահովել է շահավետ եկամուտներ, միաբանությունների համար այն ոչ մի դեպքում չէր կարող լինել առաջնային և ստացված եկամուտների առումով հեռու էր իտալական ծովային հանրապետությունների հետ հավասար դիրքեր գրավելուց: Միաբանությունների նավերը կամ նրանց անդամների ներկայությունը կիլիկյան ջրերում ամենից հաճախ հիշատակվում են ճգնաժամային հենթի վրա: Հանգամանքները պարբերաբար անհրաժեշտ էին դարձնում եղբայրների միջամտությունը հաշտեցնողների կամ ավելի հաճախ՝ ճնշված քրիստոնյաների պաշտպանների դերում:

### **III – Ծովն իբրև Կիլիկյան Հայաստանում հոգևորասպետական միաբանությունների առաքելության իրականացման միջոց**

#### *Ա – Ծովային ուղիների կարևորությունը XIV դարի սկզբի կիպրական քաղաքական ճգնաժամի լուծման խնդրում*

1306 թ. Կիպրոսում իշխանության բռնագրավումն Ամորի դը Տյուրոսի կողմից՝ ի վնաս իր եղբայր Հենրի II թագավորի, կողմերի միջև սկզբնավորում է բանակցությունների լարված մի ժամանակաշրջան: Սկզբնական շրջանում հիվանդախնամները միջամտել են տաճարականների հետ մեկտեղ, որպեսզի Ամորիի և գահընկեց արված թագավորի միջև համաձայնություն կայացվի: Դա հանգեցրել է գլխավորապես ֆինանսական հարցերի կարգավորմանը<sup>335</sup>, քանզի Հենրիին հրաժարվել է ցմահ կառավարիչ նշանակել իր եղբորը: Նա դրան համաձայնվել է միայն 1308 թ.՝ թագավորական կուսակցության տապալումից հետո: 1310 թ. փետրվարին Ամորին աքսորել է Հենրիին Կիլիկյան Հայաստան: Գունդեստաբլը կապված էր Կիլիկիայի հայոց թագավոր Օշինի հետ, որը նրա կնոջ՝ Իզաբելի եղբայրն էր: Թագավորի շրջապատում գտնվող մի քանի ազդեցիկ անձանց Օշինն արդեն պահում էր «կիսագերության» մեջ. նրա քեռուն՝ Ֆիլիպին, Կիպրոսի սենեշալին և Բողուին դժբեղիին: Վերջիններիս գահակալը կասկածել էր 1309 թ. Հռոդոս փախչելու ցանկություն ունենալու մեջ<sup>336</sup>: Լինելով իր փեսայի կողմնա-

<sup>335</sup> Amadi, նշվ. աշխ., էջ 251; Florio Bustron, նշվ. աշխ., էջ 137:

<sup>336</sup> Amadi, նշվ. աշխ., էջ 313-314; Florio Bustron, նշվ. աշխ., էջ 183:

կիցը՝ հայոց թագավորն ըստ այդմ՝ հանգել է այն մտքին, որ հարկ չկա վստահել հիվանդախնամների, ինչպես նաև Պապի բանագնաց Ռայմոնդ դե Պիսիին, որը նրա թագավորություն էր եկել Յենրի II-ի հետ բանակցելու նպատակով (պաշտոնապես՝ հանուն Ամորիի իշխանության ճանաչման), այնուհետև՝ 1310 թ. հունիսի 5-ին, Տյուրոսի սենյորի սպանությունից հետո<sup>337</sup>, Կիպրոսի գահակալին ազատագրելու համար: Պարբերական բնույթ կրող այս նախաձեռնությունները հիվանդախնամների համար առիթ են դարձել բազմիցս Կիպրոսից Կիլիկյան Հայաստան գնալու և Կիպրոս վերադառնալու համար: Հիվանդախնամների մեծ կոմանդոր Գի դը Սևերակը Կիլիկյան Հայաստանից Ֆամագուստա է վերադարձել թիանավով՝ այն նույն օրը, երբ վախճանվել է Ամորի դը Տյուրոսը: Նրա այցելության ընթացքում Օշինը նրան խանգարել է տեսնել Յենրի II-ին, սակայն, վերջինս կարողացել էր մի նամակ փոխանցել նրան, որով թագավորն իր փոխարեն ղեկավար էր նշանակում հիվանդախնամների առաջնորդ Ֆուլք դը Վիլլարեին և իր մարդկանցից պահանջում էր ենթարկվել նրան<sup>338</sup>: Հենց որ Գի դը Սևերակը տեղեկանում է Ամորիի մահվանը, կրկին ծով է դուրս գալիս և ասի ելնում Մալլոսի նավահանգստում՝ Ալեքսանդրետի ծոցում: Այդուհանդերձ, նա հարկադրված է եղել յուրայինների հետ թիանավով անմիջապես ետ մեկնել, որովհետև նրան ուղեկցող անձանցից մեկը՝ Նուվո դ'Արժանն աճապարել էր ցամաք՝ հայերին հաղորդելու համար հիվանդախնամների օգնությամբ՝ Տյուրոսի սենյորի, նրա կնոջ և երեխաների սպանության մասին: Գի դը Սևերակը ջանացել է բարելավել իրավիճակը՝ հայոց թագավորին իրազեկելով միայն Ամորիի մահվան մասին և խնդրելով ազատ արձակել Կիպրոսի թագավորին, ինչին Օշինը համաձայնվել է այն պայմանով, որ իր քույրը նամակով հաստատի, որ թե՛ ինքը և թե՛ իր երեխաները կենդանի են<sup>339</sup>: Հիվանդախնամները, ինչպես նաև Պապի բանագնացը, երբ հարկ էր, որ Կիլիկյան Հայաստան գնային իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնելու համար, գրեթե միշտ ասի էին ելնում Մալլոսի նավահանգստում (իսկ ավելի ծայրահեղ պարագաներում՝ Այասում)<sup>340</sup>: Մալլոսի առաջնորդը նույնիսկ միջամտել է այս գործին, որովհետև Կիլիկյան Հայաստանի թագավորը

<sup>337</sup> Սիմոն դը Մոնտոլիֆի կողմից:

<sup>338</sup> **Amadi**, նշվ. աշխ., էջ 336-338, 368; **Florio Bustron**, նշվ. աշխ., էջ 201-205, 224-225: Առաջնորդի փոխարեն այդ պարտականությունն իրականացրել է Կիպրոսում հիվանդախնամների կոմանդոր Ալբեր դ'Ալեմանը:

<sup>339</sup> Նույն տեղում:

<sup>340</sup> **Amadi**, նշվ. աշխ., էջ 371-372, 378; **Florio Bustron**, նշվ. աշխ., էջ 227, 232:

նրան հանձնարարել է ձգձգել Ռայմոնդ դե Պիսի մեկնումը (խանգարելով նրան իր թիանավ բարձրանալ), որին ինքը հենց նոր էր ազատ արձակել, որպեսզի նա վերջնականապես կատարի իր հանձնարարությունը<sup>341</sup>: Գի դը Սևերակն այնուհետև ստանձնել է մի առաքելություն, այն է՝ համոզել Իզաբելին՝ Տյուրոսի Տիկնոջը, դեպի Կիլիկյան Չայաստան ուղևորվող թիանավ բարձրանալ, որպեսզի Չենրին իրենց վերադարձի<sup>342</sup>: Բազմաթիվ խուսանավումներից և ուժի ճնշման տակ նավ բարձրանալու՝ մեծ գունդստաբլի սպառնալիքից հետո, Տիկինը դրան համաձայնվել է, սակայն, միայն մեկ այլ մարդու՝ Ռոբեր դը Սոնգեսարի միջամտության արդյունքում: Չիվանդախնամների հանդեպ Իզաբելի համառորեն տածած հիշաչարությունը չի մարել<sup>343</sup>: 1310 թ. օգոստոսի 20-ին Տյուրոսի Տիկնոջն ուղեկցող նավերը ժամանել են Այասի նավահանգիստ: Այս նավատորմիղը համեմատաբար ազդեցիկ էր, քանզի բաղկացած էր տասնմեկ թիանավից, երկու մեծ թիանավերից և թեր ունեցող չորս առագաստանավից: Այս ժամանումը հարուցել է խուճապ և քանզի որևէ թույլտվություն չի հետևել, հնչել է զենքի կոչող զանգը: Այասի նավահանգիստ մուտք գործելու թույլտվություն՝ նավատորմիղի հրամանատար Ռենո դը Սանսոնին տրվել է միայն մեկ թիանավի, մեկ նավակի և մեկ թեթև առագաստանավի համար, իսկ մյուսները պետք է ուղարկվեին մեկ այլ նավահանգիստ<sup>344</sup>, որպեսզի տեղի ունենար Տյուրոսի իշխանուհու և թագավորի փոխանակումը: Ըստ Ամադիի՝ հայերը ծրագրել էին չհանձնել թագավորին, հենց որ Տյուրոսի Տիկինը և նրա երեխաներն իրենց ձեռքն ընկնեին: Այդուհանդերձ, նրանց հետապնդել է կիպրական մի թեթև առագաստանավ, որը զավթել է թագավորի նավակը և նրան տեղափոխել այն միակ թիանավը, որին հաջողվել է մուտք գործել նավահանգիստ<sup>345</sup>: Այսպիսով, հիվանդախնամները և Պապի բանագնացները կարողացել են լուծում տալ նրբաբնույթ այս գործին՝ Կիպրոսը և Կիլիկյան Չայաստանը միմյանցից անջրպետող ծովային տարածություններում անընդմեջ տեղափոխությունների շնորհիվ: 1319 թ. և 1323 թ. Պապը կրկին համառ ջանքեր է գործադրել, որպեսզի հիվանդախնամ եղբայրները վերացնեն հայոց և կիպրացի-

<sup>341</sup> Amadi, Գ2վ. աշխ., էջ 356; Florio Bustron, Գ2վ. աշխ., էջ 215-217:

<sup>342</sup> Amadi, Գ2վ. աշխ., էջ 357-358; Florio Bustron, Գ2վ. աշխ., էջ 231-232:

<sup>343</sup> Amadi, Գ2վ. աշխ., էջ 358-359, 361, 375-377; Florio Bustron, Գ2վ. աշխ., էջ 217-219, 223, 231-232:

<sup>344</sup> Պագանի նավահանգիստ (տե՛ս Florio Bustron, Գ2վ. աշխ., էջ 233), ըստ Պարիի՝ «Լագանի»: Ա. Լ. դը Մաս Լատրին կարծում է, որ խոսքը վերաբերում է Ալեքսանդրետին, սակայն, ոչինչ թույլ չի տալիս այդ հավաստել:

<sup>345</sup> Amadi, Գ2վ. աշխ., էջ 378; Florio Bustron, Գ2վ. աշխ., էջ 232-233:

Ների գահակալներին ծվատող տարածայնությունները<sup>346</sup>:

*Բ – Ծովն իբրև Կիլիկյան Հայաստանի  
համար օգնություն տեղ հասցնելու միակ միջոց*

Ծովային ճանապարհը ծառայել է նախ և առաջ իբրև հայերին օգնության հասնելու՝ հիվանդախնամների առավել հաճախ նախընտրած միջոց: Մինչև XIII դարի 60-ական թվականները միաբանության ասպետները թագավորությանը պաշտպանելու համար կարող էին ներքին գործերին միջամտել՝ այդ երկրում, ինչպես նաև շատ մոտ գտնվող Անտիոքի դքսությունում և Տրիպոլիի կոմսությունում իրենց պատկանող տարածքներից: Սուրբ երկրում, Հյուսիսային Ասորիքում և Կիլիկյան Հայաստանում մամլուքների առաջընթացի պայմաններում, այդ միջամտությունները կարող էին իրականացվել դրսից: Այսպես, 1282 թ. մարտի 31-ի թվակիր նամակում հիվանդախնամների եղբայր ժոզեֆ դը Սանսին տեղեկացնում է Անգլիայի թագավոր Էդուարդ չորրորդին, որ իր տերը՝ Նիկոլա Լորգնը, Կիլիկյան Հայաստանի թագավորին, որի բազմաթիվ քաղաքներ կողոպտվել են, ուղարկել է հարյուր հեծյալ, հիսուն հետիոտն և հիսուն թուրքալ<sup>347</sup>: 1292 թ. հունվարի 23-ին Նիկողայոս Դ պապը կոչով դիմում է հիվանդախնամների առաջնորդ ժան դը Վիլլիերին և տաճարականների առաջնորդ Տիբո Գոդենին, որպեսզի իրենց թիանավերն ի սպաս դնեն Կիլիկյան Հայաստանի թագավորության պաշտպանությանը: Միևնույն հարցով նա դիմում է Հռոմեական եկեղեցու թիանավերնի նավապետ Ռոժե դը Տոդինիսին<sup>348</sup>: Սեն-ժան դ'Ակրայի անկումից մեկ տարի անց, Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող միակ քրիստոնեական պետության՝ Կիլիկյան Հայաստանի պաշտպանությունն Արևելքում դարձել էր պապական քաղաքականության առաջնահերթ նոր խնդիրներից մեկը: Ալեն Դենուրժեն խորհել է այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Կիպրոսում տաճարականների կողմից երկու թիանավի զինումը կամ 1292 թ. (ըստ՝ Տամպլիե դը Տյուրոսի), կամ 1293

<sup>346</sup> A. T. Luttrell, *Աշխ.*, էջ 126:

\* Թուրքալ (turcople) անվանումը տրվում էր քրիստոնեությունն ընդունած կամ արևելյան ծագում ունեցող քրիստոնյա՝ հոգևորասպետական միաբանությունների հեծելազորում ծառայող բնիկ զինվորներին: – Ծ. թ.:

<sup>347</sup> J. Delaville Le Roulx, *Աշխ.*, էջ 424-428, թիվ 3782:

<sup>348</sup> Երկր տեղում, էջ 604, թիվ 4183; Les registres de Nicolas IV, recueil des bulles de ce pape, publiées ou analysées d'après le manuscrit original des Archives du Vatican, Ernest Langlois, éd., 2<sup>ème</sup> série, t. II, Paris, 1905, p. 913, N 6850-6856:

թ. (ըստ՝ ջենովական տարեգրության) հավաստում էր Նիկողայոս Դ-ի նախատեսած օգնությանն ընթացք տալը և եզրակացրել է, որ եթե այդ զինուժը տեղի ունեցած լիներ 1292 թ., կարող էր, ըստ էության, լինել Պապի կոչի պատասխանը, և, *a contrario*, եթե այն ձեռնարկված լիներ 1293 թ., շատ ավելի հավանական է, որ կարող էր հետապնդել Կիպրոսի պաշտպանության վերջնական նպատակ: Ամեն դեպքում, այս երկու նավի համար նախատեսված անձնակազմերը և զինվորականներն ընկել են ջենովացիների ձեռքը «Կուրզոլայի պատերազմի» ընթացքում, որը նրանց հակադրել էր վենետիկցիներին\* և, այսպիսով, Կիլիկյան Հայաստանին իրենց նպաստը չեն բերել<sup>349</sup>: Ըստ Հեթում Կոռնիկոսցու՝ 1298 թ. կամ 1299 թ. տաճարականների և հիվանդախնամների առաջնորդները Կիլիկյան Հայաստանում էին<sup>350</sup> և 1299 թ. դեկտեմբերի 24-ին երկու միաբանությունը հայոց թագավոր Հեթում II-ի և մոնղոլ խան Ղազանի կողքին էին՝ Հոմսի հաղթանակի ժամանակ<sup>351</sup>:

Հետադարձ հայացք նետելուց հետո, կարելի է հավաստել, որ ծովային ռազմարշավները, որոնց նպատակակետը Կիլիկյան Հայաստանն էր կամ այնտեղ նավահանգիստ մուտք գործելը՝ այս թագավորությանն օգնություն ցուցաբերելու համար, միշտ մնացել են միայն ծրագրային փուլում: Ըստ Պապի պահանջի՝ 1309 թ. հիվանդախնամների առաջնորդ Ֆուլք դը Վիլլարեի գլխավորած “*passagium particulare*”-ն\*\*, որը ներգրավել է նաև տաճարականներին և տևոնականներին, պետք է ավարտվեր Հռոդոսի և Ռոմանիայի բազմաթիվ կղզիների գրավմամբ, բայց նաև կազմակերպել Կիպրոսի և Կիլիկյան Հայաստանի պաշտպանությունը՝ մամլուք սուլթանի հարձակումներին դիմակայելու նպատակով<sup>352</sup>: Այս “*passagium*”-ը թույլատրել է հիվանդախնամներին

---

\* Նկատի ունի 1298 թ. սեպտեմբերի 8-ին Ադրիատիկ ծովում գտնվող Կուրզոլա կղզու մոտ Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների միջև տեղի ունեցած ծովային ճակատամարտը, որն ավարտվել է վենետիկցիների պարտությամբ և վերահաստատել հավասարակշռությունը դրանց միջև: – Ծ. թ.:

<sup>349</sup> A. Demurger, Jacques de Molay, p. 113-115.

<sup>350</sup> Haython de Korykos, նշվ. աշխ., էջ 330. Հղել է Ա. Դեմուրժեն. A. Demurger, նշվ. աշխ., էջ 116, 141:

<sup>351</sup> A. Demurger, նշվ. աշխ., էջ 141:

\*\* Խոսքը վերաբերում է փոքրածավալ խաչակրաց արշավանքի – Ծ. թ.:

<sup>352</sup> Regestum Clementis Papae V ex Vaticani Archetypis sanctissimi domini nostri Leonis XIII Pontificis Maximi, iussu et munificentia nunc primum editum cura et studia monachorum Ordinis S. Benedicti, anno MDCCCLXXXV, t. II-III, Roma, 1885, p. 154-158, N 2988; p. 234-236, N 3219; Amadi, նշվ. աշխ., էջ 298-299; Florio Bustron, նշվ. աշխ., էջ 175-176: Հմմտ. ժակ II դ'Արագոնի՝ 1309 թ. մարտի 17-ի թվակիր նամակը. H. Finke, Acta Aragonensia. Quellen zur deutschen, italienischen, französischen, spanischen, zur Kirchen und Kulturgeschichte aus der

1310 թ. օգոստոսի 15-ին գրավել Յոնոս քաղաքը և տիրանալ Դոդեկանեսի բազմաթիվ կղզիների, սակայն ակնկալվող օգնությունը Կիլիկյան Յայաստանին չի տրամադրվել:

Այդուհանդերձ, 1324 թ. հոկտեմբերի 25-ի բուլլայով Ջիովաննի ԻԲ պապը նախազգուշացնում է Բենևենտի ավագ սարկավագ Ջերալդ դը Վիտրինին, որին հանձնարարված էր հավաքել տասանորդը Կիպրոսի թագավորությունում, որ դրանից ազատում է Մորիս դը Պանյակին, այն ծախսերի պատճառով, որոնց հանգեցրել է Կիլիկյան Յայաստանի պաշտպանությունը<sup>353</sup>: Ասպետների և զինվորականների ընդունումը զինծառայության, ինչպես նաև նավերով նրանց տեղափոխումը Կիլիկիա՝ բավական միջոցներ էր կլանում և Կիլիկյան Յայաստանի կոմանդորին ծանրաբեռնում հավելյալ ծախսերով: Կիլիկյան Յայաստանի թագավոր Լևոն IV-ին՝ Ժակ II դ'Արագոնի հղած՝ 1326 թ. սեպտեմբերի 1-ի թվակիր նամակը, որը սխալ ձևով է հղված Ֆինկի գրքում<sup>354</sup> և որի իմաստն ուղղել է Անտոնի Լուտտրելը<sup>355</sup>, նրան տեղեկացնում է, որ հիվանդախնամների առաջնորդը ծրագրում է գլխավորել ազնվականների ռազմարշավ Կիլիկիայի ուղղությամբ: 1336 թ. Բենուա ԺԲ պապը Կիլիկյան Յայաստանին զորավիճ լինելու համար բավարարվում է բազմաթիվ գահակալներին հղած կոչով, որոնց թվում էին Սիցիլիայի և Ֆրանսիայի թագավորները, որպեսզի այդ երկրին նրանք հացահատիկ տրամադրեին և հորդորեին Սիցիլիայի կղզիների, Կիպրոսի, Յոնոսի, Նեգրոպոնի և այլ տարածքների քրիստոնյաներին մանլուքների դեմ մարտնչելու համար գնալ Կիլիկյան Յայաստան՝ մեղքերի կատարյալ թողության դիմաց<sup>356</sup>: Թեպետ այս բուլլան հետաքրքրում է Յոնոսի բնակիչներին, հիվանդախնամներին այն չի վերաբերվում: Բացի դրանից, վերջիններս ծրագրել էին նույն տարում իրականացնել ռազմական մի ներխուժում, սակայն, թվում է, թե ֆինանսական պատճառներ

---

diplomatischen Korrespondenz Jaymes II (1291-1327), Bd. III, Berlin, Leipzig, 1922, S. 197-200, N 91:

<sup>353</sup> **Jean XXII** (1316-1334), *Lettres communes analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican*, t. V, Paris, 1909, p. 245-246, N 20907.

<sup>354</sup> **H. Finke**, *Ազգ. աշխ.*, հ. II, էջ 741-743, թիվ 459:

<sup>355</sup> **A. T. Luttrell**, *Ազգ. աշխ.*, էջ 127-128:

<sup>356</sup> **Benoît XII** (1334-1342), *Lettres closes, patentes et curiales se rapportant à la France*, *Georges Daumet*, éd., Paris, 1920, cols. 101, N 151; cols. 101-102, N 152; cols. 102-103, N 155; cols. 115-117, N 175; cols. 117-118, N 176; *Առկնի* *Lettres communes, publiées ou analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican*, *J.-M. Vidal*, éd., t. I, Paris, 1903, p. 366, N 3970-3971: Տե՛ս նաև **A. T. Luttrell**, *Ազգ. աշխ.*, էջ 128:

րով Պապն այն չեղյալ էր հայտարարել<sup>357</sup>:

Կղեմես Զ պապը քաջալերել է Կիլիկյան Հայաստանին օգնելու նպատակ հետապնդող՝ 1346 թ. և 1347 թ. գործողությունները, որոնք ղեկավարում էին, ի դեպ, հիվանդախնամների առաջնորդ Դիոդեմնե դը Գոզոնը և Կիպրոսի թագավոր Հուզոնը, զուգահեռաբար հրապարակելով բուլլաների մի շարք՝ կաթոլիկ հավատքը Կիլիկիայում տարածելու նպատակով: Վերջին առաքելությունն իրականացնելու համար նա ընտրել է երկու բանագնացի՝ Գաետի եպիսկոպոս Անտուանին և Կորոնից ընտրված Ջիովաննիին<sup>358</sup>: Կղեմես Զ-ի կողմից նրանք ստացել են նաև Հայոց եկեղեցու, և իհարկե, դրա «սխալների» մասին՝ իրեն զեկուցագիր ներկայացնելուն վերաբերող հանձնարարություն<sup>359</sup>: 1351 թ. սեպտեմբերի 24-ին Կղեմես Զ-ն Դիոդեմնե դը Գոզոնին, Կիպրոսի թագավորին և Ջնյուռնիայի առաջնորդին դրդել է մարտնչել անհավատների դեմ Կիլիկյան Հայաստանում: Թվում է, թե այս միջնորդությունը ևս չի հանգեցրել շոշափելի արդյունքների<sup>360</sup>:

1360 թ. Կիլիկիայում Կոռնիկոս նավահանգստի բնակիչներն իրենց անգոր զգալով մամլուքների սպառնալիքի առջև, քաղաքը հանձնել են Կիպրոսի գահակալ Պետրոս I-ին՝ նրա հովանավորության դիմաց<sup>361</sup>: Վերջին ռազմածովային միջամտությունները Կիլիկիայում հիվանդախնամներն իրականացրել են այս նույն թագավորի հետ կողք-կողքի: Այսպես, հիվանդախնամների չորս թիանավ, ի շարքս հարյուր վեց առագաստանավի, ներգրավվել են մի ռազմարշավում, որը լատիններից

---

<sup>357</sup> A. T. Luttrell, նշվ. աշխ., էջ 128-129: Հեղինակն ավելացնում է, որ հիվանդախնամները և Բենուա ԺԲ-ն ունեին միևնույն բանկիրները, ինչը կարող է բացատրել Պապի անվճռականությունը:

<sup>358</sup> Իրեն վերաբերող բոլոր բուլլաներում Ջիովաննին անվանվում է Կորոնի «electus»: Այս տերմինը վերաբերում է նրանց, ովքեր Պապի կողմից հենց նոր նշանակվել էին եպիսկոպոսներ կամ ընտրվել էին այդ պաշտոնում կապիտուլի կողմից՝ առանց պաշտոնապես իրենց թեմի ղեկավարությունը ստանձնելու: Պատահում էր, որ ծխական որոշ եպիսկոպոսների համար այս կարգավիճակը ոչնչի չէր հանգեցնում: Սենք շնորհակալություն ենք հայտնում պրոֆեսոր Դանիել Լո Բլենկին, որը մեզ համար սիրալիրաբար պարզաբանումներ է կատարել:

<sup>359</sup> Clément VI (1342-1352), Lettres closes, patentes et curiales intéressant les pays autres que la France publiées ou analysées d'après les registres du Vatican, E. Déprez et G. Mollat, éd., t. I, 1<sup>er</sup> fasc., Paris, 1960, p. 149, N 1177-1178; p. 151, N 1191; p. 151-152, N 1199; p. 152, N 1200-1201; p. 193, N 1488; p. 193-194, N 1490; p. 194, N 1491-1492; p. 194-195, N 1493; p. 195, N 1495.

<sup>360</sup> Clément VI (1342-1352), Lettres closes, patentes et curiales intéressant les pays autres que la France publiées ou analysées d'après les registres du Vatican, E. Déprez et G. Mollat, éd., t. I, 2<sup>ème</sup> fasc., Paris, 1961, p. 351-352, N 2502; p. 352, N 2503, N 2504; A. T. Luttrell, նշվ. աշխ., էջ 130:

<sup>361</sup> Leontios Makhairas, Recital Concerning the Sweet Land of Cyprus Entitled "Chronicle", Richard M. Dawkins, éd. et trad. anglaise, t. 1, Oxford, 1932, § 132-135, 137-144, 150-152.

թույլատրել է 1361 թ. օգոստոսին գրավել Ադալիան՝ Փոքր Ասիայի հարավային ափին<sup>362</sup>, իսկ 1367 թ. միաբանության չորս թիանավ՝ կիպրական քսանութ թիանավի հետ, կրկին մարտի մեջ են մտել՝ Ադալիայի կայազորի ապստամբությունը ճնշելու և հայկական նավահանգիստ Կոռիկոսի վրա թուրքական հարձակումներ ետ մղելու համար: Պետրոս I-ի ղեկավարած նավատորմի ղեկավարներն է գործել՝ այդ ժամանակաշրջանում մամլուքներին պատկանող Տրիպոլիի, ինչպես նաև Այասի վրա<sup>363</sup>: Այնուհետև՝ Կիլիկիային օգնություն ցուցաբերելու համար Պապերը հիվանդախնամներին դիմել են բազմաթիվ կոչերով: 1369 թ. ապրիլի 7-ին Ուրբանոս Ե-ն նրանցից պահանջում է օգնել Ադալիային<sup>364</sup>: 1369 թ. օգոստոսի 3-ին նույն Պապը պահանջում է հիվանդախնամների առաջնորդ Ռայմոնդ Բերանժեից օգնության հասնել հայերին<sup>365</sup>: Իսկ 1372 թ. հունվարի 17-ին և 22-ին Գրիգոր ԺԱ-ն Արևելքի քրիստոնյա գահակալներին, իտալական քաղաքների ղեկավարներին և հիվանդախնամներին է ներկայացնում Կիլիկյան Հայաստանի ճգնաժամային կացությունը և համառորեն հայցում նրանց միջամտությունը<sup>366</sup>: Այդուհանդերձ, ջենովացիների և կիպրացիների միջև տարաձայնությունները խանգարել են հայկական թագավորությանն օգնության հասնելու նպատակով նավատորմի կենտրոնացմանը, որը 1375 թ. ապրիլին վերջնականապես դադարել է գոյություն ունենալ՝ մամլուքների կողմից Լևոն V թագավորի գերեվարության հետևանքով:

Ծովը թույլատրել է հոգևորասպետական միաբանությունների և Կիլիկյան Հայաստանի միջև կապը դարձնել հարատև, մասնավորապես Լատինական Արևելքին վիճակված ամենաճգնաժամային ժամանակաշրջանում (XII դարի վերջ-XIV դար): Եղբայրների համար Կիլիկիան եզերող ծովը միաժամանակ՝ հիմնականում անուղղակի եկամուտների աղբյուր էր (նավերը վարձելու և ապրանքներից հարկեր գանձելու մի-

<sup>362</sup> Amadi, նշվ. աշխ., էջ 411; Florio Bustron, նշվ. աշխ., էջ 259:

<sup>363</sup> Amadi, նշվ. աշխ., էջ 416-417; Florio Bustron, նշվ. աշխ., էջ 264; G. Hill, A History of Cyprus, t. II: The Frankish Period, 1192-1432, Cambridge, 1948, p. 353-357; P. Edbury, The Crusading Policy of Peter I of Cyprus, 1359-1369.– P. M. Holt, dir., The Eastern Mediterranean Lands in the Periods of the Crusades, Warminster, 1977, p. 98 (rééd. P. Edbury, Kingdoms of the Crusaders, From Jerusalem to Cyprus, Ashgate Variorum, Aldershot, 1999, XII).

<sup>364</sup> Lettres secrètes et curiales du pape Urbain V (1362-1370), se rapportant à la France extraites des registres d'Avignon et du Vatican, P. Lecacheux et G. Mollat, éd., 4 fasc. en 1 vol., Paris, 3<sup>ème</sup> série, 1902-1955, p. 509, N 2934.

<sup>365</sup> Նույն տեղում, էջ 315-316, թիվ 2980:

<sup>366</sup> Lettres secrètes et curiales du pape Grégoire XI (1370-1378), intéressant les pays autres que la France, publiées ou analysées d'après les registres du Vatican, G. Mollat, éd., 1<sup>er</sup> fasc., Bibliothèque des écoles françaises d'Athènes et de Rome, 1962, p. 72-73 N 512; p. 73, N 516-519.



ջոցով), և անշրջանցելի բնական միջավայր՝ հայկական թագավորությունում իրենց առաքելությունը տարբեր մակարդակներով իրականացնելու համար: Ծովային նավարկությունը, բացի միայն առևտրական նպատակներից, ինչը նկատելի էր իտալական հանրապետությունների հետ միաբանությունների պահպանած փոխհարաբերություններում, թույլատրում էր նաև կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ ունենալ եկեղեցական կամ աշխարհիկ տերությունների (որոնք հաճախ միաբանություններին դրդում էին միջամտել) և Կիլիկյան Հայաստանի թագավորի միջև: Սակայն, այն, ինչը տեսականորեն՝ միաբանությունների, իսկ գործնականում՝ հայկական իշխանությունների համար ամենից կարևորն էր՝ քրիստոնեական տարածքների պաշտպանությունն էր մահմեդականների, մասնավորապես մանլուքների առաջխաղացմանը դեմ հանդիման: Բոլորի կարծիքով առաջնային այս նպատակը ծովը դարձրել է անհրաժեշտ՝ “passagii”-ի ծրագրերի հստակեցման և հոգևորասպետական միաբանությունների ավելի կանոնավոր միջամտությունների համար, որոնք տեղի էին ունենում Պապերի՝ Կիլիկյան Հայաստանին օգնության հասնելու կոչերի արդյունքում: Թեպետ հիվանդախնամները դեպի Կիլիկիա ռազմարշավներ ձեռնարկել են պարբերաբար և միշտ չէ, որ Պապի կոչերին արձագանքել են դրականորեն, այդուհանդերձ, նրանք եղել են եզակիների թվում, ովքեր նախապատրաստել են ռազմական գործողություններ, որոնց նպատակակետը Կիլիկյան Հայաստանն էր և որոնց իրականացումը հաջողությամբ ավարտին հասցնելու հարցում նրանց երբեմն խոչընդոտել է անձամբ Պապը:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

### Ա

- Աբունա Ա. – 43  
ալ-Աշրաֆ Խալիլ, մամլուք սուլթան – 50, 63, 70  
Ալբեր դ'Ալեման, հիվանդախնամների կոմանդոր – 97  
Ալբեր դը Վերսո, Երուսաղեմի պատրիարքի նվիրակ – 85  
Ալեքսիոս III Անգելոս, Բյուզանդիայի կայսր – 25  
ալ-Մանսուր Կալաուն, մամլուք սուլթան – 50, 61  
Ալիշան Ղ. – 28, 32, 83-84, 95  
Ալիս, իշխանուհի – 14-15  
Ամադի – 98  
Ամորի Լուսինյան – 13, 22-24, 42, 49, 80, 96-97  
Ամորի դը Տյուրոս տե'ս Ամորի Լուսինյան  
Անանուն Եղեսացի, ժամանակագիր – 37, 43, 46, 62  
Անդրե II, Հունգարիայի թագավոր – 49  
Աննո դը Սանգերհաուզեն, տևոնականների առաջնորդ – 33  
Անտիոքոս IV Եպիփանես, Սելևկյան պետության թագավոր – 32, 52  
Անտուան, Գաետի եպիսկոպոս – 102  
Անրի դը Գրիմալդի – 91, 93  
Ատան – 39  
Արման դը Պերիգոր, եղբայր – 49

### Բ

- Բայբարս, սուլթան – 86  
Բար Հեբրեոս, ժամանակագիր – 29,

37, 41, 43, 62, 67, 73, 87

- Բար Քորուա, սարկավագ – 58  
Բենուա ժԲ, պապ – 101-102  
Բեռնար, եղբայր – 48  
Բերտրան դը Տեսի, եղբայր – 82  
Բլանկարդ Օ. – 92-93  
Բուաս Թ. Ս. Ռ. – 14-15  
Բոդուին II, Երուսաղեմի թագավոր – 14, 60  
Բոդուին դ'Իբելի – 96  
Բոհեմունդ II, Անտիոքի իշխան – 14  
Բոհեմունդ IV, Անտիոքի իշխան – 12, 15, 28, 40, 62-63, 73, 82, 90  
Բոհեմունդ դը Տրիպոլի տե'ս Բոհեմունդ IV  
Բոնիֆաս դե Կալամանդրակեն, մեծ կոմանդոր – 91  
Բոնիֆաս դը Տիբայ – 91  
Բոռնազյան Ա. – 94  
Բոտիե Ռ.-Ա. – 94

### Գ

- Գարին դը Մոնտեգյու, հիվանդախնամների մեծ մագիստրոս – 47-49, 67, 81, 84, 95  
Գարնիե – 28  
Գի դը Սևերակ, հիվանդախնամների մեծ կոմանդոր – 97-98  
Գիյոմ դը Շարտր, տաճարականների մեծ մագիստրոս – 49  
Գիյոմ Ռայմոնդ – 91  
Գուբեր, եղբայր – 48  
Գրիգոր Աբուլ-Ֆարաջ տե'ս Բար Հեբրեոս  
Գրիգոր Դ Տղա, կաթողիկոս – 39

Գրիգոր Երեց – 14, 44, 53, 59-60, 74, 87  
Գրիգոր Զ Ապիրատ, կաթողիկոս – 24  
Գրիգոր Թ, պապ – 71  
Գրիգոր ԺԱ, պապ – 103  
Գող Վասիլ – 7  
Գևորգ Լամբրոնացի – 50

#### Դ

Դեղեյան Ժ. – 5, 44, 81  
Դելավիլի-լո-Ռու Ժ. – 21  
Դեմուրժե Ա. – 99  
Դեշան Պ. – 14, 82, 87  
Դեսինոնի Կ. – 88  
Դիողեննե դը Գոզոն – 102  
Դյուլորիե Է. – 44  
Դոստուրյան Ա. Է. – 44  
Դուկաս Տարսոնեցի, իշխան – 62

#### Զ

Զապել – 13, 18, 28, 30, 39-40, 42, 47, 52, 57-58, 74, 76, 82, 97-98

#### Է

Էդուարդ I, Անգլիայի թագավոր – 99  
Էդուարդս Ռ. Ու. – 9, 79, 81, 83-84, 86, 87  
Էլ-Իմադ, պատմիչ – 88

#### Թ

Թորոս II Կիլիկեցի, իշխան – 10, 14, 16, 41, 54, 62, 73, 75, 81, 85, 87

#### Ժ

Ժակ II դ'Արագոն – 101  
Ժակ դը Մուլե, տաճարականների մեծ մագիստրոս – 10, 13, 20-23  
Ժակո Պ. – 85-86  
Ժան, հիվանդախնամների մեծ մագիստրոս – 48  
Ժան դը Բրիեն, Երուսաղեմի թագավոր – 49, 65, 67, 71, 82  
Ժան դը Վիլլիեր, հիվանդախնամների առաջնորդ – 99  
Ժիրայր դը Ռիդեֆոր, տաճարական – 59  
Ժիրան Դեդուլյու, եղբայր – 48  
Ժոզեֆ դը Սանսի, եղբայր – 99  
Ժոսսելեն I, Եդեսիայի կոմս – 14  
Ժոսսելեն I, կոմս – 75

#### Ի

Իբն ալ-Ֆուրատ, ժամանակագիր – 82  
Իզաբել տե'ս Ջապել  
Իննոկենտիոս Գ, պապ – 17, 24, 27-29, 47-48, 63, 65, 71, 81, 85

#### Լ

Լևոն I Մեծագործ Ռուբինյան – 5-7, 11-12, 16-18, 24-29, 31-32, 34, 36-37, 39-40, 46-48, 51-52, 63, 65, 67, 71, 73, 76, 81-90, 95

Լևոն II, իշխան տե'ս Լևոն I Մեծագործ  
Լևոն II Չեթունյան – 48  
Լևոն III Չեթունյան – 13, 18, 20, 48  
Լևոն IV Չեթունյան – 19, 84, 101  
Լևոն V Լուսինյան – 16, 19, 103  
Լանգլուա Վ. – 28-30

Լեոպոլդ VI, Ավստրիայի դուքս – 49  
Լիտտոլդ, եղբայր – 47  
Լո Բլեկ Դ. – 102  
Լոուրենս Ա. Ու. – 14-15  
Լուկ դը Գրիմալդի – 91  
Լուկ դը Ռեշո – 92  
Լուտտրել Ա. – 101

#### Կ

Կալաուն տե՛ս ալ-Մանսուր Կալաուն  
Կահան Կ. – 82, 87  
Կամել, Եգիպտոսի սուլթան – 70  
Կանտորովից Ե. – 71  
Կելեստինոս Գ, պապ – 24, 26  
Կեղծ Սմբատ տե՛ս Սմբատ սպարապետ  
Կիրակոս Գանձակեցի – 40, 42  
Կղեմես Դ, պապ – 18  
Կղեմես Ե, պապ – 13, 19-22  
Կղեմես Ջ, պապ – 102  
Կոլեն Կ. – 4  
Կոնրադ, Մայնցի արքեպիսկոպոս – 24, 26, 36-37  
Կոստանդին Ա Բարձրբերդցի, կաթողիկոս – 50  
Կոստանդին I, Լամբրոնի իշխան – 32  
Կոստանդին II – 19  
Կոստանդին դը Պապեռոն, խնամակալ – 18, 28-29, 39-40, 42, 74, 82  
Կոստանդին Սարվանդիքար, մեծ սենյոր – 32, 48  
Կոստանս – 14-15

#### Ղ

Ղալֆթեր Պ. – 26, 28  
Ղակոբ Ա Կլայեցի, կաթողիկոս – 50  
Ղակոբյան Վ. – 11  
Ղայթոն տե՛ս Ղեթուն Կոռնիկոսցի

Ղայնրիխ VI Յոհեննշտաուֆեն, Սրբազան Յոհանեսյան կայսրության կայսր – 24, 26, 37  
Ղարուն ալ-Ռաշիդ, Աբբասյան խալիֆ – 30  
Ղեթուն I – 18, 28-30, 32, 34, 36, 40, 42, 47-49, 52, 57-58, 63, 76, 82  
Ղեթուն II – 13, 19, 48, 67, 72, 100  
Ղեթուն III, Լամբրոնի իշխան – 33  
Ղեթուն Կոռնիկոսցի – 11, 13, 20-23, 25, 49-50, 61-62, 64, 67, 72, 101  
Ղեթունյաններ, հարստություն – 18, 47-48  
Ղելենկենպեր Յ. – 79, 81, 83-85  
Ղեմրի II, Կիպրոսի թագավոր – 13, 80, 96-98  
Ղերման դը Սալզա, մեծ մագիստրոս – 27, 46  
Ղիլդ Ֆ. – 84-85  
Ղիսուս Քրիստոս – 52, 54-55, 57, 59-60, 63, 74, 78  
Ղովհաննես II Կոմնենոս, Բյուզանդիայի կայսր – 15-16  
Ղովհաննես Երզնկացի – 50, 63, 70  
Ղովհաննես Ջ Սսեցի, կաթողիկոս – 48  
Ղովհաննես, ավետարանիչ – 53  
Ղովհաննես, գրիչ – 40  
Ղովման – 86  
Ղուգու, Կիպրոսի թագավոր – 102  
Ղուդա Մակաբայեցի – 32  
Ղուսիկ, գրիչ – 55-56, 75

#### Ղ

Ղազան, խան – 49, 61  
Ղիչաղ Թողթայ, խան – 93

#### Ս

**Ո**

Մաթևոսյան Ա. – 40, 44  
Մանուել I Կոմնենոս, Բյուզանդիայի  
կայսր – 41, 73, 75  
Մաս Լատրի դը Ա. Լ.– 98  
Մատաթիա, հայր – 32

**Պ**

Մատթեոս Եղեսացի տե՛ս Մատթեոս  
Ուռհայեցի  
Մատթեոս Ուռհայեցի – 14, 43  
Մատթեոս Փարիզեցի – 70  
Մատթեոս, ավետարանիչ – 53  
Մելիք-Օհանջանյան – 40  
Միխայել Ասորի, ժամանակագիր – 9,  
37, 41, 43, 45, 54-60, 64, 66, 75,  
77, 87  
Մլեհ, իշխան – 10-11, 33  
Մխիթար Տաշրացի – 50  
Մխիթարյան Վ. – 8  
Մուլեն Կ. – 83  
Մորիս դը Պանյակ – 101

Պարի – 99  
Պեպոն Սալոն – 91-92  
Պետրոս I, Կիպրոսի թագավոր – 102-  
103  
Պերսևալ դը Ջուիզուլֆո – 92  
Պողարեան Ն. – 69  
Պողոս, առաքյալ – 70  
Պողոսյան Վ. – 8  
Պոն դը Տրիպոլի տե՛ս Բոհենունդ IV

**Ն**

Ներսես Լամբրոնացի – 26, 28, 69-70  
Ներսես Շնորհալի – 69-70  
Ներսես Պալիենցի – 94  
Նիկոլա, ասպետ – 59  
Նիկոլա Լորզն – 99  
Նիկոլա Ֆալկոն – 20  
Նիկողայոս Դ, պապ – 13, 99-100  
Նուվո դ'Արժան – 97  
Նուր Էդ-Դին, Չալեպի ամիրա – 41, 62

**Ջ**

Ջերալդ դը Վիտրին, ավագ սարկա-  
վագ – 101  
Ջիակոմո Բոսիո – 88  
Ջիովաննի – 102  
Ջիովաննի ԻԲ, պապ – 84, 94, 101  
Ջուզուլֆան դը Ջուիզուլֆո – 92

**Շ**

Շաբո ժ. – 43  
Շորելկե Ե. – 27, 30, 47  
Շևալիե Մ.-Ա. – 5-8

**Ռ**

Ռալֆ դը Դոմֆրոն, պատրիարք – 15  
Ռայմոնդ Բերանժե, հիվանդախնամ-  
ների առաջնորդ – 103  
Ռայմոնդ դե Պիիս, պապի բանագնաց  
– 97-98  
Ռայմոնդ դը Պուատիե, իշխան – 15-  
16, 81  
Ռայմոնդ-Ռուբեն – 17, 27, 31, 34, 46-  
47, 52, 56-58, 63, 65, 73, 89-90  
Ռենո դը Շատիյոն, Անտիոքի իշխան –  
73, 81, 85, 87  
Ռենո դը Սանսոն, նավատորմի

հրամանատար – 98  
Ռենո, իշխան – 62  
Ռիթա, Լևոն I-ի դուստր – 65, 67, 82, 84  
Ռիլեյ-Սմիթ Ջ. – 34, 83, 85, 95  
Ռոբեր դը Սոնգեսար – 98  
Ռոժե դը Տոդինիս, նավապետ – 99  
Ռուբինյան, իշխանություն – 6  
Ռուբինյան, հարստություն – 36

## Ս

Սալահ Էդ-Ղին, Այյուբյան սուլթան – 24, 39, 41, 44, 59, 62, 71-73, 88  
Սամուել Անեցի – 51, 70  
Սարգիս – 40  
Սիրիլ, թագուհի – 42  
Սիրտ իբն ալ-Ջավադի, ժամանակագիր – 71  
Սիմոն դը Սոնտուլիֆ – 97  
Սմբատ, Կիլիկիայի թագավոր – 13, 19  
Սմբատ, սպարապետ – 12, 36, 44-45, 48, 54, 59, 61, 73, 82  
Սողոմոն – 66  
Ստեփանե, Թորոս II-ի եղբայր – 10, 14, 16, 54  
Ստեփանոս Օրբելյան – 50

## Վ

Վալիս Բրուջ Ե.-Ա. – 43  
Վաներյան Մ. – 69  
Վասիլ, ջանցեր – 44  
Վիլբրանդ Օլդենբուրգցի, Հիլդեսհայմի կանոնիկոս – 26-27, 30, 83-84, 88

## Տ

Տամպլին դը Տյուրոս – 99

Տարսնի արքեպիսկոպոս տե՛ս Ներսես Լամբրոնացի  
Տիբո Գողեն, տաճարականների մագիստրոս – 13, 99  
Տյուրոսի սենյոր տե՛ս Ամորի Լուսինյան  
Տյուրոսի տիկին տե՛ս Ջապել  
Տրիպոլիի կոմս տե՛ս Բոհեմունդ IV

## ՌԻ

Ռրբանոս Ե, պապ – 103

## Օ

Օշին, Կիլիկիայի թագավոր – 19, 96-97  
Օշին, իշխան – 49  
Օտտոն IV Հոհենշտաուֆեն, Սրբազան Հռոմեական կայսրության կայսր – 26

## Ֆ

Ֆավրո Մ.-Լ. – 24  
Ֆիլիպ IV Գեղեցիկ, Ֆրանսիայի թագավոր – 13, 23  
Ֆիլիպ, Բոհեմունդ IV իշխանի որդի – 28, 40  
Ֆիլիպ, Հենրի II քեռի – 96  
Ֆինկ Հ. – 101  
Ֆորշթոյթեր Կ. – 30  
Ֆրիդրիխ I Շիկամորուս Հոհենշտաուֆեն, Սրբազան Հռոմեական կայսրության կայսր – 26  
Ֆրիդրիխ II Հոհենշտաուֆեն, Սրբազան Հռոմեական կայսրության կայսր – 51, 71  
Ֆրիդրիխ III Հոհենշտաուֆեն, Սրբա-

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

զան Դռոնեական կայսրության կայսր – 28	– 14
Ֆուլք դ'Անժու, Երուսաղեմի թագավոր	Ֆուլք դը Վիլլարե, հիվանդախնամների առաջնորդ – 97, 100
<b>Ա</b>	Ասորվոց դրոււնք – 39
Ադալիա – 103	Ասպետների Կրակ, ամրոց – 62, 67
Ադանա – 95	Ավստրիա – 49
Ալեքսանդրետ – 79, 81, 83, 85-88, 96, 98	Ատրպատական – 37
Ալեքսանդրետի դուռ – 87	Արսուզ – 85
Ալեքսանդրետի ծոց – 79, 81, 88, 97	Արևելք – 4-5, 7, 9, 21, 36-39, 43-44, 46, 51, 59-60, 62, 65, 67, 69-70, 79, 99, 103
ալ-Տիմա տե'ս Կանամելլա	Արևմտյան Եվրոպա – 5, 8
ալ-Տիման տե'ս Կանամելլա	Արևմուտք – 15, 43, 70, 79, 94
Ակրա տե'ս Սեն-ժան դ'Ակրա	
Աղեշեմոմ – 33	<b>Բ</b>
Ամանուս – 9, 15-16, 23, 39, 73, 80, 85, 87, 95	Բարսուճա, վանք – 37, 75
Ամանուսի լեռնանցքներ – 33, 85	Բեթզիբելիւն – 14
Ամանուսյան դռներ – 29-31	Բենևենտ – 101
Ամուդա – 26-29, 67, 83, 89	Բերդ – 30
Այաս – 79, 88, 90, 92-95, 97, 103	Բյուզանդիա – 73
Այուն – 27, 29-30, 83, 89	Բոննել – 81, 85-86, 94
Անամուր – 84	Բուշեքուիա տե'ս Բուքուեքիա
Անդրտավրոս – 23	Բուքուեքիա – 30, 89
Անտիոք – 9, 11-12, 14-18, 24, 28-29, 31, 35-37, 39-41, 47-48, 55, 62, 73, 81-82, 86, 89	<b>Գ</b>
Անտիոքետ – 84	Գաետ – 102
Անտիոքի իշխանություն (դքսություն) – 38, 40, 90, 99	Գաստիմ տե'ս Պաղրաս
Ասիա – 20	Գաստոն տե'ս Պաղրաս
Ասկաղոն – 59, 62	Գերմանիա – 5
Ասորիք – 9, 21-22, 41	Գյուենեշ – 30
	Գյուենոշ տե'ս Գյուենեշ

Գյուլսիհան – 85  
Գյոքվելի-օղլու Քալեսի – 84  
Գոսքուին – 30  
Գունբեթֆորթ – 27, 29-30, 83-84, 89  
Գուստեգենաշ տե՛ս Կոստիոնս

Իսոս – 83  
Իսրայել – 31, 52  
Իտալիա – 66

## L

## Դ

Դաբենիմ տե՛ս Դավենիմ  
Դամասկոս – 41, 46, 62  
Դաշտային Կիլիկիա – 96  
Դավենիմ – 30  
Դարպասակ – 86-88  
Դոդեկանեզ – 101  
Դրանք – 30

Լա Ռոշ Գիյոն, բերդամրոց – 9, 12, 86  
Լա Ռոշ Ռուսսել, բերդամրոց – 67, 86-87  
Լազան տե՛ս Պազան  
Լալյան – 30  
Լամբրոն, ամրոց – 33  
Լատինական Արևելք – 12, 23, 103  
Լարանդա – 89  
Լուլիան տե՛ս Լալյան

## Ե

Եգիպտոս – 21, 49, 51, 70  
Եղեսիա – 7, 14, 37  
Եղեսիայի կոմսություն – 16, 36, 38, 45  
Երուսաղեմ – 10, 14-15, 24, 26, 33, 36, 39, 41-42, 45, 47-48, 52, 55, 57-58, 63-65, 70, 82, 85  
Երուսաղեմի թագավորություն – 7, 12-13, 48, 50

## Զ

Զմյուռնիա – 102

## Թ

Թավրիզ – 93

## Ի

Իսկենդերուն տե՛ս Ալեքսանդրետ  
Իսկենդերունահ տե՛ս Ալեքսանդրետ

## Կ

Կալիկադոնոս – 81  
Կամարդիաս – 81-82, 89  
Կամթեքի տե՛ս Կենշեքիս  
Կանամելլա – 82-83, 95  
Կենշեքիս – 30  
Կեսարիա – 48  
Կիլիկիա – 5-17, 19-33, 35-39, 41, 65, 80, 91, 94, 96-97, 101-104  
Կիլիկյան Հայաստան – 6, 16, 18-20, 21-23, 25-27, 29, 31, 33-34, 36, 38, 46-49, 52, 63, 65, 73, 79-82, 86, 88, 90-91, 93-94, 96-104  
Կիպրոս – 17, 19-20, 21-24, 40, 42, 50, 70, 80, 95-102  
Կոռիկոս – 20, 102-103  
Կոստանդնուպոլիս – 20  
Կոստիոնս – 30  
Կոսքուին տե՛ս Գոսքուին  
Կորոն – 102  
Կուրզուլա – 100



**Հ**

Հաթին – 44, 59, 61-62, 72-73  
 Հալեպ – 41, 95  
 Հաղար Սուզլան – 87  
 Հայաստան – 8, 42  
 Հայֆա – 48, 93-94  
 Հաշուդագ տե՛ս Հաշուդագր  
 Հաշուդագր – 30  
 Հարավային Իտալիա – 24  
 Հարիմ – 62  
 Հարունիե – 29-32, 47  
 Հիլդեսհայմ – 26, 83  
 Հյուսիսային Ասորիք – 86, 99  
 Հոմս – 100  
 Հովիտ, աբբայություն – 30  
 Հովնանի Մույթ տե՛ս Պորտեղլա  
 Հոռոս – 96, 100-101  
 Հոռմ – 7, 66  
 Հոսոս – 85  
 Հունգարիա – 49

**Ճ**

Ճկեր – 67, 82, 89

**Ս**

Սալաթիա – 37  
 Սալլոս – 83-84, 97  
 Սալոն տե՛ս Մալլոս  
 Սամեստիա – 83-84, 95  
 Սայնց – 24-25, 26, 36-37  
 Սարաշ – 30  
 Սելոն տե՛ս Մալլոս  
 Սելուն տե՛ս Մալլոս

Սերկեզ – 86  
 Սերձավոր Արևելք – 6, 50, 65, 100  
 Սիջագետք – 37  
 Սիջերկրական ծով – 80, 86, 95  
 Սոնպելիե – 5  
 Սոնֆոր – 48, 62, 67  
 Սոտրիգու – 30  
 Սուտրիգու տե՛ս Մոտրիգու

**Յ**

Յաֆֆա տե՛ս Հայֆա  
 Յունուրթալիք – 79

**Լ**

Լեգրոպոն – 101  
 Լուի – 91  
 Լորբերդ – 81, 89

**Չ**

Չալան, բերդամրոց – 80, 87  
 Չաշորիմ տե՛ս Չաշորիմ  
 Չաշորիմ – 30  
 Չերրարե – 30

**Պ**

Պագան – 98  
 Պաղեստին – 66  
 Պաղրաս, բերդամրոց – 10-11, 14-16, 18, 27, 30, 33-34, 39, 41, 47, 55-54, 62, 65, 67, 71, 82, 86-88  
 Պայաս – 83, 86  
 Պարսկաստան – 49, 93  
 Պելերին, դոյակ – 48, 67  
 Պոր դը Կոլոն – 85  
 Պորտեղլա – 86-87, 95-96

Պորտո Վեներե – 91  
Պուատիե – 20

**Ջ**

Ջեյհան – 29  
Ջենովա – 79, 91-92, 100

**Ռ**

Ռոմանիա – 100

**Ս**

Սաարգագու – 30  
Սարա տե՛ս Պաղրաս  
Սարի Սեկի, բերդամրոց – 80, 86, 95  
Սարվանդիքար, ամրոց – 31-32, 48  
Սելեուս, ամրոց – 27  
Սելփին տե՛ս Սեսփին  
Սելևկիա – 26, 40, 42, 46, 65, 67, 81-82, 84, 89  
Սեն-ժան դ՛Ակրա – 24-25, 50, 61-65, 70-71, 93, 99  
Սենտ-Էտիեն – 5  
Սեշին – 84  
Սեսփին – 30, 89  
Սիեոերագ տե՛ս Սև Ավերակ  
Սիմեոն, վանք – 62  
Սիս – 28-30, 44, 46  
Սիցիլիա – 24, 71, 101  
Սկևա, վանք – 69  
Սյունիք – 50  
Սոգր, արքայություն – 30  
Սուրբ երկիր – 3, 20, 21, 23, 42, 61, 71, 85, 99  
Սուրբ Դանիել – 30  
Սուրբ Թորոս – 30

Սուրբ Հովհաննես, միաբանություն – 33, 36, 42, 45-46, 52, 58, 63

Սուրբ Ղազար, միաբանություն – 37

Սուրբ Մամաս, արքայություն – 30

Սուրբ Մարի, միաբանություն – 25, 27, 29, 31, 33-35, 45-46, 48, 52-53, 57, 63, 76, 90

Սև Աշտարակ – 33

Սև Ավերակ – 30

**Վ**

Վանգուն – 84

Վաներ – 84, 89

Վաներիում տե՛ս Վաներ

Վենետիկ – 79, 100

**Տ**

Տարսուն – 26, 28, 69, 83, 95

Տելազր – 30

Տելագու տե՛ս Տելազր

Տրիպոլի – 61-63, 99, 103

Տրիպոլիի կոմսություն – 99

**ՌԻ**

Ռլլուքինար – 85

Ռուհա տե՛ս Եղեսիա

**Փ**

Փոքր Ասիա – 9, 103

**Ք**

Քիշլասայ Քյոյ – 85  
Քուխանգ – 30  
Քուլիոգ տե՛ս Քուխանգ

Ֆանագուստա – 97  
Ֆլորենցիա – 95  
Ֆրանսիա – 5, 8, 13, 21, 31, 101

**Ֆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան Բ. Հարությունյան .....	5
Գլուխ I Կիլիկիայում տաճարականների ներկայության որոշ հարցերի շուրջ.....	9
Գլուխ II Լևոն Մեծագործի գերմանական ռազմավարությունը. տնտոնականների Կիլիկիայում հաստատվելու պարագան.....	26
Գլուխ III Հոգևորասպետական միաբանությունների ընկալումն Արևելքի քրիստոնյաների (հայերի և ասորների) կողմից (XII դարի սկզբից մինչև XIV դարի սկիզբը) .....	39
Գլուխ IV Ասպետական միաբանությունները և միջերկրածովյան Կիլիկիան (XII դարի կեսից մինչև XIV դարի վերջը) .....	82
Անձնանուններ .....	108
Տեղանուններ .....	113

## TABLE DES MATIERES

Préface B. Haroutiounyan.....	5
Chapitre I Quelques aspects de la présence des templier en Cilicie .....	9
Chapitre II La stratégie germanique de Léon le Magnifique : le cas de l'installation des teutoniques en Cilicie .....	26
Chapitre III La vision des ordres religieux-militaires par les chrétiens orientaux (Arméniens et Syriaques) au Moyen Age (du début du XII <sup>e</sup> siècle au début du XIV <sup>e</sup> siècle).....	39
Chapitre IV Les ordres militaires et la mer en Arménie Cilicienne (milieu du XII <sup>e</sup> – fin du XIV <sup>e</sup> siècle) .....	82
Index des noms .....	108
Index des lieux.....	113

Մարի-Աննա Շևալիե  
Կիլիկյան Հայաստանի և  
հոգևորասպետական միաբանությունների  
փոխհարաբերությունների պատմությունից  
2-րդ հրատարակություն

Мари-Анна Шевалье  
К истории взаимоотношений  
духовно-рыцарских орденов  
с Киликийской Арменией  
2-е издание

Marie-Anna Chevalier  
Sur l'histoire des relations de  
l'Arménie Cilicienne avec les  
ordres religieux-militaires  
2<sup>ème</sup> édition

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ստորագրված է տպագրության 04.04.2013:  
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: 7.25 տպ. մանուկ:  
Տպաքանակը՝ 200 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊՈ



Հրատարակչություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)